



CONTROL CHAMBER
OF THE REPUBLIC OF ARMENIA
CHAIRMAN

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ
ՆԱԽԱԳԱՀ

КОНТРОЛЬНАЯ ПАЛАТА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ПРЕДСЕДАТЕЛЬ

№ 2/17/16-85

«29» Նոյեմբեր 2013 թ.


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ
պարոն Տ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի և 20-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, Ձեզ եմ տրամադրում Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի խորհրդի կողմից 2013 թվականի մարտի 29-ին հաստատված՝ Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2012 թվականի տարեկան հաշվետվությունը:

Հարգանքով

Ի. ԶԱԲԱՐՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՄԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2013թ. Տարբեր 29 - ի թիվ 7/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿԻՉ ՊԱԼԱՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի գ) կետի պահանջով՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2012 թվականի տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՎԵՐԱՀՄԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ի. ԶԱԽԱՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

1. ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՎԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հաշվետու տարում Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի (այսուհետ՝ Վերահսկիչ պալատ) գործունեությունն իրականացվել է՝ *Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և «Վերահսկիչ պալատի մասին»* Հայաստանի Հանրապետության օրենքին, Վերահսկիչ պալատի 2012 թվականի գործունեության տարեկան ծրագրին (այսուհետ՝ Տարեկան ծրագիր) համապատասխան:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ տարեկան հաշվետվությունը կազմելիս Վերահսկիչ պալատն առաջնորդվել է *Բարձրագույն վերահսկիչ մարմինների միջազգային կազմակերպության* (INTOSAI) սկզբունքներով:

Վերահսկողության արդյունքներն ամփոփվել են Վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվություններում, որոնք «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն Վերահսկիչ պալատի խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից հաստատվելուց հետո՝ տասն օրվա ընթացքում ներկայացվել են ՀՀ Նախագահին, ՀՀ Ազգային ժողով և ՀՀ կառավարություն: Ընթացիկ հաշվետվությունները հաստատվելուց հետո 30 օրվա ընթացքում տեղադրվել են Վերահսկիչ պալատի ինտերնետային էջում՝ բացառությամբ երկու ընթացիկ հաշվետվության, քանի որ դրանք պարունակում են «զաղտնի» տեղեկատվություն և դրանց կարելի է ծանոթանալ ՀՀ Ազգային ժողովում՝ օրենքով սահմանված կարգով:

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, վերահսկվող օբյեկտների ղեկավարները Վերահսկիչ պալատին տրամադրել են տեղեկատվություն ընթացիկ հաշվետվություններում ամրագրված՝ հայտնաբերված խախտումները վերացնելու ուղղությամբ:

Տարեկան ծրագրի կատարման արդյունքների մասին առավել մանրամասն տեղեկությունը տեղադրված է Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2.1. Քաղաքաշինության ոլորտ

Վերահսկողության ընթացքում արձանագրվել են բազմաբնույթ խախտումներ և թերություններ, որոնք ընդհանրական են և նույնությամբ կրկնվում են գրեթե բոլոր օբյեկտներում: Դրանցից առավել հատկանշական են հետևյալ երևույթները՝

- չկատարված աշխատանքների դիմաց վճարում
- անորակ աշխատանքներ
- զմերի արհեստական թանկացումներ
- շինարարական նախագծերը և՛ ձևի, և՛ բովանդակության առումով կազմվում և կատարվում են սահմանված նորմերի պահանջների խախտումներով
- խախտումով կազմված նախագծին տրվում է փորձագիտական դրական եզրակացություն
- նախագծանախահաշվային փաստաթղթերը սահմանված կարգով չեն հաստատվում
- չեն պահպանվում պետական ստանդարտով սահմանված շինարարական գծագրերի մշակման միասնական կանոններն ու նորմերը
- շինարարության ընթացքում նախատեսված բարձրորակ նյութերի և ապրանքների փոխարեն փաստացի օգտագործվում են դրանց ցարժորակ տեսակները
- «ծածկված» աշխատանքների ակտերը կազմվել են թերի, սահմանված կարգի խախտումներով, ամբողջությամբ չեն նկարագրում շինարարական աշխատանքների կատարման տեխնոլոգիական փուլերը
- բացակայում են ավարտված շինարարության շահագործումն ընդունող հանձնաժողովի ակտերը
- անորակ վերանորոգված մի շարք ջրանցքներում շեպերն ունեն երկայնական ճաքեր, որոնք անհրաժեշտ է հրատապ լրացուցիչ կարգով հետազոտել և վերանորոգել
- տեխնիկական և հեղինակային հսկողությունն իրականացվում է թերի կամ որոշ դեպքերում ընդհանրապես սահմանված կարգով չի իրականացվում:

Շինարարության ոլորտում արձանագրված խախտումների և բացթողումների բազմաթիվ օրինակներ ներկայացված են Վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվություններում: Դրանցից, որպես օրինակ կարելի է նշել.

- «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկում ընտրանքային կարգով 8 օբյեկտում իրականացրած 986,090.0 հազ. դրամի հիմնանորոգման աշխատանքների ստուգման արդյունքում *արձանագրվել է 47,158.2 հազ. դրամի անորակ և վերականգնման ենթակա գումարի չափով խախտում:*

- Թալինի մայր ջրանցքի (ՊԿ0+00 ից ՊԿ 102 + 46 հատված) շրջադարձերի որոշ հատվածներում սխալ նախագծային լուծումների հետևանքով ջուրը ջրանցքից դուրս է գալիս և ողողում ջրանցքի սպասարկման գոտին:

- Դատաիրավական ծրագրերի իրականացման գրասենյակի կողմից թվով 6 օբյեկտի կառուցման համար կատարողական ակտերով կապալառուներին վճարել է 3,523,744.7 հազ. դրամ, մինչդեռ նշված աշխատանքների համար ՀՀ կառավարության որոշումներով հաստատված պայմանագրերի արժեքը կազմում էր 3,299,919.9 հազ.

դրամ: Փաստորեն առանց պայմանագրերի փոփոխության կապալառուներին պայմանագրային արժեքներից 223,824.8 հազ. դրամով ավելի է վճարվել:

- ՀՀ կրթության և գիտության նախարարությունում ընտրանքային կարգով ստուգված 4 օբյեկտում՝ 134,045.3 հազ. դրամ ընդհանուր գումարով կատարված հիմնանորոգման աշխատանքներում *հայտնաբերվել է անորակ և վերականգնման ենթակա 8,625.8 հազ. դրամ գումարի չափով խախտում:*

Ընդհանուր առմամբ, շինարարության ոլորտում վերջին 5 տարիներին Վերահսկիչ պալատի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ վերոգրյալ խախտումների հիմնական պատճառներից մեկը, ըստ ամենայնի, քաղաքաշինական փաստաթղթերի մշակման, փորձաքննության, հաստատման և փոփոխման գործընթացներում առկա ռիսկերի բարձր մակարդակն է: Այդ նպատակով, 2013 թվականին Վերահսկիչ պալատը տվյալ ոլորտայնա՝ իրականացնելու է վերահսկողական համալիր միջոցառումներ:

Շինարարության ոլորտում կոռուպցիոն ռիսկերից և ուռճացված գներից խուսափելու նպատակով Վերահսկիչ պալատը հաշվետու տարում նույնպես հետաճիտ է եղել շինարարական նախագծերի նախահաշիվներում կիրառվող տոկոսադրույքների չափերի վերանայմանը: Մասնավորապես.

- ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ՀՀ քաղաքաշինության նախարարությունը և Երևանի ճարտապետության և շինարարության պետական համալսարանը համատեղ կարգով վերանայել են տոկոսադրույքների չափերը, որոնց անաչառության վերաբերյալ Վերահսկիչ պալատը հայտնել է իր անհամաձայնությունը:
- Վերահսկիչ պալատի մասնագետների անմիջական նախաձեռնությամբ և մասնակցությամբ մշակվում են տոկոսադրույքների նոր չափեր:

2.2. Դանապարհաշինարարության ոլորտ

Ոլորտում իրականացված վերահսկողության արդյունքներով նույնպես բացահայտվել են մի շարք բացթողումներ և խախտումներ, որոնք ընդհանրական են, կրում են համակարգային բնույթ: Դանապարհաշինությանն ուղղված աշխատանքների պլանավորման, դրանց իրականացման, հսկողության և որակի կառավարման գործընթացների ուսումնասիրությամբ արձանագրված խնդիրների ամփոփ նկարագիրը մտահոգիչ է, մասնավորապես.

- չունենալով որոշակի աշխատանքների համար լիազոր մարմնի կողմից հաստատված նախահաշվային միավոր արժեքներ, նախահաշիվներում հաճախ կիրառվել են ոչնչով չհիմնավորված, այդ աշխատանքների իրական արժեքները զգալիորեն գերազանցող արժեքներ, ինչը հանգեցրել է նախահաշվային արժեքների էական ավելացման
- նախագծերում օգտագործվող նյութերի ծագումը չնշելու հետևանքով հաշվարկներում կիրառելով հնարավոր ամենաբարձր գները և նախատեսելով շինարարական նորմերով ու կանոններով չնախատեսված աշխատանքներ, էականորեն ավելացվել են նախահաշվային արժեքները
- նախագծվել և իրականացվել են Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվային ակտերով չնախատեսված աշխատանքներ, ինչի արդյունքում հնարավոր չի եղել իրականացնել այդ աշխատանքների նկատմամբ որակի վերահսկողություն

- նախագծերով չեն հիմնավորվել աշխատանքների համար սահմանված երաշխիքային ժամկետները, իսկ նախագծային փոփոխությունները կատարվել են ՀՀ օրենսդրության պահանջների խախտումով
- աշխատանքներն իրականացնելիս օգտագործվել են ԴՕՇ-ով նախատեսվածից ավելի ցածր մարկայի ասֆալտբետոնյա խառնուրդներ և անհայտ ծագման ու որակի բիտում
- իրականացվել են աշխատանքներ առանց անհրաժեշտ լաբորատոր հետազոտությունների, կան նաև իրականացված լաբորատոր հետազոտություններ, որոնց արդյունքներն իրենց հերթին արժանահավատ չեն, բացի այդ աշխատանքներն ընդունելիս չեն իրականացվել նորմերով նախատեսված անհրաժեշտ բոլոր ստուգումները
- ասֆալտբետոնե խառնուրդի պատրաստման ժամանակ, հաշվի չառնելով բնակլիմայական գոտիները և ճանապարհների տեխնիկական կարգերը, համատարած օգտագործվել է նույն կարգի բիտում
- ճանապարհի պահպանման աշխատանքների համար կազմված բյուջետային հայտի հաշվարկները արժանահավատ չեն, բացի այդ ճանապարհի սպասարկման մակարդակների կամայական փոփոխության արդյունքում տեղի են ունեցել աշխատանքների թանկացումներ
- չի հիմնավորվել և չի վերահսկվել գծանշման աշխատանքների համապատասխանությունը գործող ստանդարտներին:

Բացի այդ, ընտրանքային կարգով «Իջևան ՃՇՇ» ՓԲԸ-ում և «Արարատ ճանշին» ՍՊԸ-ում իրականացված ստուգմամբ արձանագրվել է 198,116.0 հազ. դրամ գումարի չափով խախտում, որից.

- «Իջևան ՃՇՇ» ՓԲԸ - վերականգնման ենթակա գումար՝ 95,952 հազ. դրամ և անորակ աշխատանքներ՝ 8,360 հազ. դրամ,
- «Արարատ ճանշին» ՍՊԸ - վերականգնման ենթակա գումար՝ 80,900 հազ. դրամ և անորակ աշխատանքներ՝ 12,904.0 հազ. դրամ:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության, ինչպես նաև նախարարության «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկում իրականացված վերահսկողությամբ արձանագրված խախտումների և թերությունների վերաբերյալ մանրմասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվություններում:

2.3. Գնումների գործընթաց, բյուջետային միջոցների անարդյունավետ օգտագործում

Վերահսկողությամբ դեռևս բացահայտվում են հակամրցակցային, անարդյունավետ, ոչ թափանցիկ, ոչ հրապարակային և խտրական հիմքերով կազմակերպված գնման գործընթացներ:

Վերահսկողության արդյունքների վերլուծությունը ցայց է տալիս, որ գնումների հետ կապված խնդիրների առանցքը կազմված է հետևյալ երկու հիմնական բացասական երևույթներից.

- երկրի կարիքների համար ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների դիմաց պետությունը վճարում է դրանց իրական արժեքից շատ ավելի մեծ գումարներ, այսինքն՝ գումարները պլանավորում են ավելի շատ, քան իրականում պետք է,

- ապրանքների, աշխատանքների և ծառայությունների դիմաց, դրանց իրական արժեքից ավելի մեծ գումարների վճարման դեպքում նույնիսկ պետությունը չի ստանում այն արդյունքը, որն ի սկզբանե ակնկալում էր, այսինքն՝ արդյունքը կամ ընդհանրապես չի լինում, կամ լինում է անորակ կամ մասնակի:

Այսպիսով, խնդիրը գտնվում է գնումների գործընթացի պլանավորման, կազմակերպման, պայմանագրերի կառավարման և հսկողության գրեթե բոլոր փուլերում:

- Հատկապես, ռիսկային է քաղաքաշինության և ճանապարհաշինության, ինչպես նաև խորհրդատվական ծառայությունների նպատակով իրականացվող գնումների գործընթացը:

Հաշվետու տարում Վերահսկիչ պալատը գնումների ոլորտում իրականացված այլ ընտրանքային ստուգումներով նույնպես հայտնաբերվել են բազմաթիվ խախտումներ և ռիսկեր, որոնցից որպես օրինակ կարելի է նշել.

- «Տարեցների շուրջօրյա խնամքի ծառայություններ» և «Երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության ծառայություններ» ծրագրերի շրջանակներում ներգրավված թվով 8 գիշերօթիկ և թվով 4 տուն ինտերնատ հաստատությունների կողմից իրականացված գնումների գործընթացի ընտրանքային ստուգմամբ արձանագրվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի բազմաթիվ և բազմաբնույթ կոպիտ խախտումներ, մասնավորապես հաղթող են չանաչվել մասնակիցներ, որոնք, նույնիսկ, իրավունք չունեին մասնակցելու հայտարարված մրցույթներին:

- Համաշխարհային բանկի կողմից հաստատված գնման պլանով նախատեսված տեղեկատվական տերմինալների տեխնիկական բնութագիրը «Դատաիրավական» ԾԻԳ-ը լրացրել է վճարային համակարգերով, և ձեռք է բերել 80 վճարային տեղեկատվական տերմինալ՝ 369,867.1 հազ. դրամ ընդհանուր արժեքով: Դատական մարմինները, ինչպես նաև ԾԻԳ-ը, իրենց վերապահված լիազորություններով և կանոնադրությամբ վճարահաշվարկային գործառնություններ իրականացնելու իրավասություն չունեն և չեն իրականացնում, դատական համակարգում տեղակայված պետական սեփականություն հանդիսացող այդ տերմինալները օգտագործվում են միայն որպես տեղեկատվական տերմինալ: Ստուգմամբ պարզվել է, որ վճարային համակարգերով հագեցված տերմինալներ գնելու արդյունքում դատական համակարգի կարիքներին անհրաժեշտ յուրաքանչյուր տերմինալի ձեռք բերման համար «Դատաիրավական» ԾԻԳ-ը ծախսել է ստուգման ժամանակաշրջանում շուկայում առկա տեղեկատվական տերմինալների գնից (ներառյալ՝ բոլոր հարկերը և վճարները) առնվազն երկու անգամ ավելի գումար, այսինքն՝ անարդյունավետ ծախսվել է 185,000.0 հազ. դրամ:

- «Դատաիրավական» ԾԻԳ-ը «Դատական գլոբալ ցանցի կազմակերպման տեխնիկատնտեսական հիմնավորում, դատական համակարգում շահագործվող ծրագրային ապահովման միջոցների կարիքների գնահատում, ԴԱՀ ծրագրի ֆունկցիոնալության ընդլայնում» ծրագիր ձեռք բերելու նպատակով 545,0 հազ. եվրոյին համարժեք դրամի չափով պայմանագիր է կնքել «Suprematech Solutions INC» ամերիկյան ընկերության և «Մեյսիս ինֆորմեյշն սիստեմս» ՍՊԸ-ի միջև կազմված կոնսորցիումի հետ: Ստուգմամբ պարզվեց, որ գումարն ամբողջությամբ փոխանցվել է «Suprematech Solutions INC» ամերիկյան ընկերությանը: «Մեյսիս ինֆորմեյշն սիստեմս» ՍՊԸ-ն պայմանագրի շրջանակում գումար չի ստացել, ծախսեր չի կատարել, մինչդեռ կոնսորցիումի կողմից ներկայացված մրցութային առաջական նշված է եղել միայն «Մեյսիս ինֆորմեյշն սիստեմս» ՍՊԸ-ում աշխատող ծրագրավորողների անունները:

Իրավիճակը գնումների համակարգում, առհասարակ, խիստ մտահոգիչ է: Ակնհայտ է, որ խնդիրներն ունեն համակարգային բնույթ:

- Այս ամենի կապակցությամբ, ՀՀ ֆինանսների նախարարությունը, որպես լիազոր պետական մարմին, պաշտոնապես բազմիցս նշել է, որ գնումների ոլորտում առկա ռիսկերն էապես նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է ներդնել էլեկտրոնային գնումների համակարգ:

Ընդ որում, էլեկտրոնային գնումների ներդրման աշխատանքներն իրականացվում են դեռևս 2004 թվականից սկսած: Պարբերաբար, այդ կապակցությամբ իրականացվել են ուսումնասիրություններ, շարունակ կազմակերպվել են քննարկումներ, սեմինարներ, հրավիրվել են միջազգային փորձագետներ: Ներգրավվել են ֆինանսական ռեսուրսներ պետական բյուջեից և դոնոր կազմակերպություններից: Ոլորտի կարգավորման նպատակով շարունակ մշակվում և լրամշակվում են օրենքներ, ենթաօրենսդրական ակտեր և հայեցակարգեր:

Արդյունքում, 2011 թվականին ՀՀ ֆինանսների նախարարությունը պաշտոնապես հայտարարեց, որ էլեկտրոնային գնումների համակարգն արդեն ձևավորված է, իսկ ակնկալվող արդյունքները՝ ստացված, և շուտով հանրային գնումներն կիրականացվեն արդեն լավագույն ճանապարհով:

Այնուամենայնիվ, ուսումնասիրությամբ պարզվում է, որ համակարգը փաստացի չի գործում, և նույնիսկ գործընթացում խնդիրները գնալով ավելանում են: Դեռ ավելին, ծրագրի բանալիները /կողերը/ պարզապես գոյություն չունեն: Ծրագիրը ձախողված է:

Այդ փաստը 2012 թվականի տարեվերջին պաշտոնապես ընդունվեց մաս ֆինանսների նախարարության կողմից: Այսինքն՝ օգտագործված ռեսուրսները չտվեցին ակնկալվող արդյունքը:

Այժմ, ՀՀ ֆինանսների նախարարության նախաձեռնությամբ մշակվում է ՀՀ էլեկտրոնային գնումների համակարգի բարեփոխումների 2013-2015 թթ. ճանապարհային քարտեզ, որով նախատեսվում է շտկել խափանված համակարգը և զարգացնել մնացած հանրավորությունները: Այդ նպատակով, կրկին նախատեսվում է ներգրավել լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ:

Վերոհիշյալ քարտեզի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանում բացակայում է, թերևս, ամենակարևոր բաղադրիչը՝ ծրագրի ձախողման պատճառները և հետագա փուլերում դրանք չկրկնելու ռիսկերի կառավարման մեխանիզմները:

Այդ կարևոր երկու բաղադրիչների բացակայությունը զգալիորեն նվազեցնում է ներկա փուլում պլանավորվող բարեփոխումների հուսալիությունը:

- Գնումների համակարգն, առհասարակ, պետք է լրջորեն ուսումնասիրել, հասկանալ ստեղծված կոռուպցիոն ռիսկերի պատճառահետևանքային կապերը, գտնել դրանց վերացման ուղիները, շտկել համակարգում գործող ենթակառուցվածքների շեղված աշխատանքը, այսինքն՝ համակարգը դարձնել կենսունակ և արդյունավետ, և նոր այն վերափոխել էլեկտրոնային կառավարման:

- Հատկապես անկատար է գնագոյացման մեխանիզմը. ձեռք բերված ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գներն էապես շեղվում են տվյալ պահին շուկայում գործող համապատասխան միջին գներից: Գնագոյացման արդյունավետության և իրատեսության ապահովման նպատակով հաշվետու տարում Վերահսկիչ պալատը ՀՀ կառավարությանն առաջարկել է սահմանել պետական կարգավորիչ /հսկիչ/ գներ, որոնք շուկայի իրադրության փոփոխության պարագայում կարող են պարբերաբար վերանայվել և նորովի հրապարակվել: Ընդ որում, պետական գնումներ իրականացնող մարմինն իր գնումները պետք է իրականացնի միայն արդեն նախանշված գների վերին շեմից ոչ բարձր պայմաններում:

Այդ առումով, Կառավարության կողմից արդեն ձեռնարկվել են քայլեր: Վերահսկիչ պալատը հետամուտ է լինելու հարցին, դեռ ավելին 2013 թվականին վերահսկողություն է իրականացվելու գնումների ողջ գործընթացի նկատմամբ:

- Բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման տեսանկյունից, Վերահսկիչ պալատը Կառավարությանն առաջարկություններ է ներկայացրել նաև ներքին աուդիտի համակարգի մասով, մասնավորապես ներկա փուլում ներքին աուդիտորի նշանակման, ազատման և գործունեության այլ կարևոր հարաբերություններում նպատակահարմար է նվազեցնել պետական մարմնի ղեկավարի ազդեցությունը: Տվյալ ուղղությամբ, Կառավարությունը նույնպես համաձայնվել է և իրականացնում է օրենսդրական համապատասխան փոփոխություններ: Առհասարակ, գնումների արդյունավետությունն ապահովելու տեսանկյունից, Վերահսկիչ պալատն էապես կարևորում է ներքին աուդիտի համակարգի լիարժեք ձևավորման ու զարգացումը:

2.4. Տնտեսական հարաբերություններ, գործարար միջավայր, պետական հսկողություն

ՀՀ էկոնոմիկայի նախարարության շրջանակներում իրականացված վերահսկողության արդյունքներում արձանագրվել են էական խնդիրներ և ռիսկեր, մասնավորապես.

- «Աջակցություն ՓՄՁ սուբյեկտներին» ծրագիրն իրականացվել է թերություններով և խախտումներով: 2010թ. վարկային փաթեթից օգտված 30 սուբյեկտից գործում է 8-ը, 2011թ.՝ 17 սուբյեկտից՝ 8-ը, իսկ 2012 թ. վարկավորված 130 սուբյեկտից 11-ն արդեն իսկ լուծարվել կամ դադարեցրել է գործունեությունը: Մի շարք դեպքերում վարկերն օգտագործվել են ոչ նպատակային, իսկ ֆինանսական աջակցությունը տրամադրվել է ոչ հավաստի ցուցանիշների հիման վրա, ֆինանսական աջակցության միջոցները բավարար չափով չեն նպաստել բիզնեսի ընդլայնմանն ու աշխատատեղերի ավելացմանը:

- Ռիսկային է նաև արդեն տրամադրված վարկային միջոցների վերադարձելիության խնդիրը, մասնավորապես ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՓՄՁ ՋԱԿ-ի միջոցով «Կոնսեր» ՍՊԸ-ին և «Վայք գրուպ» ՓԲԸ-ին հատկացված համապատասխանաբար՝ 395.000.0 և 164.000.0 հազ. դրամի ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարելու արդյունքում վերականգնվել է ընդամենը 85,825.1 հազ. դրամը:

- ՀՀ հասարակական վայրերի զուգարաններով ապահովման հայեցակարգի շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին ձեռք բերված 2 բիո զուգարանները մինչ օրս չեն շահագործվում, որի հետևանքով կատարված 100,000.0 հազ. դրամի ծախսը անարդյունավետ է:

- ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը որակավորման պատշաճ վերահսկողություն չի իրականացրել զբոսաշրջության բնագավառում հյուրանոցային տնտեսության օբյեկտների նկատմամբ:

- «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի¹ կողմից շուկան ուսումնասիրվել է կամայականորեն՝ առանց սահմանված կարգի և մեթոդական ցուցումների, իսկ ապրանքների կողմնորոշիչ գների սահմանման նպատակով տեղեկությունների հավաքագրման կարգը հաստատելուց հետո կողմնորոշիչ գները նույնպես որոշվել են առանց սահմանված ընթացակարգերի: Թողարկած տեղեկագրերում ընդհանրապես չի ներառվել աշխատանքների և ծառայությունների արժեքների վերաբեր-

¹ Տվյալ դեպքում վերահսկողությունն ընդգրկել է այն ժամանակաշրջանը, որտեղ «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ը գործում էր ՀՀ էկոնոմիկայի նախարարության ենթակայությամբ (04.11.2010 – 15.12.2011թթ.):

յալ տեղեկատվությունը: Բացարձակապես դուրս է մնացել նաև պետական կարիքների համար բոլոր ապրանքների մասով կողմնորոշիչ գների սահմանման բնագավառը:

Գյումրու տեխնոպարկի մասին

- ՀՀ կառավարության կողմից 12.06.2008թ. նիստի N 23 արձանագրությամբ հաստատվել է “Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու հայեցակարգին հավանություն տալու մասին” որոշումը:

- Համաձայն Հայեցակարգի Գյումրի տեխնոպարկում կներառվեն և կզարգանան հետևյալ ոլորտները՝ զբոսաշրջություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն (կառուցապատման և շինարարական ժամանակակից տեխնոլոգիաներ), նորաձևություն և տեքստիլ արդյունաբերություն, արվեստ, ոսկեգործություն, արհեստագործություն:

- Կառավարության 2008թ.-ի դեկտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 1463-Ն որոշմամբ հաստատված միջոցառումների 2-րդ կետով նախատեսված էր միջազգային չափանիշներին համապատասխան բիզնես-պլանի մշակում: Արդյունքում օտարերկրյա խորհրդատուի կողմից մշակվեց «Գյումրու տեխնոպարկ, ռազմավարական ուղեցույց և բիզնես պլան» փաստաթուղթը (Բիզնես-պլան):

- Ըստ Բիզնես-պլանի Գյումրու տեխնոքաղաքի համար ձեռներերության զարգացման ռազմավարության շրջանակներում իրականացվելիք հիմնական ծրագրերն են.

- Արվեստներ / արհեստներ, միկրոձեռներեցություն, կրթություն, որի արդյունքում պետք է Կումայրի թաղամասում վերականգնել նախկին փոստային գրասենյակի և մանկավարժական ինստիտուտի շենքերը՝ որպես նպատակային նշանակության փոքր գրասենյակներ արվեստների, արհեստների և միկրոձեռնարկությունների, ինչպես նաև ապրելու/աշխատելու կենսագործունեության համար: Բացի այդ, դիտարկել կրթական գործունեությունը վերսկսելու հնարավորությունը:
- Բիզնես-պարկ, լոգիստիկայի կենտրոն, ազատ գոտու կարգավիճակ, որի արդյունքում հղկող հաստոցների գործարանի շենքը պետք է քանդել կամ փոխակերպել արդյունաբերության և բաշխման գործունեության համար օգտագործվող ժամանակակից միավորների:
- Տեխնոլոգիական պարկ, որի արդյունքում Պոլիտեխնիկ ինստիտուտի նախկին տարածքում պետք է պատրաստել և իրականացնել կրթական և ձեռներեցության ինտեգրված գոտու մաստեր-պլան: Տվյալ վայր տեղափոխել Պետական ճարտարագիտական համալսարանը: Կառուցել ինկուբատոր, տեխնոլոգիական միավորներ:

- Ընդհանուր առմամբ ծրագրի վերջնանպատակը ներդրումների ներգրավումն է, ձեռնարկությունների զարգացման խթանումը, աշխատատեղերի ստեղծումը և քաղաքի ու վերջինիս բնակիչների հարստացումը:

- Վերը նշված նպատակներին հասնելու համար պահանջվում է իրականացնել կապիտալ ներդրումներ (շինարարական աշխատանքներ), որի ծախսերը համաձայն բիզնես-պլանի մոտավորապես կկազմեն 49-53 միլիոն ԱՄՆ դոլար:

- Կառավարության որոշումներով 2008-2012 թվականներին Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման ծրագրով նախատեսված են եղել մի շարք միջոցառումներ, որոնց արդյունքում ստեղծվել են 2 լաբորատորիաներ, որոնք իրականացնում

են վերապատրաստումներ, ստեղծվել են 5 ընկերություններ որոնք աշխատում են վնասով, ունեն 10 վարձու աշխատողներ, և ապահովում են փոքր հասույթներ: Արդյունքում պետական բյուջեից 2008-2012 թվականներին ծախսվել է 430.6 մլն դրամ նախատեսված 689 մլն. դրամի փոխարեն:

Ուշագրավ է այն, որ դեռևս հայտնի չէ, թե վերջիվերջո որքան է տևելու Տեխնոպարկի ձևավորման ծրագիրը, այսինքն՝ չկա նախանշված ծրագրի ավարտ, չկա քայլերի հաջորդականություն, ակնկալվող արդյունքները չափելի չեն, պատասխանատվության շրջանակը նույնպես հստակ չէ: Հնարավոր ռիսկերի առումով ծրագիրը գնահատված չէ, այսինքն՝ ռիսկերի կառավարումը նույնպես հստակ չէ: Ամեն ինչ առավել քան անորոշ է:

ՀՀ և ՌԴ միջև պարենային ապրանքների ներմուծման, արտահանման կարգավորման և դրանց անվտանգության ապահովման հարցերի շուրջ ՀՀ և ՌԴ բարձրագույն վերահսկիչ մարմինների կողմից իրականացված վերահսկողությամբ արձանագրվել են որոշ խնդիրներ, մասնավորապես.

- ՌԴ-ի տարածք ապրանքների ներմուծման, անասնաբուժական և բուսասանիտարական վերահսկողության ոլորտում գործող ռուսական օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ իրավական ակտերում առկա ակնհայտ «բաց»-երը «Ռոսսելխոզնադորի» պաշտոնատար անձանց հնարավորություն է տալիս ընդունել ՌԴ մաքսային սահմանով ապրանքների ներմուծումը, արտահանումը թույլատրող կամ սահմանափակող ոչ միանշանակ որոշումներ:

- ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության և ՌԴ անասնաբուժական եւ բուսասանիտարական հսկողության դաշնային ծառայության միջև համագործակցության մակարդակը բավարար չէ, արդյունքում փոխադարձ հետքերը հարցերի արձագանքման գործընթացը դանդաղում է կամ լիարժեք չի իրականացվում:

- ԱՊՀ երկրների շրջանակներում ընդունված համաձայնագրի համաձայն, արտահանող երկրի կողմից տրված որակի հավաստագիրը պետք է ճանաչվի ներմուծող երկրի կողմից: Սակայն, ՀՀ-ից ՌԴ ներմուծվող պարենային ապրանքները սննդի անվտանգության նկատառումներից ելնելով «կրկնակի անգամ» ենթարկվում են փորձաքննության, մինչդեռ, ՌԴ-ից ներմուծվող պարենային ապրանքները ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից լաբորատոր փորձաքննության չեն ենթարկվում:

- Վերահսկողության արդյունքների հիման վրա ՌԴ կառավարությունը որոշում է կայացրել թույլատրել Վերին Լարսի սահմանային ավտոմոբիլային անցակետով ՀՀ ներկրել ալկոհոլային խմիչքներ և ծխախոտ:

Տնտեսական մրցակցության պետական պաշտպանության ոլորտում նույնպես արձանագրվել են ռիսկեր և խնդիրներ, մասնավորապես.

- Անբարեխիղճ մրցակցության գործողության համար տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ նախորդ տարվա հասույթի մինչև մեկ տոկոսի չափով տուգանքի նշանակման գործընթացը ռիսկային է, կանոնակարգված չէ, չկա որևէ հաստատված մեթոդաբանություն:

- Գերիշխող դիրքի չարաշահման համար տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ 5 մլն դրամից մինչև 200 մլն դրամի չափով տուգանքի նշանակման գործընթացը ռիսկային է, հարցը կանոնակարգված չէ, չկա որևէ հաստատված մեթոդաբանություն:

- Համակենտրոնացումը չհայտարարագրելու համար տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ համակենտրոնացմանը մասնակցելու նախորդ տարվա հասույթի 4 տոկոսի

չափով, բայց ոչ ավելի, քան 500 մլն դրամի չափով տուգանքի նշանակման գործընթացը նույալես ռիսկային է, հարցը կանոնակարգված չէ, չկա որևէ հաստատված մեթոդաբանություն:

- Արդյունքում, ընկերությունների նկատմամբ միևնույն կամ համանման խախտման տուգանքի չափը որոշվում է տարբեր մոտեցումներով, կամ մի դեպքում ընկերությունը տուգանվում է, իսկ մյուս դեպքերում՝ պարզապես տրվում է նախազգուշացում:
- Տուգանված ընկերություններն իրենց կողմից կատարված խախտումների վերացման վերաբերյալ ներկայացրել են փաստաթղթեր, որոնց արժանահավատության ճշտման նպատակով ՀՀ տնտեսական պաշտպանության պետական հանձնաժողովը անհրաժեշտ և բավարար աշխատանքներ չի կատարել:

2.5. Կրթության ոլորտ

ՀՀ կրթության և գիտության նախարարության և «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի շրջանակներում իրականացված ստուգումներով նույնպես հայտնաբերվել են խախտումներ, թերություններ և ռիսկեր, մասնավորապես.

- Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացման և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովման նպատակով «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամը կատարել է վերապատրաստման բուն գործընթացի հետ ուղղակի կապ չունեցող ծախսեր: Ընդ որում, մեկ դաստիարակի հաշվարկով միավոր/ժամի համար վարկային ծրագրերի շրջանակներում ստացել է 3814 դրամ, մինչդեռ վերապատրաստման փորձ ունեցող «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ում այն կազմել է 500 դրամ:
- Ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման միջոցով կրթության որակի հետագա բարելավման ծրագրի շրջանակներում վերապատրաստող մասնավոր կազմակերպությունների համար վարկային միջոցներից ձեռք են բերվել 40,133.3 հազ. դրամի հիմնական միջոցներ, մինչդեռ հայտնի չէ, թե այդ կազմակերպությունները հաջորդ անգամ կընգրկվեն արդյոք վերապատրաստողների ցուցակում:
- Դպրոցների տնօրենների վերապատրաստման գործընթացը նախապատրաստելու համար վարկային միջոցներից ծախսվել է 69,947.9 հազ. դրամ (մշակվել է ձեռնարկ և ուղեցույց, ինչպես նաև վերապատրաստվել են տնօրեններին հետազայում վերապատրաստող 25 դասախոսներ), սակայն տնօրեններն այդպես էլ չեն վերապատրաստվել, քանի գործընթացն դադարեցվել է:
- Ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման շրջանակներում բաց կրթական միջավայր /պլատֆորմ/ ստեղծելու նպատակով կատարվել են նախապատրաստական աշխատանքներ, որի դիմաց միջազգային փորձագետին վճարվել է շուրջ 7 մլն. դրամ, սակայն հետազայում «պլատֆորմի» ստեղծման գործընթացը դադարեցվել է:
- Բարձրագույն կրթության ֆինանսավորման կայուն համակարգի ներդրման շրջանակներում նախատեսվել է ուսանողներին տրամադրել հատուկ վարկեր և այդ նպատակով 34,009.8 հազ. դրամի չափով կատարվել են նախապատրաստական աշխատանքներ (վարկերի տրամադրման մեխանիզմի ձևավորում), սակայն հետազայում վարկերի տրամադրման գործընթացն դադարեցվել է:
- «Հանրակրթական ուսուցում» ծրագրի շրջանակներում ընտրանքային կարգով ստուգված 10 ավագ դպրոցներից 6-ը չունի ՀՀ օրենսդրությամբ պահանջվող համա-

պատասխան լիցենզիա, իսկ 9-ը՝ աշակերտների թիվը 124-ով ավելի ցույց տալու արդյունքում պետական բյուջեից 17,464.0 հազ. դրամ ավելի գումար է ստացել:

Բյուջեից հավելյալ ստացված միջոցներից դեռևս չծախսված 11,505.8 հազ. դրամի 42%-ը (4,858.3 հազ. դրամ) վերահսկողության ընթացքում դպրոցների կողմից արդեն վերականգնվել է պետական բյուջե, իսկ մնացած՝ 6,647.5 հազ. դրամը պակասեցվել է դպրոցների նախահաշվից:

- «Համակարգչային և ինտերնետային կապի ծառայություններ» ծրագրի շրջանակներում 2012 թվականին Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցին նոր միացված դպրոցների չորս ամսվա սպասարկման համար բյուջեից «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին հատկացվել է 82,560.5 հազ. դրամ, սակայն սպասարկումը փաստացի իրականացվել է նախատեսվածից մեկուկես ամիս պակաս: Այսինքն, 31,915.1 հազ. դրամ ավելի ստացված գումարը «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ենթակա է վերականգնման պետական բյուջե:

- Սարքավորումների հաշվառման բացակայության, դրանց իրական պահանջների չբացահայտման արդյունքում 2011 թվականին 20,040 հազ. դրամի չափով ձեռք բերված սարքավորումները պարզապես չեն օգտագործվել, քանի որ դրա կարիքն իրականում չի եղել:

- Որոշ դպրոցներում նոր սարքավորումների փոխարեն տեղադրվել են օգտագործված սարքավորումներ, ինտերնետային կապը եղել է ցածրորակ, որի արդյունքում դպրոցները ստիպված օգտվել են այլընտրանքային կապից:

Հաշվետու տարում ոլորտում իրականացված վերահսկողությամբ արձանագրված խախտումների և թերությունների վերաբերյալ մանրմասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվություններում:

2.6. Երևան քաղաքի գույքի և հողային պաշարների օտարում և վարձակալության տրամադրում, ինքնակամ կառույցներ և շինություններ

- Երևան քաղաքին պատկանող գույքի օտարման գործարքների ընտրանքային կարգով ստուգված թվով 3 շինությունն (Իսահակյան փողոց, Մաշտոցի պողոտա, Հյուսիսային պողոտա) օտարելուց հետո պայմանագրով նախատեսված ներդրումային պարտավորությունները ստուգման պահին գնորդների կողմից չէին կատարվել: Այդ առումով քաղաքապետարանը որևէ էական միջոցներ դեռևս չէր ձեռնարկել:

Կնքված օտարման պայմանագրերում գնորդների պարտավորություններն անորոշ են, մասնավորապես դրանցում չեն նշվել գնորդների կողմից կատարվելիք ներդրումների չափը և դրանց կատարման ժամկետը: Արդյունքում, իրավիճակը դարձել է գրեթե անվերահսկելի և անկառավարելի:

- Երևան քաղաքին պատկանող գույքը ստուգման պահին վարձավճարի գծով ապառքը կազմում էր 9,141.8 հազ. դրամ, որից 7,207.9 հազ. դրամը համայնքի բյուջե է գանձվել ստուգման ընթացքում:

Հողային պաշարների կառավարման անարդյունավետ դեպքեր նույնպես արձանագրվել են, մասնավորապես Քաղաքապետարանի թույլտվությամբ իրականացվել են գործող օբյեկտներին հարակից հողերի ընդլայնում կադաստրային արժեքով, մինչդեռ այդ հողային պաշարներն առանձին գույքային միավորներ են և դրանք, ըստ էության, կարող էին օտարվել աճուրդով: Այսինքն, Քաղաքապետարանը չի ընտրել հողի օտարման առավել արդյունավետ ճանապարհ, ինչը միևնույն ժամանակ կապահովեր մրցակցություն և թափանցիկություն, իսկ զինը կլինեին «շուկայական»:

Հարկ է նշել, որ վերահսկողության ընթացքում հողերի վաճառքը կադաստրային արժեքից ցածր գնով չի տրվել:

Օբյեկտների սպասարկման համար նախատեսված և դրանց հարակից տարածքներն արհեստական ճանապարհով տարանջատվում են, արդյունքում գույքն ի սկզբանե օտարվում է սակարկությամբ, իսկ հարակից տարածքը, որպես ընդլայնման միավոր, օտարվում է ուղղակի վաճառքով՝ կադաստրային արժեքով: Արդյունքում, անտեսվում են հողի օտարման արդյունավետության, թափանցիկության և մրցակցության սկզբունքները:

Ուշագրավ է նաև այն, որ գործարքները կնքելուց անմիջապես հետո Քաղաքապետարանի թույլտվությամբ ձեռք բերված տարածքը կրկին բաժանվում է առանձին միավորների, որից հետո արդեն նոր սեփականուները ընդլայնման նպատակով հատկացման տարածքը, որպես առանձին գույքային միավոր վաճառում է այլ անձնաց՝ շուկայում գործող գներով:

- **Աճուրդային եղանակով հողերի օտարման կապակցությամբ** պետք է նշել, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, ՀՀ հողային օրենսգրքի պահանջներով հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը և մնացած պայմանները որոշվում է համայնքի ավագանու կողմից, սակայն Երևանի ավագանին, անտեսելով վերոգրյալ օրենքների պահանջները, այդ լիազորությունը փոխանցել է Երևանի քաղաքապետին, իսկ քաղաքապետն էլ իր հերթին այն փոխանցել է Քաղաքապետարանում գործող համապատասխան հանձնաժողովին:

Հանձնաժողովը, որպես սակարկության ձև նախընտրել է «փակ» աճուրդները: Փաստորեն, անտեսվել է նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի պահանջը՝ «Երևանի քաղապետի, համայնքի ավագանու կամ համայնքի ղեկավարի կողմից իրեն իրավաստեղծ լիազորությունների փոխանցումն այլ մարմինների արգելվում է»: Մինչդեռ, ուսումնասիրության արդյունքները ցույց տվեցին, որ սակարկությունների մեկնարկային գների որոշման ժամանակ շուկայական գին պարզելու որևէ հստակ մեթոդաբանություն գոյություն չունի, այսինքն՝ պարզ չէ, թե ինչ սկզբունքով է որոշվում հողմասի մեկնարկային գինը:

Արդյունքում, 2010-2012 թթ. աճուրդային կարգով օտարման ներակայցված հողերի մեկնարկային գները որոշ դեպքերում սահմանվել են շուկայականից «ակնհայտ» շեղումներով:

- **Հողամասերը վարձակալությամբ տրամադրելու գործընթացում** նույնպես արձանագրվել են որոշ խնդիրներ, մասնավորապես վարձավճարները սահմանմանվել են կամայական մոտեցումներով:

Տարածքները կրկին անհիմն և արհեստական եղանակով բաժանվում են հիմնական և օժանդակ մասերի և յուրաքանչյուրի դեպքում վարձավճարը սահմանվում է տարբեր եղանակով:

Օրինակ. Ազատության հրապարակին հարող տարածքում «Սիրո մեղեդի» ՍՊԸ-ն սրճարանային բիզնեսի նպատակով օգտագործում է ընդհանուր 1250 քմ տարածք, սակայն Քաղաքապետարանի ոչ հիմնավոր թույլտվությամբ ամրագրվել է, որ սրճարանի փաստացի զբաղեցրած տարածքը կազմում է 663.3 քմ, իսկ մնացած՝ 586.6 քմ տարածքը կանաչապատման և բարեկարգման համար է նախատեսված: Արդյունքում, հիմնական մասը հաշվարկվել է շուկայական մեթոդներով, իսկ մյուս մասը՝ կադաստրային արժեքով:

• Ինքնական կառույցների ձեռք բերման նպատակով 30-օրյա ժամկետում վճարումներ չկատարած կառուցապատողներին Քաղաքապետարանը սահմանված 5-օրյա ժամկետում այդ կառույցները վարձակալելու վերաբերյալ առաջարկ չի ներկայացրել, դեռ ավելին, այդ տարածքները շարունակվում են փաստացի օգտագործվել ինքնական կառուցապատողների կողմից: Հարկ է նշել, որ այդամենայնիվ, եթե նման առաջարկ լիներ, և եթե կառուցապատողը հրաժարվեր, ապա Քաղաքապետարանը կարող էր պարզապես դրանք օտարել:

Ընտրանքային կարգով ստուգված գործաքներից թվով 104 գործով Քաղաքապետարանը չի օգտվել օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորություններից և այդ տարածքները չի օտարել աճուրդով կամ մրցույթով, արդյունքում համայնքի բյուջեն գրկվել է զգալի ֆինանսական մուտքերից: Որպես օրինակ կարելի է նշել,

- Մոլդովական 51/23 հասցեում գտնվող բնակավայրային նշանակության 1529 քմ հողամասում ինքնական կառուցված 75 քմ շինությունը ինքնական կառուցապատողի կողմից ձեռքբերման դեպքում համայնքային բյուջե կվճարվեր 573 հազ. դրամ, իսկ հողամասի համար՝ 6,918 հազ. դրամ:
- Անդրանիկի 20/2 հասցեում գտնվող բնակավայրային նշանակության 425 քմ հողամասում ինքնական կառուցված 191 քմ շինությունը կառուցապատողի կողմից ձեռք բերման դեպքում համայնքային բյուջե կվճարվեր 1,491.048 հազ. դրամ, իսկ հողամասի համար՝ 1,926 հազ. դրամ:

Երևան քաղաքում համայնքային սեփականության կառավարման և օգտագործման անարդյունավետության փաստերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվություններում:

2.7. Բնապահպանական խնդիրներ, տեխնիկական անվտանգություն

Հաշվետու ժամանակաշրջանի բնապահպանական վերահսկողությունն իրականացվել է աղբահանության և սանիտարական մքարման համակարգերում Նիդերլանդների Թագավորության հաշվիչ դատարանի փորձագետների մասնակցությամբ: Հայտնաբերվել են էական նշանակություն ունեցող խնդիրներ և խախտումներ, մասնավորապես.

• 2005 թվականին Նուբարաշենի աղբավայրից կենսազազի օգտահանման և էլեկտրաէներգիայի արտադրության հայ-ճապոնական ծրագրի² շրջանակներում ճապոնական Շիմիձու կորպորացիան նախատեսում էր տեղադրել էլեկտրաէներգիայի գեներատոր, որը պետք է աշխատեր աղբավայրից ստացվող մեթան գազով:

Հայաստանի Հանրապետության տեսանկյունից, ծրագրի ակնկալվող արդյունքը աղբի հետ կապված բնապահպանական խնդիրների լուծումն էր, ինչպես նաև աղբից ստացվող էլեկտրաէներգիայի տնտեսական շահավետությունը:

Ճապոնական Շիմիձու կորպորացիայի շահագրգռվածությունը ծրագրի հաջող իրագործման արդյունքում ակնկալվող միջազգային բնույթի հավաստագիրն էր: Ընդ որում, ճապոնական կողմը ծրագրի շրջանակներում պատրաստվում էր ներդնել 8 մլն ԱՄՆ դոլար:

Այնուամենայնիվ, 2005-2008թթ.-ի ընթացքում համաձայնագրի կնքումը ձգձգվում է: Երևանի քաղաքապետարանը, հիմք ընդունելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարծիքը՝ «...նպատակահարմար չէ ծրագիրն իրագործել ամբողջ ծավալով, քանի որ

² Ծրագիրը նախնական հաստատվել էր 2005 թվականին՝ ՀՀ և Ճապոնիայի կառավարությունների, ինչպես նաև ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիային կից Կիոտոյի արձանագրության «Մաքուր զարգացման մեխանիզմի» գործառնական մարմնի կողմից:

«Շիմիծու» կորպորացիան կարող է ստանալ Նուբարաշենի աղբավայրում կենսազազի օգտահանման և էլեկտրաէներգիայի արտադրության մենաշնորհ», նախագիծը կրճատում և իրականացվում է առանց էլեկտրաէներգիայի արտադրության քաղաքիչի: Կենսազազի հավաքման և այրման համակարգի շահագործումը սկսվում է միայն 2009թ. տարեվերջին՝ նախատեսված 8 մլն. ԱՄՆ դոլարի փոխարեն ներդրվում է ընդամենը 2,75 մլն ԱՄՆ դոլար (նախատեսվածի 34%):

Սակայն, վերահսկողության ընթացքում պարզվեց, որ ծրագրի ավարտից հետո ճապոնական կողմն իրապես պատրաստվում էր ողջ համակարգն անհատույց կարգով փոխանցել Երևանի քաղաքապետարանին: Դա նշված էր նաև կնքվող համաձայնագրի նախագծում:

Այսպիսով, իրավասու մարմինների կողմից չի ապահովվում հնարավոր ներդրումների լիարժեք իրականացումը և դրանց արդյունավետ օգտագործումը: Երևանի Նուբարաշենի աղբավայրում մինչ օրս չի լուծվել աղբի տեղադրման, վերամշակման և օգտահանման հիմնախնդիրը:

Աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում խնդիրներ և ակնհայտ ռիսկեր են հայտնաբերվել նաև պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքներում, մասնավորապես.

- Չի ապահովվել թափոնների, այդ թվում՝ կենցաղային կոշտ թափոնների հաշվառումը կանոնակարգող օրենսդրության պահանջների կատարումը: Աղբավայրերի հաշվառման տվյալները չեն արտացոլում ՀՀ տարածքում առկա աղբավայրերի իրական պատկերը, որի հետևանքով անորոշ է ինչպես աղբավայրերի փաստացի քանակը, այնպես էլ դրանց զբաղեցրած հողատարածքների մակերեսը և տեղադրված աղբի քանակը:

- Ըստ վիճակագրական տվյալների, ՀՀ տարածքում տարեկան միջինում առաջանում և տեղափոխվում է 535.2 հազ. տոննա կենցաղային աղբ, որից 57.0 %-ը բաժին է ընկնում Երևան քաղաքին: Մինչդեռ 2011թ. բնապահպանական վճար է վճարվել ընդամենը 12.5 հազ. տոննայի տեղադրման համար (2.3%), իսկ 2012թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ 14.6 հազ. տոննայի տեղադրման համար (2.7%): Երևան քաղաքում վերջին երեք տարում ընդհանրապես բնապահպանական վճար չի վճարվել:

- Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններ մատուցվում են ՀՀ գյուղական համայնքների՝ 46%-ի համար, իսկ քաղաքային բնակավայրերում՝ բնակչության 90%-ի համար:

- Չի կատարվել «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջը՝ սանիտարական մաքրման սխեմաները հաստատվել են 915 համայնքներից միայն 295-ում (32%):

- Չի կատարվել «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 30.01.2003թ. «ՀՀ վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 121-Ն որոշման պահանջները՝ աղբավայրեր օգտագործողների (օպերատորների) գործունեությունն իրականացվել է առանց լիցենզիայի, որի տարեկան պետական տուրքը՝ 200.0 հազ դրամ է:

- Արագածոտնի, Արմավիրի, Արարատի և Լոռու մարզերի համայնքների մեծ մասում աղբի տեղադրումը շարունակում է իրականացվել ապօրինի՝ բնակավայրերին մերձակա և ճանապարհներին հարակից տարածքներում:

- Չի կատարվել «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 13-րդ և 36-րդ հոդվածի պայմանները՝ տեղական ինքնակառավարման մարմինները ՀՀ

բնապահպանության նախարարության հետ համաձայնեցված հսկողություն չեն իրականացրել բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ:

- Բնապահպանական պետական տեսչության կողմից պատշաճ հսկողություն չի իրականացվել թափոնների գործածության համար սահմանված նորմերի, բնապահպանական վարչական վիճակագրություն վարելու և հաշվետվություններ ներկայացնելու կարգի պահպանման նկատմամբ:

Տեխնիկական անվտանգության բնագավառում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունում նույնպես հայտնաբերվել են որոշակի խախտումներ և ռիսկեր, մասնավորապես.

- Հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության կողմից վարչական վարույթներ են կարճվել՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված կարճման հիմքերին ներկայացվող պահանջներին ոչ համապատասխան:

- Տեսչական ստուգումներով տրված կարգադրագրերով արձանագրված խախտումները չվերացնելու համար առանց տուգանք նշանակելու տրվել է 55 կրկնակի կարգադրագիր, որի հետևանքով պետական բյուջե պակաս է մուտք եղել 8,250.0 հազ. դրամ տուգանք:

- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության բողոքարկման հանձնաժողովն առանց հիմնավորման կարճել է «Երևանի առաջին տպարան» ՓԲԸ-ի վերելակը տեխնիկական անվտանգության փորձաքննություն չանցնելու համար Հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության կողմից նշանակված տուգանքը և բավարարվել է նախազգուշացումով:

- Հաշվետու ժամանակաշրջանում, տեխնիկական անվտանգության կանոնները և նորմերը խախտելու համար, Տեսչության կողմից նշանակված 48,500.0 հազ. դրամ տուգանքից պետական բյուջե մուտք չի եղել 26,241.4 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

- Ընտրանքային ստուգմամբ հայտնաբերվել է, որ արտադրական վտանգավոր օբյեկտների հաշվառման գրանցամատյանում գրանցված չէին արտադրական վտանգավոր համարվող օբյեկտներ՝ 4 հանքավայր, չորս ավտոգազալիցքավորման ճնշակայան և 25 բենզալցակայան: Ստուգման պահի դրությամբ իրավիճակը շտկելու ուղղությամբ Տեսչությունը որևէ միջոց չէր ձեռնարկել, օրենքով նախատեսված՝ յուրաքանչյուր օբյեկտի համար 1,0 մլն դրամ տուգանք չէր նշանակել:

Վերոգրյալ խախտումների, թերությունների վերաբերյալ առավել մանրմասն տեղեկատվությունը ներկայացված Վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվություններում:

3. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ Ազգային ժողովին՝

- «Թափոնների մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ՝ հստակեցնելով «տեղադրում» և «պահում» հասկացությունները: Մշակել և հաստատել արտադրության և սպառման թափոնների տեղադրման գործընթացի իրականացման կարգ:

- Համապատասխանեցնել կենցաղային աղբի աղբահանության հարաբերությունների կարգավորման մասով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի և թափոնների մասին ՀՀ օրենսդրության դրույթների պահանջները:

ՀՀ կառավարությանը՝

- Բյուջետային միջոցների արդյունավետության բարձրացման նպատակով գնումների համակարգում սահմանել «հսկիչ» գներ:

- Ներքին աուդիտի գործընթացն առավել անկախ և օբյեկտիվ դարձնելու նպատակով տվյալ փուլում ներքին աուդիտորի նշանակման, ազատման և գործունեության այլ կարևոր հարաբերություններում նվազեցնել պետական մարմնի ղեկավարի ազդեցությունը

- Բյուջետային միջոցների շրջանառման նկատմամբ միասնական կարգով գանձապետական հսկողություն իրականացնելու նպատակով միջազգային համաձայնագրերով տրամադրվող բյուջետային միջոցների նկատմամբ ՀՀ գանձապետարանին վերապահել նախնական հսկողության գործառույթների իրականացման լիազորություն:

- Կոռուպցիոն ռիսկերից և ուռճացված գներից խուսափելու նպատակով, վերանայել շինարարական նախագծերի նախահաշիվներում կիրառվող տոկոսադրույքների չափերը:

- Հաստատել ճանապարհաշինարարական աշխատանքներում էական տեսակարար կշիռ ունեցող բնահողի տեղափոխման, ասֆալտի կտրման (ֆրեզ), ռեսայկլեռով ասֆալտետոնն ծածկի սառը վերամշակմամբ հիմքի կառուցման (այդ թվում կապակցանյութերի՝ բիտումի և ցեմենտի ավելացմամբ), մեխանիզմով բնահողի փխրեցման աշխատանքների նախահաշվային միավոր արժեքները:

- Ճանապարհաշինության աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով ստեղծել բիտումի որակական հատկանիշների փորձարարական լաբորատորիա:

- Վերանայել տուն-ինտերնատների և գիշերօթիկ հաստատությունների սպասարկող անձնակազմի նորմատիվները և գործող հաստիքացուցակները, ինչպես նաև հաստատել վարչական աշխատողների թվաքանակի վերաբերյալ նորմատիվներ:

- Կանոնակարգել տեխնածին վթարների, արտադրական դժբախտ պատահարների և այլ դեպքերում տեխնիկական անվտանգության փորձաքննությունների գործընթացը և ծախսերի հաշվառումը:

- Ապահովել Երևան քաղաքի Շենգավիթ և Էրեբունի վարչական շրջաններում 24 ժամյա ջրամատակարարում /ջրամատակարարում փաստացի 12 ժամից պակաս է/:

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին

- Տնտեսվարող սուբյեկտների տուգանման գործընթացում ռիսկայնությունը նվազեցնելու նպատակով, մշակել և հաստատել տուգանքի չափի հաշվարկման մեթոդաբանություն:
- Կանոնակարգել տնտեսվարող սուբյեկտների կողմից թույլ տրված խախտումների վերացման փաստը հավաստիացնող փաստաթղթերի ներկայացման, ընդունման, գնահատման և ամփոփման գործընթացը:

4. ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվետու տարում միջազգային հարաբերությունների ոլորտում Վերահսկիչ պալատի գործունեությունը նույնպես եղել է ծավալուն և ընդգրկուն: Համագործակցության ծրագրերը կրել են բացառապես գործնական նշանակություն:

Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի հետ համագործակցությունն ավելի է խորացել:

- 2012 թվականին ք. Երևանում կայացած համատեղ նիստում ամփոփվել է երկու մարմինների միջև կնքված 2010-2012թթ. համագործակցության ծրագիրը, ինչպես նաև հաստատվել են պարենային ապրանքների անվտանգության և պարենամթերքի ներմուծման և արտահանման կարգավորման խնդիրների պետական ֆինանսական համատեղ վերահսկողության արդյունքները:

- Երկու երկրների վերահսկիչ կառույցների ղեկավարները ստորագրել են 2013-2015 թվականների համագործակցության ծրագիրը, որով նախատեսվում է իրականացնել մի շարք վերահսկողական միջոցառումներ, ինչպես նաև փորձի և տեղեկատվության փոխանակմանն ուղղված համատեղ այլ աշխատանքներ:

Նիդերլանդների Թագավորության հաշվիչ դատարանի կողմից ՀՀ վերահսկիչ պալատին ցուցաբերվող աջակցությունը եղել է ոչ միայն տեխնիկական, այլև՝ համատեղ վերահսկողության ու փորձի փոխանակման տեսքով:

- Հաշվիչ դատարանի աջակցությամբ ապահովվել է տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների համալրման, ինչպես նաև Վերահսկիչ պալատի կայքի ընդլայնման անգլերեն ու ռուսերեն լեզուներով թարգմանության շարունակականությունը, ինչպես նաև բարեփոխվել է ՀՀ վերահսկիչ պալատի տեղեկատվական տեխնոլոգիաների ռազմավարական ծրագիրը:

- Իրականացվել է համատեղ վերահսկողություն «Աղբահանության և սանիտարական մաքրման» թեմայով:

Հաշվետու տարում Վերահսկիչ պալատը համագործակցության պայմանագրեր է ստորագրել Բուլղարիայի և Չինաստանի վերահսկիչ մարմինների հետ: Նոր ծրագրերով նախատեսվում է իրականացնել փորձի փոխանակման, կադրերի վերապատրաստման, ինչպես նաև համատեղ ու զուգահեռ վերահսկողության միջոցառումներ:



« _____ » 20

**ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ**

№ _____

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Վ. ԳԱՐԻԻԵԼՅԱՆԻՆ**

Ի կապարումն ՀՀ վարչապետի 2013 թվականի մայիսի 24-ի
թիվ 02/23.14/7210-13 հանձնարարականի

Հարգելի պարոն Գաբրիելյան

Ներկայացնում եմ Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի
խորհրդի 2013 թվականի մարտի 21-ի թիվ 7/1 որոշմամբ հաստատված ընթացիկ
հաշվետվության կապակցությամբ Հայաստանի Հանրապետության արտակարգ
իրավիճակների նախարարության կողմից կատարված խախտումների մասին
տեղեկատվություն:

Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝

Ա. ԵՐԻՅՅԱՆ

Կապարող՝ Վ. Աճեմյան
Հեռ. 31-77-47

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0054, Դավիթաշեն 4, Ա.Միկոյան փող. 109/8

Հեռ.՝ (+37410)362015, ֆաքս՝ (+37410)363949

Էլ. փոստ՝ mes@mes.am, կայք՝ www.mes.am

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013թ. մարտի 21-ի թիվ 7/1 որոշմամբ հաստատված ընթացիկ հաշվետվության մասին

1. 2010, 2011 թվականներին և 2012 թվականի ինն ամիսներին հրդեհային անվտանգության կանոնները խախտելու համար նշանակվել է 116.966.0 հազ. դրամ տուգանք, որից պետական բյուջե պակաս է մուտք եղել 3,293.2 հազ. դրամ, որը ենթակա է վերականգման պետական բյուջե:

Վարչական գործերի մի մասը գտնվում են դատական փորձեր ատյաններում, ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայությունում և այլ փուլերում ու կախված համապատասխան գործընթացներից՝ դատարանների վճիռներից (որոշումներից), գումարներն աստիճանաբար կվճարվեն պետական բյուջե: (Վերահսկիչ պալատի կողմից կատարված սրուգումներից հետո պետական բյուջե է վճարվել 7.750. 000 ՀՀ դրամ):

2. 2010, 2011 և 2012 թվականներին տեսչության տարածքային մարմինների կողմից տրված կարգադրագրերով արձանագրված խախտումները չվերացնելու համար առանց տուգանք նշանակելու տրվել է 55 կրկնակի կարգադրագիր, որի հետևանքով պետական բյուջե պակաս է մուտք եղել 8,250.0 հազ. դրամ:

Հանձնարարվել է տարածքային մարմինների ղեկավարներին խստացնել հսկողությունը սպասարկվող օբյեկտներում, որակապես բարելավել վարչական վարույթների իրականացման գործընթացը՝ բացառել կրկնակի կարգադրագիր տալը:

3. Տեսչության՝ Արմավիրի մարզի տեսչական մարմինը 2010 թվականին նախկինում տրված կարգադրագրերով առաջարկված միջոցառումները չկատարելու համար <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքով սահմանված է 150.0 հազ. դրամ տուգանքի փոխարեն նշանակվել և գանձել է մեկ դեպքում՝ 50.0 հազ. դրամ, մեկ դեպքում՝ 60.0 հազ. դրամ և մեկ դեպքում 25.0 հազ. դրամ տուգանք, կամ պակաս է նշանակվել և գանձվել 315.0 հազ. դրամ տուգանք, որը ենթակա է վերականգման պետական բյուջե:

Արմավիրի տեսչության պետի իրավական ոլորտի իմացությունների ոչ բավարար լինելու պատճառով տուգանքները իրականացվել են սահմանված գումարներից ցածր չափերով: Նշված խախտումների համար 2010 թվականին մարզային տեսչության պետ է. Արևշատյանը ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

4. Փորձաքննություն չանցած կամ ռեեստրում չգրանցված արտադրական վտանգավոր օբյեկտները շահագործող անձանց նկատմամբ 2011 և 2012 թվականներին նշանակված 48,500.0 հազար դրամ տուգանքից պետական բյուջե, մուտք չի եղել 26,241.4 հազ. դրամ, որն էլ ենթակա է վերականգման:

Թվով 56 վարչական գործերից 36-ը գտնվում են դատական տարբեր առյուծաներում, 9-ը ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության վարույթում, 11 գործերով փոխարկարողների (տուգանվածների) հետ կնքվել է պայմանագիր գումարի վճարման ժամանակացույց և կախված համապատասխան գործընթացներից ու դատարանների վճիռներից (որոշումներից), գումարներն աստիճանաբար կվճարվեն պետական բյուջե: (Վերահսկիչ պալատի կողմից կատարված ստուգումներից հետո պետական բյուջե է վճարվել 7.750. 000 ՀՀ դրամ):

5. Ընտրանքային ստուգմամբ պարզվել է, որ 33 արտադրական վտանգավոր համարվող օբյեկտ բենզալցակայաններ, ԱԳԼՃԿ և ահնքեր ռեեստրում գրանցված չէ, որի համար օրենքով սահմանված է 1,000,0 հազ. դրամ տուգանք:

Տեսչության կողմից նշված օբյեկտների նկատմամբ ներագդման միջոցներ չեն ձեռնարկվել նրանց վերաբերյալ տեղեկատվության բացակայության պատճառով:

Համագործակցելով ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ու Պետական եկամուտների կոմիտեի հետ ձեռնարկվում են միջոցներ պետական ռեեստրում չգրանցված արտադրական վտանգավոր օբյեկտների հայտնաբերման և նրանց նկատմամբ համապատասխան միջոցներ կիրառելու ուղղությամբ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

0078 Երևան, Հալաբյան 41^ա, հեռ. 380389
Էլ. փոստ info@moj.am

**Հայաստանի Հանրապետության կառավարության
աշխատակազմի ղեկավար պարոն Վ. Գաբրիելյանին**

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2013թ. մայիսի
24-ի 02/23.14/7210-13 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Գաբրիելյան

Կից ներկայացնում ենք ՀՀ վերահսկիչ պալատի 2012 թվականի տարեկան
հաշվետվությամբ «Դատաիրավական ԾԻԳ» պետական հիմնարկի նամակները, ՀՀ
վերահսկիչ պալատի պատասխանը և Համաշխարհային բանկի գրությունը (անգլերեն):

Հարգանքով՝

Հ. Թովմասյան



CONTROL CHAMBER
OF THE REPUBLIC OF ARMENIA
BOARD MEMBER

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ
ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ

КОНТРОЛЬНАЯ ПАЛАТА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЧЛЕН СОВЕТА

№ *ԳՐ-016*

“ 20 ” *Օգոստոս* 2013թ.

ՀՀ արդարադատության նախարարության
«Դատաիրավական ծրագրերի իրականացման
գրասենյակ» պետական հիմնարկի
տնօրեն Ա.Թունյանին

«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջի համաձայն «Դատաիրավական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի վերահսկողության արդյունքներով հայտնաբերված փաստերի վերաբերյալ ամբողջական փաստաթուղթը ներկայացվել է Ձեզ ծանոթացման և ստորագրման համար, որը կատարվել է 2013 թվականի հունվարի 8-ին:

ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված փաստերի վերաբերյալ վերահսկվող օբյեկտը ներկայացրել է առարկություններ և բացատրություններ, որը ընթացիկ հաշվետվության նախագծի հետ ներկայացվել է ՎՊ խորհրդի քննարկմանը, և խորհրդի 28.03.2013թ. թիվ 6/4 որոշմամբ հաստատվելուց հետո ընթացիկ հաշվետվությունը «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի պահանջի համաձայն ներկայացվել է համապատասխան հասցեատերերին:

Խորհրդի անդամ

Գ. Ոսկանյան



ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Դատաիրավական Ծրագրերի Իրականացման Գրասենյակ
Պետական հիմնարկ

MINISTRY OF JUSTICE OF THE REPUBLIC OF ARMENIA

Judicial Project Implementation Unit

State Institution

ՀՀ, Երևան, 0001, Թումանյան 21/1

21/1 Tumanyan St, Yerevan, 0001, Armenia

Հեռ./Phone: (+37410) 545684, Ֆաքս/Fax: (+37410) 545683

e-mail: director@judreform.com

10 ապրիլի 2013թ. No. 03/129

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն Ի. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զաքարյան

Ամեր կողմից ստացվել է ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի կողմից 28.03.2013թ. ընդունված թիվ 6/4 որոշումը և դրան կից ընթացիկ հաշվետվությունը: Շնորհակալություն ենք հայտնում ներկայացված հաշվետվության և դրանում ներառված եզրակացությունների և առաջարկությունների վերաբերյալ, որոնք միանշանակ մեր կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և եղանակով լրացուցիչ կուսումնասիրվեն: Այնուամենայնիվ, ընթացիկ հաշվետվությունում առկա են բազմաթիվ դրվագներ և եզրահանգումներ, որոնք պահանջում են լրացուցիչ պարզաբանում: Այդ կապակցությամբ այս փուլում խնդրում ենք մեզ տրամադրել վերահսկողության ընթացքում կատարված որոշակի փաստաթղթեր և պարզաբանել հետևյալ դրվագները.

1. Ընթացիկ հաշվետվության 6-րդ էջի վերջին պարբերության վերջին նախադասությամբ ամրագրված է, որ ՀՀ վերահսկիչ պալատի կողմից «ստուգումը կատարվել է մրցույթի գնման առարկայի ծավալաթերթերի ծավալները ճշտելու և բոլոր տողերը ՀՀ քաղաքաշինության նախարարի 16.06.2008թ. թիվ 41-Ն հրամանով հաստատված՝ «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգին» համապատասխան հաշվարկելու միջոցով, և հանրագումարը ըստ յուրաքանչյուր օբյեկտի ամփոփվել է»: Ելնելով նշվածից՝ խնդրում ենք մեզ թղթային եղանակով տրամադրել հաշվետվությունում հիշատակված 9 օբյեկտի՝ ըստ նշված հրամանի մրցույթի գնման առարկայի ծավալաթերթերի ծավալները ճշտելու և բոլոր տողերով ամբողջական հաշվարկները:
2. Ընթացիկ հաշվետվության 11-րդ էջի 4-րդ մասով ամրագրվել է, որ «տեղադրեցությամբ պարզվել է նաև, որ ասֆալտապատման աշխատանքները անորակ են» և «օբյեկտի ներքին և արտաքին հարդարման աշխատանքներում օգտագործվել են ցածրորակ շինարարական նյութեր՝ պարուհաններ, դռներ, հատակի և երեսպատման սալիկներ, լամինատ, ներկեր, լվացարաններ, էլեկտրասնուցման սարքեր ու պարագաններ»: Այնուհետև դրան հաջորդող նախադասությամբ կատարվել է եզրահանգում այն մասին, որ վերակառուցված փորձագիտական կենտրոնը չի համապատասխանում ծրագրի շրջանակներում կառուցված այլ օբյեկտների որակին՝ «աշխատանքները կատարվել են ցածրորակ շինարարական նյութերով և թերություններով, որը անհրաժեշտ է վերացնել պայմանագրով նախատեսված 11,435.2 հազ. դրամ երաշխիքային գումարի հաշվին»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ օբյեկտի երաշխիքային ժամկետը վաղուց լրացել է, կապալառուի հանդեպ որոշակի և համարժեք պահանջներ ներկայացնելու համար խնդրում ենք մեզ տրամադրել ՀՀ վերահսկիչ


պալատի կողմից արձանագրություններով ամրագրված ասֆալտապատման աշխատանքների որակը որոշելու վերաբերյալ լաբորատոր հետազոտությունների արդյունքները, ինչպես նաև հաշվետվությունում նշված բոլոր անորակ շինարարական աշխատանքների նյութերի և աշխատանքների հիմնավորված բացվածքը՝ անորակության հատկանիշներով և ծավալներով հանդերձ:

3. Խնդրում ենք նաև մեզ տրամադրել ՀՀ վերահսկիչ պալատի կողմից շուկան ուսումնասիրելու արդյունքում և գնային համեմատությունների հիմքում դրված տերմինալների և աթոռների բոլոր մասնագրերի, տեխնիկական հատկորոշիչների, փաստաթղթային պահանջների և գնման այլ պայմանների համեմատական աղյուսակները՝ մեր կողմից գնված ապրանքների հետ համեմատությամբ:
4. Ընթացիկ հաշվետվության վերլուծությունների մասի 5 դրվագներով ծրագրի շրջանակներում կատարված ծախսերը գնահատվել են որպես «անարդյունավետ»: Խնդրում ենք պարզաբանել նման բոլոր նշված դեպքերում ՀՀ վերահսկիչ պալատը դրանք որակում է որպես խախտում թե ո՞չ: Եթե դրանք որակվում են որպես խախտում, ապա խնդրում ենք նշել տվյալ դրվագի կարգավորող իրավական ակտի ո՞ր պահանջներն են խախտվել և ու՞մ կողմից:
5. Ընթացիկ հաշվետվության 2 դրվագով ամրագրված է առաջարկություն՝ ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա գումարների մուտքը ապահովելու վերաբերյալ: Մասնավորապես, մեկ դրվագ վերաբերվում է «Փարվանապրոմ» ՍՊԸ օգտին փաստացի չվճարված գումարներին, իսկ մյուս դեպքը վերաբերվում է զուտ Հոլանդական դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորված պայմանագրի մի մասը վիճարկելուն: Այս կապակցությամբ խնդրում ենք պարզաբանել թե ի՞նչպես պետք է ՀՀ պետական բյուջե մուտքագրվի կապալառուին փաստացի չվճարված գումարները և, այս պահին, հաշվի չառնելով դրա վիճարկման փաստը, ի՞նչպես ՀՀ պետական բյուջե պետք է մուտքագրվի զուտ Հոլանդական դրամաշնորհով ֆինանսավորված պայմանագրի միջոցները, եթե ՀՀ և Համաշխարհային բանկի միջև կնքված միջազգային համաձայնագրի պահանջներով դրամաշնորհի չօգտագործված կամ ցանկացած անձի օգտին ցանկացած պատճառով ավել վճարված գումարները ենթակա են վերադարձման դրամաշնորհի հատկացնողին, տվյալ դեպքում Նիդերլանդների թագավորությանը:

Խնդրում ենք մեզ տրամադրել վերը նշված պարզաբանումները և հաշվետվության հիմքում դրված խախտումների /եթե այդպիսիք կան/, «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն կազմված արձանագրությունները և հաշվարկները հնարավորինս սեղմ ժամկետում: Կարծում ենք միայն նշված պարզաբանումները և փաստաթղթային հիմնավորումը մեզ տրամադրելու պարագայում մենք հնարավորություն կունենանք մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատ գրավոր տեղեկատվություն տրամադրել՝ հայտնաբերված խախտումները վերացնելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների մասին:

Հարգանքով՝

ՏՆՕՐԵՆ



Ա. ԹՈՒՆՅԱՆ



ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Դատաիրավական Ծրագրերի Իրականացման Գրասենյակ
Պետական հիմնարկ

MINISTRY OF JUSTICE OF THE REPUBLIC OF ARMENIA

Judicial Project Implementation Unit

State Institution

ՀՀ, Երևան, 0001, Թումանյան 21/1

21/1 Tumanyan St, Yerevan, 0001, Armenia

Հեռ./Phone: (+37410) 545684, Ֆաքս/Fax: (+37410) 545683

e-mail: director@judreform.com

14 մայիսի 2013թ. No. 03/132

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն Ի. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զաքարյան

«Դատաիրավական ԾԻԳ» պետական հիմնարկը 10.04.2013թ. թիվ 03/129 գրությամբ դիմել է ՀՀ վերահսկիչ պալատին՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի կողմից 28.03.2013թ. ընդունված թիվ 6/4 որոշման և դրան կից ընթացիկ հաշվետվության մեջ ամրագրված մի շարք եզրահանգումների և առաջարկությունների հիմքում դրված փաստաթղթեր ստանալու և հաշվետվությունում նշված դրվագների վերաբերյալ որոշակի պարզաբանում ստանալու խնդրանքով (տես կից գրության լուսապատճեն):

Տեղեկացնենք, որ մեկ ամսից ավել առաջ ներկայացված խնդրանքին ի պատասխան մինչ օրս մեզ որևէ պատասխան չի տրամադրվել: Միաժամանակ տեղեկացնենք, որ փաստացի նշված փաստաթղթերը և պարզաբանումները ողջամիտ ժամկետում մեզ չտրամադրելու հետևանքով մենք հնարավորություն չենք ունեցել մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատ գրավոր տեղեկատվություն տրամադրել՝ հայտնաբերված խախտումները վերացնելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների մասին:

Ելնելով վերոգրյալից, կրկին խնդրում ենք հնարավորինս սեղմ ժամկետում մեզ տրամադրել մեր 10.04.2013թ. թիվ 03/129 գրությամբ ամրագրված հարցերի շրջանակում պարզաբանումները և հաշվարկները, ինչպես նաև հաշվետվության հիմքում դրված խախտումների /եթե այդպիսիք կան/, «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն կազմված արձանագրությունները:

Առդիր՝ 2 թերթ:

Հարգանքով՝

ՏՆՕՐԵՆ

Ա. ԹՈՒՆՅԱՆ



THE WORLD BANK OFFICE
YEREVAN

ՀԱՄԱԿԱՐԱԿՈՒՄ ԱՄԵՐԻ
ԵՐԵՎԱՆԻ ԱՐԱՄԵՆԻԱ

9, G. Lousavorich Str.
Yerevan 0015, Armenia

Phone: (374) - 10 - 520 992
Fax: (374) - 10 - 521 787

Գ. Լուսավորիչի 9
Երևան 0015, Հայաստան

Հեռ. (374) - 10 - 520 992
Ֆաքս (374) - 10 - 521 787

Mr. Ishkhan Zakharyan
Chairman of the Chamber of Control
Republic of Armenia

May 13, 2013

WB- 99/13

Dear Mr. Zakharyan:

***Re.: Joint Discussion of Chamber of Control's Reports on the
World Bank Financed Projects***

In the frames of Country Portfolio Performance Review activity, our technical team has initiated desk review of 18 reports (posted on Chamber of Control's official website) produced by the Chamber of Control (COC) on the World Bank financed projects for the last three years.

We will shortly contact your office to schedule a meeting to share our observations regarding findings and recommendations presented in the above-mentioned reports. The observations and findings relate to the compliance with the World Bank Procurement Guidelines and Procedures.


Based on successful track record of our cooperation and taking into account the importance of our long-term partnership and the World Bank's commitment to the COC capacity building, we would like to propose using current opportunity for a joint discussion of our technical teams.

In particular case of Second Judicial Reform Project, our initial desk review, as well as series of implementation support missions and post reviews, did not reveal apparent non-compliance and violations, while according to the information on your website we understand that due to significant concerns related with the violation the COC audit report has been submitted to the office of the Prosecutor General. Since the Project is scheduled to close on June 30, 2013, we would like to have more technical discussion on your observations related to the compliance with the World Bank procurement rules and procedures to better prepare for project completion in order to avoid possible inconsistencies. The World Bank Project Implementation Completion Mission is planned for mid-June 2013. The Mission, inter alia, will further analyze your comments and recommendations from the efficiency perspective to reflect in the Implementation Completion Report. The approach for assessing the efficiency will be based on the projects results framework tracking the progress towards achievement of the Project Development Objectives.

Thank you for your commitment to our enhanced cooperation.

Sincerely,

Jean-Michel Flappi
Country Manager
World Bank Yerevan Office



cc: **Mr David Sargsyan, Minister of Finance**
Mr. Vahram Avanesyan, Minister of Economy
Mr. Vache Gabrielyan, Chief of Government Staff
Mr. Aghvan Hovsepyan, Prosecutor General
Mr. Frank Heemskerk, Executive Director for Armenia, World Bank
Mr. Henry Kerali, Regional Director, South Caucasus, World Bank



THE WORLD BANK OFFICE
YEREVAN

ՀԱՄԱՇԽԱՐԽԱՅԻՆ ԲԱՆԿԻ
ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

9, G. Lousavorich Str.
Yerevan 0015, Armenia

Գ. Լուսավորիչ 9
Երևան 0015, Հայաստան

Phone: (374) - 10 - 520 992
Fax: (374) - 10 - 521 787

Հեռ. (374) - 10 - 520 992
Ֆաքս (374) - 10 - 521 787

13 մայիսի, 2013 թ.

Հայաստանի Հանրապետության
Վերահսկիչ պալատի նախագահ
Պրն. Իշխան Զաքարյանին

***Թեմա՝ Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ ծրագրերի վերաբերյալ
վերահսկիչ պալատի հաշվետվությունների համատեղ քննարկում***

Հարգելի պրն. Զաքարյան

Երկրում ծրագրերի փաթեթի կատարողականի ուսումնասիրության աշխատանքի շրջանակում, մեր մասնագիտական թիմը նախաձեռնել է վերջին երեք տարիների կտրվածքով Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ ծրագրերի վերաբերյալ վերահսկիչ պալատի (ՎՊ) հրապարակած (վերահսկիչ պալատի պաշտոնական կայքէջում տեղադրված) 18 հաշվետվությունների վերլուծական ուսումնասիրությունը:

Մենք շուտով Ձեր գրասենյակ կդիմենք հանդիպում կազմակերպելու համար՝ վերոնշյալ հաշվետվություններում ներկայացված եզրակացությունների և առաջարկությունների վերաբերյալ մեր դիտարկումները ներկայացնելու նպատակով: Դիտարկումները և եզրակացությունները վերաբերում են Համաշխարհային բանկի գնումների ուղեցույցերին և ընթացակարգերին համապատասխանությանը:

Ելնելով մեր համագործակցության հաջողված փորձից և հաշվի առնելով մեր երկարատև գործընկերության կարևորությունը և ՎՊ-ի կարողությունների՝ զարգացման հարցում Համաշխարհային բանկի հանձնառությունը՝ կցանկանայինք ներկա հնարավորությունն օգտագործել մեր մասնագիտական թիմի հետ համատեղ քննարկման նպատակով:

Մասնավորապես՝ «Դատախիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրի» նախնական փաստաթղթային ուսումնասիրությունը, ինչպես նաև իրականացման աջակցության մի շարք առաքելությունները և հետդիտարկումները, չեն բացահայտել ակնհայտ անհամապատասխանություն կամ խախտումներ, մինչդեռ Ձեր կայքում տեղակայված տեղեկություններից հասկանում ենք, որ խախտումներով պայմանավորված լուրջ մտահոգությունների հետևանքով ՎՊ

վերահսկողության հաշվետվությունն ուղարկվել է գլխավոր դատախազություն: Քանի որ ծրագրի ավարտը նախատեսվում է ս.թ. հունիսի 30-ին, կցանկանայինք ավելի մասնագիտական տեսանկյունից քննարկել Ձեր դիտարկումները՝ կապված Համաշխարհային բանկի գնումների կանոններին և ընթացակարգերին համապատասխանության հետ՝ ավելի լավ նախապատրաստելով ծրագրի ավարտը, հնարավոր անհամապատասխանություններից խուսափելու նպատակով: Համաշխարհային բանկի ծրագրի ավարտի առաքելությունը նախատեսվում է իրականացնել 2013 թ. հունիսի կեսին: Առաքելությունը, այլ հարցերի թվում, կշարունակի արդյունավետության տեսանկյունից վերլուծել Ձեր դիտարկումներն ու առաջարկությունները՝ իրականացման ավարտի հաշվետվության մեջ արտացոլելու նպատակով: Արդյունավետության գնահատման մոտեցումը կհիմնվի ծրագրերի արդյունքների շրջանակի վրա՝ հետևելով ծրագրի զարգացման նպատակների ապահովման ուղղությամբ առաջընթացին:

Շնորհակալ ենք, որ հավատարիմ եք մեր համագործակցության ընդլայնմանը:

Հարգանքով՝

Ժան-Միշել Հապի
Համաշխարհային բանկի
Երևանի գրասենյակի ղեկավար

Կրկնօրինակը՝

ՀՀ ֆինանսների նախարար պրն. Դավիթ Սարգսյանին
ՀՀ Էկոնոմիկայի նախարար պրն. Վահրամ Ավանեսյանին
ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար պրն. Վաչե Գաբրիելյանին
ՀՀ գլխավոր դատախազ պրն. Ադվան Հովսեփյանին
Համաշխարհային բանկի՝ Հայաստանի գծով գործադիր տնօրեն պրն. Ֆրանկ Հիմսբրըքին
Համաշխարհային բանկի Հարավային Կովկասի տարածաշրջանային տնօրեն պրն. Հենրի Քերալին



ՆԱԽԱՐԱՐ

MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA

MINISTER

МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

МИНИСТР

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
 3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
 0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
 Էլ.փոստ /E-mail/ эл.почта: min_ecology@mnp.am
 Web page: www.mnp.am
 ☎ (374 10) 52 10 99
 📠 (374 10) 54 08 57

№

<< >> _____ 2013թ.

ՀՀ կառավարության
 աշխատակազմի ղեկավար
 պարոն Վ. Գաբրիելյանին

Հարգելի պարոն Գաբրիելյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2013 թվականի մայիսի 24-ի N 02/23.14/7210-13 և ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 23-ին կայացած նիստի N 20 արձանագրության 29.7/[156071]-13 և 29.7/[156074]-13 քաղվածքների հանձնարարականների՝ Ձեզ եմ ներկայացնում ՀՀ վերահսկիչ պալատի 2012 թվականի տարեկան հաշվետվությամբ ներկայացված բնապահպանական խնդիրների և ոլորտում արձանագրված խախտումների վերաբերյալ ՀՀ բնապահպանության նախարարության պարզաբանումներն իր իրավասությունների շրջանակներում:

Կենցաղային թափոնների տեղադրման համար բնապահպանական վճարների վճարման հարցերն ունեն օրենսդրական կարգավորման պահանջ, մասնավորապես հստակեցման խնդիր ունեն արտադրության և սպառման թափոնները շրջակա միջավայրում սահմանված կարգով տեղադրելու իրավահարաբերությունները:

Այդ նպատակով ՀՀ բնապահպանության նախարարությունում ստեղծվել է աշխատանքային խումբ՝ <<Թափոնների մասին>>, <<Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին>> ՀՀ օրենքների և <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի բացերը վեր հանելու համար:

2011-2012թթ. իր լիազորությունների սահմաններում Բնապահպանական պետական տեսչության կողմից ստուգում է իրականացվել թվով 14 կոմունալ տնտեսություններում: Կազմվել է 14 արձանագրություն, 14 պաշտոնատար անձ ենթարկվել է վարչական տույժի:

Ինչ վերաբերում է թափոնների գործածության համար սահմանված կարգով բնապահպանական վարչական վիճակագրություն վարելուն և հաշվետվությունների ներկայացման կարգի նկատմամբ ոչ պատշաճ հսկողություն իրականացնելուն, ապա Բնապահպանական պետական տեսչության տարածքային և կառուցվածքային բաժիններին հանձնարարվել է 2013թ.-ի աշխատանքների ընթացքում շտկել բոլոր բացթողումները:



Վերահսկիչ պալատի հաշվետվության մեջ նշված Նուբարաշենի աղբավայրում կենսագազի օգտահանման և էլեկտրաէներգիայի արտադրության հայ-ճապոնական ծրագրին վերաբերող խախտումը ՀՀ բնապահպանության նախարարության իրավասության շրջանակներում չէ: Հայաստանի Հանրապետությունից այդ Ծրագրի կողմ է հանդիսանում Երևանի քաղաքապետարանը:

Ինչ վերաբերվում է ՀՀ բնապահպանության նախարարության դիրքորոշմանը, ապա նախարարությունն ի սկզբանե կողմնակից է եղել ծրագրի ամբողջական իրականացմանը:

Հարգանքով՝



Ա.Հարությունյան

Ա. Ալեքսանդրյան
53 88 38



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 56-61-85. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Ձեռ. № 02/23.14/7210-13
2013-05-24

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱԶԵ ԳԱՐԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գաբրիելյան

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2013թ. մայիսի 24-ի N 02/23.14/7210-13 հանձնարարականի ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Վերահսկիչ պալատի խորհրդի 29.03.2013թ. թիվ 7/1 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Վերահսկիչ պալատի 2012 թվականի տարեկան հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերաբերյալ պարզաբանումների և բացատրությունների, ինչպես նաև արձանագրված խախտումների վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը:

Առդիր՝ 4 թերթ:

Հարգանքով՝

ՎԱՀՐԱՄ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013թ. մարտի 29-ի թիվ 7/1 որոշմամբ հաստատված ընթացիկ հաշվետվության վերաբերյալ

	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ և թերություններ	Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերաբերյալ պարզաբանումների և դրանց վերացման նպատակով ձեռնարկված քայլերի ու արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն	Կատարման ժամկետ
1.	«Աջակցություն ՓՄՁ սուբյեկտներին» ծրագիրն իրականացվել է թերություններով և խախտումներով: 2010թ. վարկային փաթեթից օգտված 30 սուբյեկտից գործում է 8-ը, 2011թ.՝ 17 սուբյեկտից՝ 8-ը, իսկ 2012թ. վարկավորված 130 սուբյեկտից 11-ն արդեն իսկ լուծարվել կամ դադարեցրել է գործունեությունը: Մի շարք դեպքերում վարկերն օգտագործվել են ոչ նպատակային, իսկ ֆինանսական աջակցությունը տրամադրվել է ոչ հավաստի ցուցանիշների հիման վրա, ֆինանսական աջակցության միջոցները բավարար չափով չեն նպաստել բիզնեսի ընդլայնմանն ու աշխատատեղերի ավելացմանը: Ռիսկային է նաև արդեն տրամադրված վարկային միջոցների վերադարձելիության խնդիրը, մասնավորապես ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՓՄՁ ԶԱԿ-ի միջոցով «Կոնսեր» ՍՊԸ-ին և «Վայք գրուպ» ՓԲԸ-ին հատկացված համապատասխանաբար՝ 395.000.0 և 164.000.0 հազ. դրամի ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարելու արդյունքում վերականգնվել է ընդամենը 85,825.1 հազ. դրամը:	«Սարգիս Ավետիսյան» Ա/Ձ-ի կողմից ստացված 2,000 հազ. ՀՀ դրամը ոչ նպատակային օգտագործելու կապակցությամբ ներկայումս Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից նախապատրաստվում են անհրաժեշտ փաստաթղթեր դատական կարգով գումարը վերադարձնելու նպատակով, «ԷՄ ԸՆԴ ԴԱՎ» ՍՊԸ-ի կողմից ստացված 2,700 հազ. ՀՀ դրամ գումարը դեռ նպատակին չի ծառայել, քանի որ առաջացել են խնդիրներ կապված լիցենզիայի ստացման հետ: Վարկը ստանալուց հետո մահացել է ՍՊԸ-ի հիմնադրի հայրը և քանի որ նրա անունով է եղել գործունեության համար նախատեսված տարածքը՝ առաջացել են խնդիրներ լիցենզիայի ստացման հետ կապված: Կտակը հիմնադրին անցնելուց հետո (ներկայումս ընթացքի մեջ է ժառանգի ճանաչման հարցը) գործարարը պարտավորվել է իրականացնել ծրագիրը: Նշենք նաև, որ ներկայումս շահառուն իրականացնում է վերանորոգման աշխատանքներ տվյալ տարածքում: 2011թվականի մարտին ՀՀ ֆինանսների նախարարության և Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի միջև կնքվել է գործակալության պայմանագիր, համաձայն որի ՀՀ ֆինանսների նախարարությունը իրականացնում է իրավաբանական գործողություններ՝ «Կոնսեր» ՍՊԸ-ի նկատմամբ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի պահանջի վերականգնման ուղղությամբ, որն էլ իր հերթին կուղղվի ՀՀ ֆինանսների նախարարության և Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի միջև կնքված՝ վարկային պայմանագրի մարմանը: Ս.թ. ապրիլին ՀՀ ֆինանսների նախարարության, «Վայք Գրուպ» ՓԲԸ-ի և Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի միջև կնքվել է Պահանջի իրավունքի զիջման մասին պայմանագիր, համաձայն որի «Վայք Գրուպ» ՓԲԸ-ի նկատմամբ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ունեցած 85.8 մլն ՀՀ դրամի պահանջի իրավունքը անցել է ՀՀ ֆինանսների նախարարությանը, ինչի արդյունքում «Վայք Գրուպ» ՓԲԸ-ի վարկային պարտավորության մնացորդի չափով պետք է նվազի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև 2009թվականին կնքված վարկային պայմանագրով սահմանված վարկի գումարի մնացորդը:	01.08.2013 01.08.2013

2.	ՀՀ հասարակական վայրերի զուգարաններով ապահովման հայեցակարգի շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարարության արտաքուցետային միջոցների հաշվին ձեռք բերված 2 բիո զուգարանները մինչ օրս չեն շահագործվում, որի հետևանքով կատարված 100,000.0 հազ. դրամի ծախսը անարդյունավետ է:	Զուգարաններից մեկը տեղադրված է Երևանի Սբ.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հարակից տարածքում և ներկայումս շահագործվում է: Երկրորդը տեղադրված է Տաթևում, ինչը տեխնիկական պատճառներով դեռևս չի շահագործվում՝ ներկայումս համապատասխան միջոցներ են ձեռնարկվում տեխնիկական թերությունները վերացնելու և այն շահագործելու համար:	25.12.2013
3.	ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը որակավորման պատշաճ վերահսկողություն չի իրականացրել զբոսաշրջության բնագավառում հյուրանոցային տնտեսության օբյեկտների նկատմամբ:	Ինքնագնահատման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2013 թվականի ընթացքում նախատեսվում է համապատասխան ճշտգրտումներ մտցնել պարբերական գնահատման գործընթացը կազմակերպելու և տեղում իրականացնելու ուղղությամբ: Միաժամանակ, ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է ««Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 18.03.2013թ. N 13-Ն օրենքը, որով արգելվել է հյուրանոցային տնտեսության օբյեկտն իր տեսակին չհամապատասխանող տեսակով, ինչպես նաև որակավորման կարգի նշաններին մոլորեցնելու աստիճանի նման նշաններ օգտագործելը, ներկայացնելը կամ գովազդելը: Օրենքով սահմանվել է նաև նշված պահանջների խախտման համար տուգանքի նշանակում՝ բազային տուրքի երկուհարյուրապատիկի չափով:	Մինչև տարեվերջ, պարբերական
4.	«Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից շուկան ուսումնասիրվել է կամայականորեն՝ առանց սահմանված կարգի և մեթոդական ցուցումների, իսկ ապրանքների կողմնորոշիչ գների սահմանման նպատակով տեղեկությունների հավաքագրման կարգը հաստատելուց հետո կողմնորոշիչ գները նույնպես որոշվել են առանց սահմանված ընթացակարգերի: Թողարկած տեղեկագրերում ընդհանրապես չի ներառվել աշխատանքների և ծառայությունների արժեքների վերաբերյալ տեղեկատվությունը: Բացարձակապես դուրս է մնացել նաև պետական կարիքների համար բոլոր ապրանքների մասով կողմնորոշիչ գների սահմանման բնագավառը:	ՀՀ կառավարության 15.12.2011թ. N 1768-Ն որոշմամբ «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման լիազորությունները վերապահվել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:	
5.	ՀՀ կառավարության կողմից 12.06.2008թ. նիստի N 23 արձանագրությամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու հայեցակարգին հավանություն տալու մասին» որոշումը:	Գյումրու տնտեսական զարգացման հիմնադրամի կողմից Գյումրու տեխնոպարկի ծրագրի իրականացման արդյունավետությունը չի կարող դիտարկվել Շիրակի մարզի Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելուն ուղղված՝ մեծածավալ ֆինանսական ներդրումներ պահանջող ծրագրի ներքո, այլ անհրաժեշտ է դիտարկել ՀՀ	

Համաձայն Հայեցակարգի Գյումրի տեխնոպարկում կներառվեն և կզարգանան հետևյալ ոլորտները՝ զբոսաշրջություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն (կառուցապատման և շինարարական ժամանակակից տեխնոլոգիաներ), նորաձևություն և տեքստիլ արդյունաբերություն, արվեստ, ոսկեգործություն, արհեստագործություն: Կառավարության 2008թ.-ի դեկտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 1463-Ն որոշմամբ հաստատված միջոցառումների 2-րդ կետով նախատեսված էր միջազգային չափանիշներին համապատասխան բիզնես-պլանի մշակում: Արդյունքում օտարերկրյա խորհրդատուի կողմից մշակվեց «Գյումրու տեխնոպարկ» ռազմավարական ուղեցույց և բիզնես պլան՝ փաստաթուղթը (Բիզնես-պլան): Ըստ Բիզնես-պլանի Գյումրու տեխնոքաղաքի համար ձեռներերության զարգացման ռազմավարության շրջանակներում իրականացվելիք հիմնական ծրագրերն են. - Արվեստներ /արհեստներ, միկրոձեռներեցություն, կրթություն, որի արդյունքում պետք է Կուլմայրի թաղամասում վերականգնել նախկին փոստային գրասենյակի և մանկավարժական ինստիտուտի շենքերը՝ որպես նպատակային նշանակության փոքր գրասենյակներ արվեստների, արհեստների և միկրոձեռնարկությունների, ինչպես նաև ապրելու/աշխատելու կենսագործունեության համար: Բացի այդ, դիտարկել կրթական գործունեությունը վերսկսելու հնարավորությունը: - Բիզնես-պարկ, լոգիստիկայի կենտրոն, ազատ գոտու կարգավիճակ, որի արդյունքում հղկող հաստոցների գործարանի շենքը պետք է քանդել կամ փոխակերպել արդյունաբերության և բաշխման գործունեության համար օգտագործվող ժամանակակից միավորների: - Տեխնոլոգիական պարկ, որի արդյունքում Պոլիտեխնիկ ինստիտուտի նախկին տարածքում պետք է պատրաստել և իրականացնել կրթական և ձեռներեցության ինտեգրված գոտու մաստեր-	կառավարության կողմից հաստատված՝ Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման ծրագրերով նախատեսված և Գյումրիում տեխնոպարկի ստեղծմանն ուղղված կոնկրետ ուղղությունների, նպատակների և միջոցառումների համատեքստում: ՀՀ կառավարության կողմից հաստատված Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման 2010, 2011 և 2012 թվականների ծրագրերին, ապա վերջիններս ներառում են հստակ ձևակերպված ուղղություններ և նպատակներ, որոնց համապատասխան՝ սահմանվել և պետության աջակցությամբ իրականացվել են կոնկրետ միջոցառումներ: Հարկ է նշել, որ նշված միջոցառումները գլխավորապես ուղղված էին Գյումրի քաղաքում լաբորատորիաների հիմնմանը և տեխնոլոգիական բարձրորակ կադրերի պատրաստմանը: Նշված մոտեցումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Գյումրիում գրեթե բացակայում էին SCS ոլորտում մասնագիտացված երիտասարդ, բարձր որակավորում ունեցող կադրերը, մինչդեռ միջազգային և տեղական ընկերությունների կողմից Գյումրիում գործունեություն ծավալելու և մշտական գրասենյակներ/ ներկայացուցչություններ հիմնելու համար կարևորագույն նախապայման է հանդիսանում տեղում բարձրորակ կադրերի առկայությունը: Միաժամանակ, 2012թ. նոյեմբերի 8-ի N1405-Ն ՀՀ կառավարության որոշմամբ Գյումրու տնտեսական զարգացման հիմնադրամը վերանվանվել է Արդյունաբերության զարգացման հիմնադրամի, որի նպատակներն ուղղված են երկարաժամկետ հեռանկարում տնտեսական աճի նոր շարժիչ ուղիների ձևավորման ապահովելուն՝ կազմակերպությունների, արտահանման պոտենցիալ ունեցող ոլորտների և բիզնես միջավայրի արդիականացման և միջազգային մրցունակության բարձրացմանն ուղղված նախաձեռնությունների իրականացման, ինչպես նաև Գյումրիում ինովացիոն համակարգի ձևավորման միջոցով:	
---	---	--

պլան: Տվյալ վայր տեղափոխել Պետական ճարտարագիտական համալսարանը: Կառուցել ինկուբատոր, տեխնոլոգիական միավորներ: Ընդհանուր առմամբ ծրագրի վերջնանպատակը ներդրումների ներգրավումն է, ձեռնարկությունների զարգացման խթանումը, աշխատատեղերի ստեղծումը և քաղաքի ու վերջինիս բնակիչների հարստացումը: Վերը նշված նպատակներին հասնելու համար պահանջվում է իրականացնել կապիտալ ներդրումներ (շինարարական աշխատանքներ), որի ծախսերը համաձայն բիզնես-պլանի մոտավորապես կկազմեն 49-53 միլիոն ԱՄՆ դոլար: Կառավարության որոշումներով 2008-2012 թվականներին Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման ծրագրով նախատեսված են եղել մի շարք միջոցառումներ, որոնց արդյունքում ստեղծվել են 2 լաբորատորիաներ, որոնք իրականացնում են վերապատրաստումներ, ստեղծվել են 5 ընկերություններ որոնք աշխատում են վնասով, ունեն 10 վարձու աշխատողներ և ապահովում են փոքր հասույթներ: Արդյունքում պետական բյուջեից 2008-2012 թվականներին ծախսվել է 430.6 մլն դրամ նախատեսված 689 մլն. դրամի փոխարեն: Ուշագրավ է այն, որ դեռևս հայտնի չէ, թե վերջիվերջո որքան է տևելու Տեխնոպարկի ձևավորման ծրագիրը, այսինքն՝ չկա նախանշված ծրագրի ավարտ, չկա քայլերի հաջորդականություն, ակնկալվող արդյունքները չափելի չեն, պատասխանատվության շրջանակը նույնպես հստակ չէ: Հնարավոր ռիսկերի առումով ծրագիրը գնահատված չէ, այսինքն՝ ռիսկերի կառավարումը նույնպես հստակ չէ: Ամեն ինչ առավել քան անորոշ է:		
--	--	--



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Ն Ա Ն Ա Ր Ա Ր

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 53 04
Ֆաքս (+374 10) 52 42 82
Էլ. փոստ: minister@minfin.am
Վեբ կայք: www.minfin.am

_____ № _____
Ձեր № _____

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
պարոն Վաչե Գաբրիելյանին

Հարգելի պարոն Գաբրիելյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 24.05.2013թ. N 02/23.14/7210-13 հանձնարարականի՝
ուսումնասիրելով ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 29.03.2013թ. թիվ 7/1 որոշմամբ հաստատված ՀՀ
վերահսկիչ պալատի 2012 թվականի տարեկան հաշվետվությունը, հայտնում ենք հետևյալը.

հաշվետվության 2.3 կետի վերաբերյալ.

1. Գնման առարկաների առավելագույն գների վերաբերյալ

ՀՀ վերահսկիչ պալատի 2012թ. տարեկան հաշվետվության համաձայն ձեռք բերվող ապրանքների,
աշխատանքների կամ ծառայությունների գները տվյալ պահին շուկայում գործող միջին գներից էապես
շեղված են: Այս կապակցությամբ տեղեկացնում ենք, որ ՀՀ կառավարության 18 ապրիլի 2013թ. թիվ N
441-Ն ՀՀ սահմանադրությամբ և ՀՀ օրենքներով նախատեսված պետական կառավարման
մարմինների և պետության հիմնարկների կողմից ձեռք բերվող որոշ ապրանքատեսակների և
առավելագույն գները հաստատելու մասին>> որոշման համաձայն պետական գնումներ իրականացնող
մարմիններն իրենց գնումները պետք է իրականացնեն միայն արդեն նախանշված գների վերին շեմից
ոչ բարձր պայմաններում:

2. Էլեկտրոնային գնումների համակարգի հետ կապված խնդիրների վերաբերյալ.

Էլեկտրոնային գնումների համակարգի ոչ լիարժեք գործելու վերաբերյալ, տեղեկացնում ենք, որ 2011թ.-ին ձեռքբերված էլ. գնումների ծրագրային ապահովման (այսուհետ՝ ARMEPS) մեջ մինչ օրս թերությունների առկայությունը և ժամանակին դրանց չվերացվելը, հիմնականում հետևանք է այն հանգամանքի, որ ծրագրային ապահովումը ընդունելուց հետո, երաշխիքային ժամկետում, ՀՀ ֆինանսների նախարարությունը չի օգտվել պայմանագրով նախատեսված երաշխիքային սպասարկման և ծրագիրը մշակած կազմակերպությանը (European Dynamics, այսուհետ՝ ED) առկա թերությունները շտկելու պահանջը ներկայացնելու իրավունքից: Նշված պայմանագրով սահմանվել է 1 տարի երաշխիքային ժամկետ, այն է՝ 25.02.11-25.02.12թթ., որի ընթացքում բացահայտված թերությունները պետք է ED-ի կողմից շտկվեին անվճար: Որպես այդ պարտավորության ապահովման երաշխիք ED-ի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացվել էր բանկային երաշխիք պայմանագրի գնի 2,5 տոկոսի չափով:

Հնարավոր թերությունների շտկման վերը նշված մեխանիզմը նախատեսվել էր այն պատճառով, որ ծարգրի ընդունումը կատարվել էր թեստային փորձարկմամբ, ինչը չի բացառում, որ գործնական կիրառության ժամանակ կարող էին բացահայտվել նոր խնդիրներ կամ թերացումներ, որոնք և պետք է կարգավորվեին ED-ի կողմից՝ անվճար:

Այժմ ՀՀ ֆինանսների նախարարությունը ARMEPS համակարգի զարգացման գործընթացում որդեգրել է ամբողջությամբ թափանցիկ և հրապարակային աշխատառճը, որպեսզի բոլոր շահագրգիռ կառույցները տեղեկացված լինեն և ըստ իրենց անհրաժեշտության և հետաքրքրվածության կատարեն համապատասխան գործողություններ:

Ներկայումս գործող էլ. գնումների համակարգի խնդիրների լուծման լավագույն եղանակ է՝ համակարգը մշակող կազմակերպության կողմից ներկայումս գործող համակարգի փոխարինումը ԵՄ չափանիշներին համապատասխանող մեկ այլ համակարգով:

Էլ. գնումների գործող ծրագրային ապահովման տեխնիկական աուդիտը և դրա հետագա զարգացման հնարավորությունների ուսումնասիրումը կատարվել է Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկի (ԵՎԶԲ) փորձագետների կողմից, որի արդյունքում կազմվել է <<Ճանապարհային քարտեզ>>: Նշված փաստաթուղթը առաջարկում է այլ լուծում:

ԵՎԶԲ-ն գտնում է, որ ժամանակի և ֆինանսական միջոցների արդյունավետության առումով լավագույն տարբերակը առկա ծրագրային ապահովման արդիականացումն է, ինչը բնականաբար չի ենթադրում մեկ այլ համակարգի ձեռքբերում:

Ծրագրային ապահովման արդիականացման արդյունքում պետք է լուծվեն նաև ծրագրում ներկայումս առկա խնդիրները, ինչպես նաև առկա բազայի հիման վրա պետք է ապահովվի համակարգի հետագա զարգացումը: Այս կապակցությամբ առկա է նաև ԵՎԶԲ-ի գրավոր հաստատումը:

Այսինքն՝ գործող համակարգը չպետք է փոխարինվի մեկ այլ համակարգով, այլ պետք է դրա արդիականացման միջոցով լուծել ծրագրում առկա խնդիրները և զարգացնել այն, նպատակ հետապնդելով համակարգը համապատասխանեցնել ԵՄ չափանիշներին: Համակարգի փոխարինումը նորով առավել ծախսատար և ժամանակատար է:

Միաժամանակ մշակվում է էլ. գնումների ծրագրային ապահովման նոր տեխնիկական առաջադրանքը /TOR/, որում որպես պարտադիր պայման ընդգրկվելու է նաև ծրագրի բանալիների /կոդերի/ ձեռքբերումը:

3. Պարզվիրաբույնների կողմից գնումների մասին ՀՀ օրենսդրության խախտումների վերաբերյալ.

Այս հարցի կապակցությամբ հայտնում ենք, որ ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների նյութերի հետ ծանոթանալուց հետո կձեռնարկվեն համապատասխան միջոցներ նման խախտումները վերացնելու և չկրկնվելու ուղղությամբ:

4. Համաշխարհային բանկի կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ.

ՀՀ կառավարության 25.03.2010թ. <Հայաստանի Հանրապետության գանձապետական համակարգի միջոցով օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների շրջանառման կարգը հաստատելու մասին> թիվ 324-Ն որոշմամբ հաստատված կարգի 15-րդ կետի համաձայն՝ հաշիվների սպասարկման շրջանակում Հայաստանի Հանրապետության գանձապետարանը ԾԻԳ-երի ֆինանսական միջոցների նկատմամբ

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված նախնական հսկողության գործառույթներ չի իրականացնում:

Միջազգային համաձայնագրերով տրամադրվող բյուջետային միջոցների նկատմամբ ՀՀ գանձապետարանին նախնական հսկողության գործառույթների իրականացման լիազորության վերապահման հարցի հետ կապված քննարկումները շարունակվում են, և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ համաձայնություն ձեռք բերելուց հետո, նախատեսվում է, որ ՀՀ կառավարության 25.03.2010թ. թիվ 324-Ն որոշմամբ հաստատված կարգի մեջ կկատարվի համապատասխան փոփոխություն, ինչի արդյունքում ԾԻԳ-երի համար նույնպես կկիրառվեն նախնական հսկողության ընթացակարգերը:

հաշվետվության 2.4 կետի վերաբերյալ.

Կազմակերպության կողմից ապրանքների կողմնորոշիչ գների սահմանման նպատակով տեղեկությունները հավաքագրվել են ՀՀ կառավարության 26.05.2011թ. N 740-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն: Իսկ ապրանքների կողմնորոշիչ գների սահմանման գործընթացը կանոնակարգելու նպատակով՝ մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել <Պետական կարիքների համար իրականացվող կապիտալ ծախսերի հաշվարկի հիմքում դրվող ապրանքատեսակների կողմնորոշիչ գների և շինարարության ոլորտում գների ինդեքսների հաշվարկման կարգը հաստատելու մասին> ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը ընդունվել է ՀՀ կառավարության 25.04.13 թ. նիստում /ՀՀ կառավարության 25.04.13թ. N 472-Ն որոշում/:

Պետական կարիքների համար այլ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքների վերաբերյալ տեղեկատվություն հրապարակելու, ինչպես նաև գնագոյացման արդյունավետության և իրատեսության ապահովման նպատակով, հայտնում են, որ իրականացվել են աշխատանքներ պետական կարիքների համար կազմակերպության կողմից այլ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գների ուսումնասիրման գործառույթներ իրականացնելու վերաբերյալ: Մասնավորապես, սոցիալական փաթեթի շրջանակում մատուցվող բժշկական ծառայությունների գների և պետական կարիքների համար համեմատաբար մեծ ծախսեր առաջացնող այլ ապրանքների գների պարբերաբար ուսումնասիրության նպատակով՝ ՀՀ կառավարության կողմից ընդունվել են 27.12.12 թ.

<Սոցիալական փաթեթի առողջության ապահովագրության ծառայության բազային փաթեթի մեջ մտնող հիմնական բժշկական ծառայությունների և դեղերի կողմնորոշիչ գները կարգավորող միջգերատեսչական հանձնաժողովը ստեղծելու, հանձնաժողովի կազմը, գործունեության կարգը և բազային փաթեթի շրջանակներում բժշկական ծառայությունների մատուցման մասին պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին> N 1692-Ն, 18.04.13թ. <<< կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին> N 372-Ն և 18.04.13թ. <<< Սահմանադրությամբ և << օրենքներով նախատեսված պետական կառավարման մարմինների և պետության հիմնարկների (այսուհետ՝ պատվիրատու) կողմից ձեռք բերվող որոշ ապրանքատեսակների տեխնիկական քննությամբ ու առավելագույն գները սահմանելու մասին> N 441-Ն որոշումները: Ներկայումս քննարկվում են սոցիալական փաթեթի շրջանակում մատուցվող բժշկական ծառայությունների և պետական կարիքների համար համեմատաբար մեծ ծախսեր առաջացնող այլ ապրանքների առավելագույն գների պարբերաբար ուսումնասիրման և սահմանման մեթոդաբանությունները, որոնք սահմանված կարգով կներկայացվեն << կառավարության քննարկմանը:

Հարգանքով՝



Դավիթ Սարգսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0041 Երևան, Հայաստանի Հանրապետություն
Էրեբունի փողոց, 12

Հեռ./ֆաքս՝ (+374 10) 45 09 60
Վեբ կայք՝ www.ssfs.am
Էլ. փոստ՝ head@ssfs.am

N _____ / _____ 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2013 թվականի
մայիսի 24-ի N 02/23.14/7210-13 հանձնարարականի

Հարգելի պարոն Գաբրիելյան

Ձեզ է ներկայացվում ՀՀ վերահսկիչ պալատի 2012 թվականի տարեկան հաշվետվությամբ արձանագրված որոշ խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև դրանց վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցների մասին տեղեկատվությունը՝

1. Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև պարենային ապրանքների արտահանման ու ներմուծման կարգավորման հարցի ուղղությամբ ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ծառայություն) կողմից ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Կենդանիների, կենդանական ծագում ունեցող մթերքի, հումքի, կերերի, լրացակերերի, կերային հավելումների, սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումների ներմուծման, արտահանման, հանրապետության տարածքում փոխադրման համար անասնաբուժական ուղեկցող փաստաթղթեր և անվտանգության սերտիֆիկատներ տալու կարգը, անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի ու անվտանգության սերտիֆիկատների ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի N1241-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1499-Ն որոշման մեջ կատարվել է լրացում, որով ավելացվել է կետ՝ Հայաստանի Հանրապետությունից Մաքսային միության մաքսային տարածք արտահանվող՝ ենթահսկման բեռների միասնական սերտիֆիկատների ձևերի պահանջի և այն հաստատելու մասին:

Հայաստանի Հանրապետությունից Մաքսային միության մաքսային տարածք արտահանվող՝ անասնաբուժական ենթահսկման բեռների միասնական անասնաբուժական սերտիֆիկատների ձևերը՝ թվով 40 ձև, ներկայացվել են ռուսական կողմին և մինչ օրս արձագանք չի ստացվել: Համաձայնեցումից հետո Հայաստանի Հանրապետությունից Մաքսային միության մաքսային տարածք արտահանվող ենթահսկման բեռներն ուղեկցվելու են Մաքսային միության համար ընդունելի ձևերով: Հարցը նաև քննարկվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ներկայացուցիչների հետ ս/թ մայիսի 24-ին կայացած հանդիպման ժամանակ:

2. Ինչ վերաբերվում է Ռուսաստանի Դաշնությունից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող պարենային ապրանքների լաբորատոր փորձաքննության ենթարկելու հարցին, ապա հայտնում եմ, որ ՀՀ կառավարության 2013 թվականի փետրվարի 21-ի N 218-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետություն ներմուծվող սննդամթերքի ռիսկայնության հիման վրա հսկողության մեթոդաբանությունը: Ներկայումս <<<< կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1442-Ն և N 1499-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծերն ուղարկվել են շահագրգիռ մարմիններին կարծիքի: Վերոնշյալ նախագծերն ընդունվելու դեպքում պարենային ապրանքների ներմուծման ժամանակ կկիրառվի ռիսկայնության վրա հիմնված հսկողության մեթոդաբանությունը, որով էլ սահմանված են լաբորատոր փորձաքննությունների իրականացման դեպքերը:

3. 2011-2012 թվականներին Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն ձուկ, ձկնամթերք, խեցգետին, կաթ, կաթնամթերք, միս, մսամթերք արտահանելու թույլտվություն ստանալու նպատակով ՀՀ ծառայությունը սահմանված կարգով դիմել է Ռուսաստանի Դաշնության անասնաբուժական և բուսասանիտարական հսկողության դաշնային ծառայությանը (այսուհետ՝ Դաշնային ծառայություն): 2012 թվականի սեպտեմբերի 14-ին ձուկ, ձկնամթերք, խեցգետին արտահանելու ցանկություն հայտնած թվով 19-ը ձեռնարկություններից 5-ը գրանցվել են Ռուսաստանի Դաշնություն ձուկ, ձկնամթերք, խեցգետին արտահանման թույլտվություն ունեցող հայկական ընկերությունների ցանկում:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ 2013 թվականին Դաշնային ծառայության կողմից ստացվել է գրություն համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունից ձուկ, ձկնամթերք և այլ հիդրոբիոնտներ ՌԴ արտահանելու համապատասխան թույլտվություն ստանալու համար ռուսական կողմն արտագնա տեսչական ստուգումներ հավանաբար կնախատեսի 2013 թվականի երկրորդ կիսամյակում:

Հայաստանի Հանրապետությունից ձուկ, ձկնամթերք և այլ հիդրոբիոնտներ Ռուսաստանի Դաշնություն արտահանելու համապատասխան թույլտվություն ստանալու գործընթացի համար ս/թ մայիսի 22-ի Դաշնային ծառայության ղեկավարի տեղակալ՝ Ե.Նեպոկլոնովի գրությամբ առաջարկվել է Մաքսային միության մասնագետների կողմից աուդիտի ենթարկել անասնաբուժական հսկողություն իրականացնող լիազոր մարմնի՝ ՀՀ

ծառայության՝ վերահսկողության համակարգը: Ներկայումս ՀՀ ծառայության կողմից նախապատրաստվում է պատասխան՝ աուդիտի անցկացման ժամկետների վերաբերյալ:

4. ՀՀ ծառայության պետի և Դաշնային ծառայության ղեկավարի տեղակալի միջև նախնական պայմանավորվածության համաձայն, երկու երկրների միջև առևտրաշրջանառության ծավալների մեծացման և արտահանվող պարենային ապրանքների անվտանգության ապահովման երաշխիքների ամրապնդման և փոխվստահության նպատակով ռուսական կողմից ներկայացվել է ՀՀ անասնաբուժական և անասնաբուժասանիտարական լիազոր մարմնի գործունեության գնահատման հարցաթերթ, որի հիման վրա կազմվել է ամփոփ փաստաթուղթ և ս/թ ապրիլի 3-ին ՀՀ ԱԳ նախարարության միջոցով ներկայացվել է ռուսական կողմին:

5. Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկայում ՌԴ, ք.Մոսկվայում ՀՀ ծառայության պետ՝ Ա. Բախչագուլյանի և Դաշնային ծառայության ղեկավար՝ Ս.Դանկվերտի հանդիպման վերաբերյալ, որի օրակարգում կլինեն վերոնշյալ հարցերը և խնդիրները: Ներկայումս սպասվում է ռուսական կողմի պատասխանը՝ հանդիպման օրվա և վայրի վերաբերյալ:

6. Միաժամանակ հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է 2012 թվականի մայիսի 30-ին ստորագրված «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ բույսերի կարանտինի հարցերով համակարգող խորհրդի ստեղծման մասին» համաձայնագրին միացած երկիր, իսկ 2012 թվականի դեկտեմբերի 7-ին Ռուսաստանի Դաշնությունում կայացած բույսերի կարանտինի հարցերով ԱՊՀ անդամ-երկրների համակարգող խորհրդի անդրանիկ նիստի ժամանակ նախագահ է ընտրվել Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը, որից հետո էլ ավելի է խորացել երկու երկրների միջև բուսասանիտարիայի բնագավառում համագործակցությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կատ. Սահմանային հսկիչ կետերի
համակարգման բաժին

Հեռ. 49 91 83



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

« _____ 20 թ.

N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԾԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱԶԵ ԳԱՐԻԵԼՅԱՆԻՆ

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2013 թվականի
մայիսի 24-ի N 02/23.14/7210-13 հանձնարարականի

Հարգելի պարոն Գաբրիելյան,

Ներկայացվում է ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական
ծառայության կողմից տրամադրված տեղեկատվությունը՝ ՀՀ վերահսկիչ պալատի 2012
թվականի տարեկան հաշվետվությամբ արձանագրված որոշ խնդիրների, ինչպես նաև
դրանց վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ:

Առդիր՝ 3 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՍԵՐԳՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

կատարող՝
սննդամթերքի անվտանգության վարչության եվրամիության
օրենսդրության մոտարկման բաժնի պետ Մ.Խաչատրյան
հեռ. 29-74-34



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0041 Երևան, Հայաստանի Հանրապետություն
Էրեբունի փողոց, 12

Հեռ./ֆաքս՝ (+374 10) 45 09 60

Վեբ կայք՝ www.ssfs.am

Էլ. փոստ՝ head@ssfs.am

N _____ / _____ 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 2013 թվականի
մայիսի 29-ի N ՍԿ/ԱՇ-1/2631-13 գրության

Հարգելի պարոն նախարար

Ձեզ է ներկայացվում ՀՀ վերահսկիչ պալատի 2012 թվականի տարեկան հաշվետվությամբ արձանագրված որոշ խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև դրանց վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցների մասին տեղեկատվությունը՝

1. Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև պարենային ապրանքների արտահանման ու ներմուծման կարգավորման հարցի ուղղությամբ ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ծառայություն) կողմից ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Կենդանիների, կենդանական ծագում ունեցող մթերքի, հումքի, կերերի, լրացակերերի, կերային հավելումների, սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումների ներմուծման, արտահանման, հանրապետության տարածքում փոխադրման համար անասնաբուժական ուղեկցող փաստաթղթեր և անվտանգության սերտիֆիկատներ տալու կարգը, անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի ու անվտանգության սերտիֆիկատների ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի N1241-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1499-Ն որոշման մեջ կատարվել է լրացում, որով ավելացվել է կետ՝ Հայաստանի Հանրապետությունից Մաքսային միության մաքսային տարածք արտահանվող՝ ենթահսկման բեռների միասնական սերտիֆիկատների ձևերի պահանջի և այն հաստատելու մասին:

Հայաստանի Հանրապետությունից Մաքսային միության մաքսային տարածք արտահանվող՝ անասնաբուժական ենթահսկման բեռների միասնական անասնաբուժական սերտիֆիկատների ձևերը՝ թվով 40 ձև, ներկայացվել են ռուսական կողմին և մինչ օրս արձագանք չի ստացվել: Համաձայնեցումից հետո Հայաստանի Հանրապետությունից Մաքսային միության մաքսային տարածք արտահանվող ենթահսկման բեռներն ուղեկցվելու են Մաքսային միության համար ընդունելի ձևերով: Հարցը նաև քննարկվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ներկայացուցիչների հետ ս/թ մայիսի 24-ին կայացած հանդիպման ժամանակ:

2. Ինչ վերաբերվում է Ռուսաստանի Դաշնությունից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող պարենային ապրանքների լաբորատոր փորձաքննության ենթարկելու հարցին, ապա հայտնում եմ, որ ՀՀ կառավարության 2013 թվականի փետրվարի 21-ի N 218-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետություն ներմուծվող սննդամթերքի ռիսկայնության հիման վրա հսկողության մեթոդաբանությունը: Ներկայումս <<<< կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1442-Ն և N 1499-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծերն ուղարկվել են շահագրգիռ մարմիններին կարծիքի: Վերոնշյալ նախագծերն ընդունվելու դեպքում պարենային ապրանքների ներմուծման ժամանակ կկիրառվի ռիսկայնության վրա հիմնված հսկողության մեթոդաբանությունը, որով էլ սահմանված են լաբորատոր փորձաքննությունների իրականացման դեպքերը:

3. 2011-2012 թվականներին Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն ձուկ, ձկնամթերք, խեցգետին, կաթ, կաթնամթերք, միս, մսամթերք արտահանելու թույլտվություն ստանալու նպատակով ՀՀ ծառայությունը սահմանված կարգով դիմել է Ռուսաստանի Դաշնության անասնաբուժական և բուսասանիտարական հսկողության դաշնային ծառայությանը (այսուհետ՝ Դաշնային ծառայություն): 2012 թվականի սեպտեմբերի 14-ին ձուկ, ձկնամթերք, խեցգետին արտահանելու ցանկություն հայտնած թվով 19-ը ձեռնարկություններից 5-ը գրանցվել են Ռուսաստանի Դաշնություն ձուկ, ձկնամթերք, խեցգետին արտահանման թույլտվություն ունեցող հայկական ընկերությունների ցանկում:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ 2013 թվականին Դաշնային ծառայության կողմից ստացվել է գրություն համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունից ձուկ, ձկնամթերք և այլ հիդրոբիոնտներ ՌԴ արտահանելու համապատասխան թույլտվություն ստանալու համար ռուսական կողմն արտագնա տեսչական ստուգումներ հավանաբար կնախատեսի 2013 թվականի երկրորդ կիսամյակում:

Հայաստանի Հանրապետությունից ձուկ, ձկնամթերք և այլ հիդրոբիոնտներ Ռուսաստանի Դաշնություն արտահանելու համապատասխան թույլտվություն ստանալու գործընթացի համար ս/թ մայիսի 22-ի Դաշնային ծառայության ղեկավարի տեղակալ՝ Ե.Նեպոկլոնովի գրությամբ առաջարկվել է Մաքսային միության մասնագետների կողմից աուդիտի ենթարկել անասնաբուժական հսկողություն իրականացնող լիազոր մարմնի՝ ՀՀ

ծառայության՝ վերահսկողության համակարգը: Ներկայումս ՀՀ ծառայության կողմից նախապատրաստվում է պատասխան՝ աուդիտի անցկացման ժամկետների վերաբերյալ:

4. ՀՀ ծառայության պետի և Դաշնային ծառայության ղեկավարի տեղակալի միջև նախնական պայմանավորվածության համաձայն, երկու երկրների միջև առևտրաշրջանառության ծավալների մեծացման և արտահանվող պարենային ապրանքների անվտանգության ապահովման երաշխիքների ամրապնդման և փոխվստահության նպատակով ռուսական կողմից ներկայացվել է ՀՀ անասնաբուժական և անասնաբուժասանիտարական լիազոր մարմնի գործունեության գնահատման հարցաթերթ, որի հիման վրա կազմվել է ամփոփ փաստաթուղթ և ս/թ ապրիլի 3-ին ՀՀ ԱԳ նախարարության միջոցով ներկայացվել է ռուսական կողմին:

5. Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկայում ՌԴ, ք.Մոսկվայում ՀՀ ծառայության պետ՝ Ա. Բախչագուլյանի և Դաշնային ծառայության ղեկավար՝ Ս.Դանկվերտի հանդիպման վերաբերյալ, որի օրակարգում կլինեն վերոնշյալ հարցերը և խնդիրները: Ներկայումս սպասվում է ռուսական կողմի պատասխանը՝ հանդիպման օրվա և վայրի վերաբերյալ:

6. Միաժամանակ հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է 2012 թվականի մայիսի 30-ին ստորագրված «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ բույսերի կարանտինի հարցերով համակարգող խորհրդի ստեղծման մասին» համաձայնագրին միացած երկիր, իսկ 2012 թվականի դեկտեմբերի 7-ին Ռուսաստանի Դաշնությունում կայացած բույսերի կարանտինի հարցերով ԱՊՀ անդամ-երկրների համակարգող խորհրդի անդրանիկ նիստի ժամանակ նախագահ է ընտրվել Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը, որից հետո էլ ավելի է խորացել երկու երկրների միջև բուսասանիտարիայի բնագավառում համագործակցությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կատ. Սահմանային հսկիչ կետերի
համակարգման բաժին

Հեռ. 49 91 83

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

МИНИСТР

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

MINISTER

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел.: 52 66 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: minister@edu.am, www.edu.am

N----- "-----2013թ.

Հայաստանի Հանրապետության

վարչապետ

պրն. Տ. Սարգսյանին

Ի կատարումն ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի
2013 թվականի մայիսի 24-ի թիվ 02/23.14/7210-13
գրությունով տրված ՀՀ վարչապետի հանձնարարականի

Մեծարգո վարչապետ.

Ներկայացնում եմ ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013 թվականի մարտի 29-ի
թիվ 7/1 որոշումով հաստատված 2012 թվականի տարեկան հաշվետվությամբ
արձանագրված խախտումների վերաբերյալ պարզաբանումների և բացատրությունների,
ինչպես նաև արձանագրված խախտումների վերացման ուղղությամբ ձեռնարկված
միջոցների մասին տեղեկատվություն (կցվում է):

Հարգանքով՝

Ա. Աշոտյան

Բացատրություն

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013 թվականի մարտի 29-ի թիվ 7/1 որոշումով հաստատված հաշվետվության վերաբերյալ

ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումները, դրանց համապատասխան մարմնի կողմից ընդունված կամ չընդունված լինելը, արձանագրված այն խախտումները, որոնք վերացվել են ձեռնարկված միջոցառումների արդյունքում, ինչպես նաև տեղեկատվություն այն խախտումների վերացման ընթացքի վերաբերյալ, որոնք դեռ առկա են

«Համակարգչային և ինտերնետային կապի ծառայություններ» ծրագիր

	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ և թերություններ	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ առարկություններ և բացատրություններ (ՀՀ վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշում)	Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման նպատակով ձեռնարկված միջոցառումների և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն
1.	459 դպրոց մեկուկես ամիս չեն սպասարկվել, որի արդյունքում այդ նպատակով նախահաշվով նախատեսված միջոցներից 31,915.1 հազ. դրամը ենթակա է փոխանցման պետական բյուջե:	չկան	Որոշման մեջ նշված 31,915.1 հազ. դրամը 2013թ. փետրվարի 19-ին վերադարձվել է ՀՀ պետական բյուջե:
2	Սարքավորումների հաշվառման բացակայության, դրանց իրական պահանջների չբացահայտման արդյունքում 2011 թվականին 20,040 հազ. դրամի չափով ձեռք բերված սարքավորումները պարզապես չեն օգտագործվել, քանի որ դրա կարիքն իրականում չի եղել:	Չնայած, որ նշված սարքավորումների ձեռքբերման գումարը և թույլտվությունը «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը ստացել էր 2011թ. հոկտեմբերին, այնուամենայնիվ իրականացվել էր գնման ընթացակարգ,	2012 թ. ընթացքում բոլոր սարքավորումներն օգտագործվել են՝ տեղադրվել են այդ սարքավորումների կարիքն ունեցող ուսումնական հաստատություններում: 2013թ. հունվարից ընթանում է սարքավորման փոխարինման կարիք ունեցող ուսումնական հաստատությունների ամենօրյա

		սարքավորումները ձեռք էին բերվել հնարավոր ամենասեղմ ժամկետներում, սակայն 2011թ. ընթացքում դրանց օգտագործումն այլևս հնարավոր չէր:	հաշվառում, սարքավորումները փոխարինման հանձնելուց նշվում են գործարանային համարները, իսկ փոխարինման համար առավելագույն ժամկետ նշվում է մեկ ամիսը:
3	Որոշ դպրոցներում նոր սարքավորումների փոխարեն տեղադրվել են օգտագործված սարքավորումներ, ինտերնետային կապը եղել է ցածրորակ, որի արդյունքում դպրոցները ստիպված օգտվել են այլընտրանքային կապից:	Նշված դպրոցներին նոր սարքավորումներ տրվել են 2010 թվականին: Բոլոր դպրոցների տնօրենները ստորագրել և կնքել են արձանագրություններ այն մասին, որ դպրոցում տեղադրվել է նոր սարքավորում: Ինտերնետային կապի որակի մասին պետք է նշել, որ 2011 թվականին դպրոցը պետք է Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կենտրոնական հանգույցին միացված լիներ 256 կբ/վրկ կապուղով, իսկ կենտրոնական հանգույցի կապուղին 30720 կբ/վ էր: 2012թ. դպրոցների կապուղու թողունակությունն ավելացել է 8 անգամ՝ հասնելով առնվազն 2 Մբիթ/վրկ, իսկ կենտրոնական հանգույցն ունեցել է 100 մբ/վ թողունակությամբ հիմնական	2013թ. բոլոր ուսումնական հաստատություններին, որպես պահուստային կապ, հատկացվել են 3G մոդեմներ և հեռախոսահամարներ, որոնք հնարավորություն են տալիս անվճար զանգեր կատարել բոլոր դպրոցներին և տեխնիկական աշխատակիցներին: Ընթացքի մեջ են Երևանի դպրոցները օպտիկամանրաթելային կապուղով կենտրոնական հանգույցին միացնելու աշխատանքները, որը հնարավորություն կտա դպրոցները կենտրոնական հանգույցին միացնող կապուղու թողունակությունը դարձնել մինչև 50 Մբ/վ:

		և առնվազն 10 մբ/վ թողունակությամբ պահուստային (ռեզերվային) ինտերնետային կապուղիներ: Բնականաբար մինչև 2012թ. հունվարը որոշ դպրոցներ կարող էին հնարավորության դեպքում օգտվել այլընտրանքային կապից:	
--	--	--	--

«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈԻ) բարեփոխումների ծրագրի շրջանակներում ուսումնական հաստատությունների հիմնանորոգում, գույքի և սարքավորումների ձեռքբերում» ծրագիր

№	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ և թերություններ	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ առարկություններ և բացատրություններ (ՀՀ վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշում)	Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման նպատակով ձեռնարկված քայլերի և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն
	ՀՀ ԿԳ նախարարության ընտրանքային կարգով ստուգված 4 օբյեկտում՝ 134045.3 հազար դրամ ընդհանուր գումարով կատարված հիմնանորոգման աշխատանքներում հայտնաբերվել է անորակ և վերականգնման ենթակա 8625.8 հազար դրամի չափով խախտում.		
1.	«Արտաշատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի հիմնանորոգում Կապալառու՝ «Շինարար	Չկան	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավարի 2013թ. ապրիլի 09-ի թիվ

	համակարգիչ» ՍՊԸ <i>Խախտման չափը՝ Ծավալային հավելագրում 605.00 հազ.դրամ, անորակ աշխ. 116.20 հա.դրամ</i>		04/12.2/3875-13 գրությամբ կապալառուներին ծանուցվել է արձանագրված խախտումները վերականգնելու համար: Արձանագրված ծավալային հավելագրման և անորակ աշխատանքների ընդհանուր 721,2 հազ.դրամ խախտման դիմաց կատարվել է լրացուցիչ աշխատանքներ 759.311 հազ.դրամի (կցվում է)
2	«Եղեգնաձորի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի հիմնանորոգում Կապալառու՝ «Հարսնաձոր» ՍՊԸ <i>Խախտման չափը՝ Ծավալային հավելագրում 2871.50 հազ.դրամ, անորակ աշխ. 1742.00 հազ.դրամ</i>	Կապալառու կազմապերպության կողմից ներկայացվել են առարկություններ արձանագրված հավելագրումների վերաբերյալ (կցվում է)	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավարի 2013թ. ապրիլի 09-ի թիվ 04/12.2/3875-13 գրությամբ կապալառուներին ծանուցվել է արձանագրված խախտումները վերականգնելու համար: Արձանագրված անորակ աշխատանքները կվերականգնվեն եղանակային բարենպաստ պայմանների ժամանակ
3	«Արմավիրի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի հիմնանորոգում Կապալառու՝ «Ագարակ» ԲԲԸ <i>Խախտման չափը՝ Ծավալային հավելագրում 154.76 հազ.դրամ, անորակ աշխ. 419.76 հազ.դրամ</i>	Չկան	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավարի 2013թ. ապրիլի 09-ի թիվ 04/12.2/3875-13 գրությամբ կապալառուներին ծանուցվել է արձանագրված խախտումները վերականգնելու համար: Արձանագրված ծավալային հավելագրման և անորակ աշխատանքների խախտման դիմաց կատարվել է լրացուցիչ աշխատանքներ (ծավալային հավելագրման դիմաց կատարված լրացուցիչ աշխատանքների ակտը

			կցվում է)
4	«Թալինի արհեստագործական ուսումնարան» ՊՈԱԿ-ի հիմնանորոգում Կապալառու՝ «Տավրիդա» ՍՊԸ <i>Խախտման չափը՝ Անորակ աշխ. 2 716.68 հազ.դրամ</i>	Չկան	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավարի 2013թ. ապրիլի 09-ի թիվ 04/12.2/3875-13 գրությամբ կապալառուներին ծանուցվել է արձանագրված խախտումները վերականգնելու համար: Արձանագրված անորակ աշխատանքների խախտման դիմաց կատարվել է լրացուցիչ աշխատանքներ

ՀՀ կրթության և գիտության նախարարության <<Կրթական ծրագրերի կենտրոն>> ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի կողմից վարկային, դրամաշնորհային և պետական բյուջեի միջոցների հաշվին կատարված ծրագրեր

	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ և թերություններ	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ առարկություններ և բացատրություններ (ՀՀ վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշում)	Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման նպատակով ձեռնարկված քայլերի և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն
1	<<Քայլ առ քայլ>> բարեգործական հիմնադրամի կողմից մեկ դաստիարակի 21 ժամյա վերապատրաստման ծախսը կազմել է 80.1 հազ.դրամ, այն դեպքում, երբ վերապատրաստման փորձ ունեցող <<Կրթության ազգային ինստիտուտ>> ՓԲԸ-ի կողմից իրականացվող 30	<<Քայլ առ քայլ>> ԲՀ-ն Հայաստանում միակ կազմակերպությունն է, որն ունի նախադպրոցական և տարրական կրթության ոլորտում միջազգային չափանիշներին համապատասխան վերապատրաստման առաջադեմ	<<Քայլ առ քայլ>> բարեգործական հիմնադրամի հետ 2013 թվականին կնքվելիք պայմանագրի նախագիծը պատրաստելիս հաշվի են առնվել 2012 թվականին ՀՀ Վերահսկիչ պալատի կողմից իրականացված ստուգման արդյունքում արձանագրված դիտողությունները:

Ժամյա վերապատրաստման ծախսը մեկ անձի հաշվով 15.0 հազ.դրամ է: Նախատեսվել և կատարվել են այնպիսի ծախսեր /խորհրդատվություն, մոնիտորինգ, ուսումնական այցելություններ, տեխնիկական օժանդակություն, սննդի գումար, վառելիք և այլն/, որոնք վերապատրաստման բուն գործընթացի իրականացման հետ հիմնականում առնչություն չունեն:	փորձ: Այն աշխարհի տարբեր երկրներում փորձարկված և երկարամյա զարգացում ունեցող նախադպրոցական ուսուցման ծրագիր է: Երեխաների զարգացմանն ու կրթությանն ուղղված այդ կազմակերպության կողմից մշակված և լայնորեն կիրառվող ուսումնական նյութերը ունեն միջազգային ճանաչում: <<Քայլ առ քայլ>> ԲՀ-ի կողմից իրականացված պայմանագիրը ներառում է հետևյալ գործողությունների շրջանակը՝ վերապատրաստման իրականացման նախապատրաստական աշխատանքներ, վերապատրաստումների իրականացում, մասնագիտական օժանդակություն և տեխնիկական աջակցություն վերապատրաստված դաստիարակներին, դաստիարակների աշխատանքների շարունակական մշտադիտարկում, վերապատրաստված դաստիարակների ուսումնական այցելություն <<Քայլ առ քայլ>> - ի մոդելային մանկապարտեզներ: Ուստի, վերապատրաստման բուն գործընթացի հետ կապ չունեցող ծախսերը վերաբերում են վերապատրաստումներից	
---	--	--

	տարբերվող գործողությունների իրականացմանը: <<Քայլ առ քայլ>> բարեգործական հիմնադրամը ոչ պետական ոլորտի կազմակերպություն է և պայմանագրերի իրականացման համար հրավիրում է մասնագետներ, իսկ <<Կրթության ազգային ինստիտուտ>> ՓԲԸ-ն վերապատրաստումներն իրականացնում է իր տարեկան պլանավորված աշխատանքների շրջանակներում և վարձատրում իր հիմնական աշխատակազմին: Նախադպրոցական դաստիարակների վերապատրաստման կազմակերպման Պայմանագրի առաջադրանքի շրջանակը, բացի բուն վերապատրաստման կազմակերպումից, ներառում է նաև օժանդակության ցուցաբերում վերապատրաստված դաստիարակներին՝ -մասնագիտական օժանդակություն և տեխնիկական աջակցություն վերապատրաստված դաստիարակներին, -դաստիարակների աշխատանքների շարունակական մշտադիտարկում, -վերապատրաստված	
--	---	--

		դաստիարակների ուսումնական այցելություն <<Քայլ առ քայլ>> ԲՀ-ի կողմից ընտրված մոդելային մանկապարտեզներ: Եզրակացության 1-ին կետում թվարկված ծախսերը, որոնք հիմնականում առնչություն չունեն բուն վերապատրաստման իրականացման հետ, վերաբերվում են վերոհիշյալ գործողությունների կատարմանը:	
2	Վերապատրաստում իրականացնող կազմակերպությունները (այդ թվում՝ ոչ պետական) ԾԻԳ-ի կողմից հատկացված դրամաշնորհային միջոցներով ձեռք են բերել 40,133.3 հազ. դրամի հիմնական միջոցներ, սակայն պայմանագրերում չեն սահմանվել դրանց հետագա տնօրինման պայմանները, այն դեպքում, երբ հնարավոր է, որ վերոնշյալ կազմակերպությունները հետագայում չընդգրկվեն վերապատրաստում իրականացնող կազմակերպությունների ցանկում:	Ծրագրի Ղեկավար ձեռնարկում և ՀԲ-ի կողմից ներկայացված Գնահատման փաստաթղթում որպես ենթաբաղադրիչի հիմնական խնդիր նշված է. <<Ստեղծել պայմաններ ուսուցիչների շարունակական մասնագիտական զարգացման համար: Կազմակերպել ուսուցիչների մասնագիտական կատարելագործման և որակավորման բարձրացման դասընթացներ....: Այդ գործընթացում ներգրավել համապատասխան ներուժ ունեցող պետական և ոչ պետական կրթական կազմակերպություններ>>: Հավելենք նաև, որ համաձայն նշված Ձեռնարկի՝ <<վերապատրաստումների ծառայությունների մրցակցային նոր շուկայական դաշտ	2012 թվականին, ինչպես նաև 2011 թվականին ատեստավորման ենթակա ուսուցիչ են վերապատրաստել 13 ՈՒՎԿ-ներ: Նկատի ունենալով այն փաստը, որ 2011 թվականին ՈՒՎԿ-ները արդեն ձեռք են բերել վերապատրաստումների ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցներ, ինչի արդյունքում բավականին հարստացել է նրանց ուսումնանյութական բազան, նոր գույք ձեռք բերելու համար 2012 թվականին ՈՒՎԿ-ներին գումար չի տրամադրվել:

		ստեղծելը>> ծրագրի նպատակներից է, ուստի կարևորվել է ուսուցիչ վերապատրաստող կազմակերպությունների (այսուհետ՝ ՈԻՎԿ) կարողությունների հզորացումը: Ուստի, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին դրամաշնորհների տրամադրման գործընթացը ներառում է ոչ միայն վերապատրաստման ծախսերը, այլ նաև, ըստ Ղեկավար Ձեռնարկի՝ ՈԻՎԿ-ների կարողությունների հզորացման ծախսերը՝ ներառյալ գույքի ձեռքբերումը:	
3	Բաղադրիչով նախատեսված տնօրենների վերապատրաստումներ չեն իրականացվել: Ավելին՝ տնօրենների վերապատրաստման գործընթացը դադարեցվել է այն դեպքում, երբ վերապատրաստումների ձեռնարկի և ուղեցույցի մշակման ու վերապատրաստող 25 դասախոսների պատրաստման նպատակով արդեն ծախսվել է 69,947.9 հազ. դրամ:	Ծրագրով նախատեսված տնօրենների վերապատրաստումը պետք է ուղղված լիներ առաջնորդության և կառավարման հմտությունների զարգացմանը: Վերապատրաստումների գործընթացի նախապատրաստումը սկսվել է 2010 թվականից, մասնավորապես մշակվել են <<Դպրոցի տնօրենների վերապատրաստման ձեռնարկը>>, և դասախոսի մեթոդական ձեռնարկը: Վերապատրաստվել են 25 դասախոսներ:	2012 թվականին տնօրենների վերապատրաստման համար նախատեսված գումարը վերաբաշխվել է 2013 և 2014 թվականների համար նախատեսված գործողությունների իրականացման համար: Սակայն 2013 թվականի գնումների պլանում նախատեսված վերոհիշյալ գործողությունը կասեցվել է: Առաջիկայում նախատեսվում է հրատարակել և բոլոր դպրոցներին տրամադրել ծրագրի շրջանակներում մշակված <<Դպրոցի տնօրենների վերապատրաստման ձեռնարկը>> :

		Վերապատրաստման բուն գործընթացը չի իրականացվել:	
4	«Ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրում» բաղադրիչով նախատեսվել է բաց կրթական միջավայրի (պլատֆորմի) ստեղծում, որի իրականացման գործողությունը դադարեցվել է, այն դեպքում, երբ պլատֆորմի տեխնիկական հստակորոշիչների մշակման նախնական աշխատանքների համար միջազգային փորձագետին արդեն վճարվել է 6,878.7 հազ. դրամ:	Ծրագրով նախատեսված բաց կրթական միջավայրի /պլատֆորմի/ ստեղծման գործընթացի շրջանակներում կատարվել է պլատֆորմի տեխնիկական հատկորոշիչների և մրցութային փաստաթղթերի մշակում: Պլատֆորմի ձեռքբերումը չի իրականացվել:	Տվյալ գործողության համար նախատեսված գումարները վերաբաշխվել են նախատեսված այլ գործողությունների կատարման նպատակով: Կատարվել են համապատասխան փոփոխություններ ծրագրի գնումների պլանում՝ համաձայնեցնելով Համաշխարհային բանկի հետ և հաստատելով Ծրագրի կառավարման խորհրդի կողմից: Բոլոր գործողությունների իրականացումը սկսվել է տարվա գնումների պլանի վերաբերյալ ՀՀ կառավարության համաձայնությունը ստանալուց հետո:
5	«Աջակցություն բարձրագույն կրթության ֆինանսավորման կայուն համակարգի ներդրմանը» բաղադրիչի շրջանակներում նախատեսվել է ուսանողական վարկերի տրամադրման գործողությունը, որը դադարեցվել է, այն դեպքում, երբ վարկերի համակարգի ձևավորման նպատակով արդեն իսկ ծախսվել է 34,009.8 հազ. դրամ:	Ծրագրով նախատեսված ուսանողական վարկերի տրամադրման գործառույթը չի իրականացվել:	<<Կրթության որակ և համապատասխանություն>> երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում <<Բարձրագույն կրթության ֆինանսավորման կայուն համակարգ>>-ի ներդրման նպատակով նախատեսված ուսանողական վարկերի տրամադրման համար հատկացված 1.5 մլն. ԱՄՆ դոլար գումարը վերաբաշխվել է երեք այլ ուղղություններով: Մասնավորապես՝ 1 մլն. ԱՄՆ դոլարը վերաբաշխվել է Նորարարությունների մրցակցային համակարգի միջոցով բուհերին դրամաշնորհների տրամադրման նպատակով: Վարկային ծրագրի ֆինանսական համաձայնագրի

			լրացումը կնքված է, և այն վավերացվել է ՀՀ նախագահի կողմից՝ 2013 թվականի մարտի 21-ին թիվ ՆՀ-42-Ն հրամանագրով:
--	--	--	---

Լիցենզավորում

	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ և թերություններ	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ առարկություններ և բացատրություններ (ՀՀ վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշում)	Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման նպատակով ձեռնարկված քայլերի և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն
	Չի պահպանվել <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջը՝ 10-ը ավագ դպրոցներից 6-ը գործել են առանց համապատասխան լիցենզիայի	Վերահսկիչ պալատի ստուգման ժամանակահատվածում հանրակրթական ծրագրերով գործունեության լիցենզիաներ ունեցել են հիշատակված 6 ավագ դպրոցներից 3-ը. Արմավիրի մարզի Վաղարշապատի Մ.Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցը՝ 2010թ. հոկտեմբերի 22-ի 1727–Ա/Ք հրամանով /տարրական, հիմնական, միջնակարգ հանրակրթական ծրագրերով/, Արարատի մարզի Մասիսի թիվ 5 ավագ դպրոցը՝ 2011թ. մայիսի 30-ի 617–Ա/Ք հրամանով /հիմնական, միջնակարգ հանրակրթական ծրագրերով/,	Այս պահին հիշատակված բոլոր դպրոցները լիցենզավորված են:

		Շիրակի մարզի Գյումրու թիվ 45 ավագ դպրոցը՝ 2012թ. դեկտեմբերի 25-ի 1173-Ա/Ք հրամանով /հիմնական, միջնակարգ հանրակրթական ծրագրերով/, իսկ մյուս 3-ը լիցենզիաներ ստացել են <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի և լիցենզավորման կարգի պահանջների համապատասխան ուսումնական տարածքի անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ վկայականը ստանալուց հետո. Աշտարակի Ն. Սիսակյանի անվան թիվ 5 ավագ դպրոցը՝ 2013թ. փետրվարի 8-ի 12-Ա/Ք հրամանով /հիմնական, միջնակարգ հանրակրթական ծրագրերով/, Շիրակի մարզի Գյումրու թիվ 42 ավագ դպրոցը և Տաուշի մարզի Դիլիջանի ավագ դպրոցները՝ 2013թ. մարտի 13-ի 190-Ա/Ք հրամանով /հիմնական, միջնակարգ հանրակրթական ծրագրերով/:	
--	--	---	--

Հանրակրթական ծրագիր

	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ և թերություններ	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ առարկություններ և բացատրություններ (ՀՀ վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշում)	Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման նպատակով ձեռնարկված քայլերի և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն
	2011-2012թթ. ընթացքում պետական բյուջեից ինը ավագ դպրոցներին ավել հատկացված միջոցներից չծախսված 11505.8 հազար դրամը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե	Չկան	4858.3 հազար դրամը վերահսկողության ընթացքում ավագ դպրոցների կողմից վերականգնվել է ՀՀ պետական բյուջե, իսկ 6647.7 հազար դրամը նախարարության կողմից պակասացվել է համապատասխան ավագ դպրոցների նախահաշիվներից:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

0010. ք.Երևան. Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
Հեռ.՝ 589080 Ֆաքս՝ 523200
www.mud.am
E-mail: info@mud.am

----- N -----

Ձեր N ----- ան -----

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
պարոն Վ. Գաբրիելյանին

2013 թվականի մայիսի 24-ի
02/23.14/7210-13 հանձնարարական

Հարգելի պարոն Գաբրիելյան,

ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից, ՀՀ վերահսկիչ պալատի 2012 թվականի տարեկան հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերաբերյալ առարկությունների և բացատրությունների, ինչպես նաև դրանց վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցների մասին տեղեկատվությունը 2013 թվականի մայիսի 22-ի թիվ 01/25.1/3271-13 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն:

2013 թվականի մայիսի 23-ին կայացած ՀՀ կառավարության նիստում վերոհիշյալ հարցի վերաբերյալ ՀՀ քաղաքաշինության նախարարությանը հանձնարարականներ չեն տրվել:

Հարգանքով՝

Ս. Թադևոսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ**

« _____ 2013 թ.

N _____

Ի կատարումն ՀՀ վարչապետի 24.05.2013թ-ի
N 02/23.14/7210-13 հանձնարարականի

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Գաբրիելյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 24.05.2013թ-ի N 02/23.6/7210-13 հանձնարարականի, ներկայացնում եմ ՀՀ վերահսկիչ պալատի 2012 թվականի տարեկան հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության առարկությունների և բացատրությունների, ինչպես նաև դրանց վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցների մասին տեղեկատվությունը:

Առդիր՝ 3 թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Կատարող՝ ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն, 010 56-15-01

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
<http://www.mss.am> info@mss.am

Տեղեկատվություն

ՀՀ վերահսկիչ պալատի 2012 թվականի տարեկան հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության առարկությունների և բացատրությունների, ինչպես նաև դրանց վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցների մասին

1. ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված այն խախտումները, որոնք ընդունվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից.

1) “Տարեցների շուրջօրյա խնամքի ծառայություններ” և “Երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության ծառայություններ” ծրագրերի շրջանակներում ներգրավված թվով 8 գիշերօթիկ և թվով 4 տուն-ինտերնատ հաստատությունների կողմից իրականացված գնումներ գործընթացի ընտրանքային ստուգմամբ արձանագրվել են “Գնումների մասին” ՀՀ օրենքի բազմաթիվ և բազմաբնույթ կոպիտ խախտումներ, մասնավորապես հաղթող են ճանաչվել մասնակիցներ, որոնք, նույնիսկ իրավունք չունեին մասնակցելու հայտարարված մրցույթներին:

2) Վերանայել տուն-ինտերնատների և գիշերօթիկ հաստատությունների սպասարկող անձնակազմի նորմատիվները և գործող հաստիքացուցակները, ինչպես նաև հաստատել վարչական աշխատողների թվաքանակի վերաբերյալ նորմատիվներ:

Ծանոթություն-ՀՀ վերահսկիչ պալատի կողմից ընտրանքային կարգով ստուգվել են թվով երեխաների գիշերօթիկ 5 հաստատություններ և տարեցների 3 տուն-ինտերնատներ:

2. ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված այն խախտումները, որոնք վերացվել են ձեռնարկված միջոցառումների արդյունքում, ինչպես նաև տեղեկատվություն այն խախտումների վերացման ընթացքի վերաբերյալ, որոնք դեռ առկա են.

1) Ձեռնարկված միջոցառումների արդյունքում վերացվել են՝ մրցույթների կազմակերպման ու անցկացման, մատակարարների (հաղթողների) ընտրության, պայմանագրերի կնքման, դրանցով նախատեսված իրավունքների և պարտավորությունների պատշաճ կատարման գծով ՀՀ վերահսկիչ պալատի հաշվետվությամբ արձանագրված խախտումները:

Նախարարության ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների կողմից իրականացվող գնումների գործընթացը առավել արդյունավետ կազմակերպելու, թափանցիկ դարձնելու, կազմակերպությունների ղեկավարների անձնական և գնումների կազմակերպման պատասխանատվությունների պատասխանատվությունը բարձրացնելու նպատակով արձակվել է նախարարի հրաման:

Կազմակերպությունների կողմից ձեռք բերման ենթակա գնման առարկաների (սննդամթերք, սանիտարահիգիենիկ պարագաներ, դեղորայք, տնտեսական ապրանքներ, գրասենյակային ապրանքներ և այլն) ելակետային գները ճիշտ որոշելու նպատակով Նախարարության կողմից ճշտվել, հստակեցվել և կազմակերպություններին են տրամադրվել դրանց տեխնիկական բնութագրերը:

Ընթացիկ տարվա փետրվար-մարտ ամիսներին նախարարության նախաձեռնությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության «Ուսուցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 4 խմբերով կազմակերպվել է նախարարության ենթակայության տակ գտնվող

կազմակերպությունների գնումների գործընթացների կազմակերպման շուրջ 55 պատասխանատու անձանց ուսուցումը: Նախարարության ենթակայության տակ գտնվող 27 կազմակերպություններից 24-ի գնումների կազմակերպման պատասխանատուները որակավորվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից, իսկ մնացած 3 կազմակերպության պատասխանատուները կվորակավորվեն առաջիկայում (3 պատասխանատուների չորակավորման պատճառը նախկին պատասխանատուների աշխատանքից ազատվելու հանգամանքն է):

Ձեռնարկված վերոնշյալ միջոցառումների արդյունքում, նախարարության ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների կողմից 10.03.2013թ.-ի դրությամբ իրականացված 1,002.3 մլն դրամ մրցույթների (սննդամթերք, դեղորայք, տնտեսական ապրանքներ, սանիտարահիգիենիկ ու լվացող միջոցներ, ավտոտրանսպորտի վառելիք, գրասենյակային պարագաներ) արդյունքում տնտեսվել է 148.2 մլն դրամ:

Հաշվետվությամբ արձանագրված խախտումները թույլ տալու համար Գյումրու տուն-ինտերնատի գլխավոր հաշվապահին հայտարարվել է խիստ նկատողություն, իսկ մրցույթի հանձնաժողովի նախագահին և քարտուղարին՝ նկատողություն: Միաժամանակ, հանձնարարվել է մնացած կազմակերպությունների ղեկավարներին՝ տեղերում քննության առնել ՀՀ վերահսկիչ պալատի հաշվետվությամբ արձանագրված խախտումները, մեղավոր անձանց նկատմամբ կիրառել պատասխանատվության համապատասխան միջոցներ և այդ մասին մինչև սույն թվականի հունիսի 10-ը տեղեկատվություն ներկայացնել նախարարություն:

2) դեռևս ընթացքի մեջ են գնման ընթացակարգերի արձանագրությունների վարման, մասնակցին ընտրված հայտարարելուց, սակայն հետագայում պայմանագիր կնքելու իրավունքից հրաժարվելու կամ զրկվելու դեպքում 1,0 մլն դրամ տուժանք գանձելու գծով արձանագրված խախտումների վերացմանն ուղղված միջոցառումները:

Նշված հարցերի կարգավորման գործընթացը սկսվել է նոր ուսուցում անցած և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից որակավորված գնումների գործընթացների կազմակերպման պատասխանատուների կողմից, իսկ տուժանքների գանձման համար կազմակերպությունները արդեն դիմել են “Գնումների աջակցման կենտրոն” ՊՈԱԿ-ին:

3. Խախտումներ, որոնք բացահայտվել են նախարարության կողմից և խախտումներ, որոնք ներառված չեն ՀՀ վերահսկիչ պալատի հաշվետվության մեջ:

Գնումների արդյունավետությունը մեծապես կախված է գնման առարկաների տեխնիկական հատկանիշների (բնութագրերի) և ելակետային (շուկայական) գների ճիշտ որոշելու հանգամանքից: Մինչդեռ, տեխնիկական բնութագրերի մշակման և կազմման միասնական ձևաչափ չլինելու, պատվիրատուի մոտ տվյալ գնման առարկայի բնութագրման համար անհրաժեշտ մասնագետի կամ այլ մասնագետ հրավիրելու համար ֆինանսական միջոցների բացակայության պատճառով՝ կազմակերպությունների կողմից մշակվում են ոչ ճիշտ տեխնիկական բնութագրեր, որոնք հստակորեն չեն բնութագրում գնման առարկաները, ինչի հետևանքով էլ ճիշտ չի որոշվում գնման առարկաների ելակետային գները:

Շրջանակային համաձայնագրերի ընթացակարգով հայտարարված որոշ գնման առարկաների (դեղորայք, սեղմված բնական գազ և այլն) ձեռք բերման նպատակով հայտարարված մրցույթները բազմաթիվ անգամ չեն կայանում (հատկապես մարզերում և փոքր չափաքանակի դեպքում)՝ մասնակից չլինելու հիմքով, իսկ թե մինչև հաջորդ մրցույթի

հայտարարելը հրատապ ձեռք բերման ենթակա գնման առարկայի պահանջը ինչպես պետք է բավարարվի, սահմանված չէ:

Նման դեպքերում, շուրջօրյա խնամքի իրականացման և սոցիալական սպասարկման առանձնահատկություններից ելնելով, պահանջվող գնման առարկաները շուտափույթ ձեռք բերելու նպատակով կազմակերպություններն գնման պայմանագրերը կնքում են օրենսդրության պահանջների խախտմամբ:

4. Խնդիրներ, որոնք չեն վերաբերվում ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների ծախսմանը, այլ առնչվում են մեթոդաբանական կամ նմանատիպ այլ խնդիրներին:

ՀՀ վերահսկիչ պալատի հաշվետվությամբ արձանագրվել են խախտումներ, որոնք անմիջական առընչություն չունեն պետական բյուջեով նախատեսված միջոցների ծախսման հետ: Մասնավորապես, դրանք վերաբերում են կազմակերպությունների հաստիքային միավորներին, շահառուների հաշվառման, խնամքի կազմակերպման ու իրկանացման և ծառայությունների մատուցման հարցերին:

Նշված խախտումները վերացնելու նպատակով նախատեսվել է մինչև ընթացիկ տարվա վերջ փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության մի շարք որոշումներով հաստատված կարգերում՝ երեխաների գիշերօթիկ հաստատություններում ընդունելության, տուն-ինտերնատ քաղաքացիների ուղեգրման, ընդունելության, դուրս գրման, աշխատանքային թերապիայի կազմակերպման և խնամքի ու սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացները առավել հստակեցնելու նպատակով:

Նախարարությունում արդեն մշակվել են շուրջօրյա խնամք և սոցիալական սպասարկում իրականացնող կազմակերպությունների վարչական, տնտեսական և օժանդակ անձնակազմերի տիպային հաստիքային միավորների առավելագույն նորմաները, որոնք նախատեսվում է գործողության մեջ դնել 2014 թվականի հունվարի 1-ից, իսկ ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով սահմանված՝ շահառուներին անմիջական խնամք և սոցիալական սպասարկում իրականացնող անձնակազմերի հաստիքային միավորների նորմաները կվերանայվեն 2014 թվականին:

Շրջանակային համաձայնագրերի ընթացակարգով գնումների համար որպես մրցույթների հնարավոր մասնակից գրանցված կազմակերպությունների մասնակցությունը մրցույթներին խիստ ցածր է: Օրինակ. 2013 թվականի համար նախարարության համակարգի 21 ՊՈԱԿ-ներից յուրաքանչյուրը սննդամթերքի մրցույթին մասնակցության հրավեր են ուղարկել շուրջ 280 հնարավոր մասնակիցների, սակայն դրանցից մրցույթներին մասնակցել են միջին հաշվով 4-ը: Խնդիր է նաև նման քանակի ծանուցումներ ուղարկելու հարցը, իսկ յուրաքանչյուր վրիպում հիմք է կայացած մրցույթը չեղյալ համարելու համար:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 2

“.....” 2013թ.

N.....

**ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար պարոն Վ. Գաբրիելյանին**

*Ի կայր. ՀՀ վարչ. 24.05.13թ.
N 02/23.14/7210-13*

Հարգելի պարոն Գաբրիելյան

Հայտնում եմ, որ հաշվետու ժամանակահատվածում ՀՀ վերահսկիչ պալատի կողմից ՀՀ տարածքային կառավարման նախարարության լիազորությունների շրջանակներում ստուգումներ չեն իրականացվել:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ստուգվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և Երևանի քաղաքապետարանի գործառույթները, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը սահմանված կարգով ՀՀ կառավարություն ներկայացնելու ուղղությամբ կսահմանվի հսկողություն:

Ինչ վերաբերում է ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013 թվականի մարտի 22-ի թիվ 5/11 «ՀՀ աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի օրինականության և արդյունավետության նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը հաստատելու մասին» որոշմամբ ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը ներկայացված առաջարկությանը՝ **«Ուժեղացնել հսկողությունը աղբավայրերի հաշվառման, թափոնների հեռացման վայրերի ռեեստրում գրանցման, ինչպես նաև թափոնակուտակիչների անշարժ գույքի պետական գրանցման, հողամասերի նպատակային օգտագործման, քիմիական նյութերով և արտադրական թափոններով աղտոտումից հողի պահպանության նկատմամբ համայնքների կողմից կատարվող աշխատանքների համակարգման ուղղությամբ»**, հայտնում եմ, որ նախարարությունը աղբավայրերի հաշվառման, թափոնների հեռացման վայրերի ռեեստրում գրանցման, ինչպես նաև թափոնակուտակիչների անշարժ գույքի պետական գրանցման, հողամասերի նպատակային օգտագործման, քիմիական նյութերով և արտադրական թափոններով աղտոտումից հողի պահպանության նկատմամբ հսկողության իրականացման լիազորություններ չունի (մեր ելից՝ 23.05.13թ. N 03/16/2163-13, կցվում է):

Տեղեկացնում եմ նաև, որ 2012 թվականին ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների՝ աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների

մասով համապատասխան տեղեկատվությունը ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել 14.05.2013թ. N 07/16/1940-13 գրությամբ (կցվում է):

Հարգանքով՝



Վ. ՏԵՐՏԵՐՅԱՆ

Կատ. Ս.Հարությունյան
Հեռ. 511-378



ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 2

“.....” 2013 թ.

N.....

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
պարոն Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Պատճենը՝ ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնակատար
պարոն Վ.ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

Պատճենը՝ ՀՀ վերահսկիչ պալատի նախագահ
պարոն Ի. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

ՀՀ կառավարության

05.04.2013թ. թիվ 02/23.14/4627-13

Հարգելի պարոն Սարգսյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի հանձնարարականի ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013 թվականի մարտի 22-ի թիվ 5/11 «ՀՀ աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի օրինականության և արդյունավետության նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը հաստատելու մասին» որոշմամբ ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը ներկայացված առաջարկության՝ **«Ուժեղացնել հսկողությունը աղբավայրերի հաշվառման, թափոնների հեռացման վայրերի ռեեստրում գրանցման, ինչպես նաև թափոնակուտակիչների անշարժ գույքի պետական գրանցման, հողամասերի նպատակային օգտագործման, քիմիական նյութերով և արտադրական թափոններով աղտոտումից հողի պահպանության նկատմամբ համայնքների կողմից կատարվող աշխատանքների համակարգման ուղղությամբ»**, վերաբերյալ, նախարարությունը հայտնում է հետևյալը.

«Թափոնների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն թափոնների գործածության ոլորտում տարածքային կառավարման մարմինների իրավասություններն են՝ իրենց վարչական սահմաններում թափոնների տեղադրման վայրերի լիազորված պետական մարմնի հետ համաձայնեցված թույլտվություններ տալը. սանիտարական մաքրման սխեմաների կազմումը և աղբահանության նկատմամբ հսկողության իրականացումը. թափոնների գոյացման, մշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի գրանցամատյանների կազմումը և վարումը. թափոնների գոյացման, մշակման, վնասազերծման, օգտահանման ու հեռացման հաշվառման և դրանց անձնագրավորման

կազմակերպումը. իրենց վարչական տարածքի սահմաններում չհսկվող և չարտոնագրված աղբավայրերի վերացումը (լիկվիդացումը):

«Թափոնների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններն են համայնքի վարչական սահմաններում իրականացնել հսկողություն աղբահանման նկատմամբ, կազմել տարածքների սանիտարական մաքրման սխեմաները, իրականացնել չհսկվող և չարտոնագրված աղբավայրերի վերացումը (լիկվիդացումը):

Իսկ **թափոնների պետական հաշվառման իրականացման. թափոնների պետական կադաստրի վարման . թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի ռեեստրների կազմման, վարման, ինչպես նաև մոնիթորինգի (մշտադիտարկում)** իրականացման լիազորությունները վերապահված են ՀՀ բնապահպանության նախարարությանը՝ համաձայն «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:

Միաժամանակ տեղեկացնում են, որ 2012 թվականին ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների՝ աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների մասով, ՀՀ մարզերում իրականացման ուսումնասիրության արդյունքում պարզել է, որ ՀՀ համայնքների մեծ մասում գործընթացը իրականացվում է ցածր մակարդակով կամ ընդհանրապես չի իրականացվում, որը պայմանավորված է վարչատարածքային, ֆինանսական և այլ խնդիրներով: Կատարվել են ուսումնասիրություններ և վերլուծություններ, որոնք միտված են բացահայտելու աղբահանության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման հետ կապված խնդիրները և բացթողումները:

ՀՀ մարզերում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացման գործընթացում առկա խնդիրները և բացթողումները պարզելու նպատակով ուսումնասիրվել է Հայաստանում կոշտ կենցաղային թափոնների կառավարման օրենսդրական շրջանակները, ինստիտուցիոնալ կառուցվածքը, աղբավայրերի և թափոնների տեղադրման վայրերի ստեղծման և շահագործման ընթացակարգը, ՀՀ մարզերում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացման ուսումնասիրությունների արդյունքները և համակարգի բարեփոխմանն ուղղված քայլերը:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը բնագավառի ուսումնասիրության արդյունքները ամփոփելով ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացրել «Հայաստանի Հանրապետության մարզերում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների (աղբահանության եվ սանիտարական մաքրման, նախադպրոցական հաստատությունների գործունեության մասով), իրականացման գործընթացի ուսումնասիրության արդյունքների մասին» արձանագրային որոշման նախագիծը:

Մշտապես գործող տարածքային զարգացման և բնապահպանական նախարարական կոմիտեի 08.11.2012 նիստում ՀՀ մարզերում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացման ուսումնասիրությունների արդյունքները ընդունվել է ի գիտություն և թիվ 01/24.9/[135684]-12 արձանագրության 9-րդ կետով հանձնարարվել է վեց ամսյա ժամկետում ՀՀ կառավարություն ներկայացնել ոլորտի խնդրի լուծման վերաբերյալ առաջարկություններ, որտեղ հստակ նկարագրված կլինեն մարմինների

պատասխանատվության շրջանակները: Գործընթացը քննարկման փուլում է և այս համատեքստում ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը համագործակցում է միջազգային կազմակերպությունների հետ և մասնակցում նրանց կողմից իրականացվող ծրագրերին, մասնավորապես՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ (KfW) սկսած «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի կոշտ կենցաղային աղբի համակողմանի կառավարում» և Ասիական զարգացման բանկի կողմից իրականացվող «Կոշտ կենցաղային թափոնների կառավարման բարելավման ներդրումային» ծրագրերին: Առաջարկվել է նշված ծրագրերի իրականացման ընթացքում համագործակցել միմյանց հետ, զուգահեռներ անցկացնել, կիրառել միանման մոտեցումներ և չափորոշիչներ կոշտ կենցաղային թափոնների կառավարման ոլորտում մատուցվող ծառայությունների որակի, բնապահպանական ցուցանիշների, աղբի հավաքագրման և վերամշակման համար:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության առաջարկությամբ և քննարկումների արդյունքում Ասիական զարգացման բանկի հետ ձեռք բերվել է համաձայնություն ծրագրի շրջանակներում՝ օգտագործելով միջազգային փորձը, ինչպես նաև ՀՀ տարածքում միջազգային կազմակերպությունների կողմից իրականացված և իրականացվող ծրագրերի արդյունքները, մշակել ՀՀ ամբողջ տարածքի կոշտ թափոնների կառավարման երկարաժամկետ ազգային ռազմավարություն և օրենսդրական փոփոխությունների առաջարկություն:

Հարգանքով՝



Ա. ԲԱԽՇՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 2

“.....” 2013 թ.

N.....

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
պարոն Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

ՀՀ կառավարության
13.04.2013թ. թիվ 02/23.14/5335-13 և
22.04.2013թ. թիվ 02/23.14/5457-13

Հարգելի պարոն Սարգսյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի հանձնարարականների՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013 թվականի մարտի 22-ի թիվ 5/11 «ՀՀ աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի օրինականության և արդյունավետության նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը հաստատելու մասին» որոշմամբ ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը ներկայացված առաջարկության վերաբերյալ, ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը բացատրությունները ներկայացնում է համապատասխան ձևաչափով:

Հարգանքով՝

Վ. ՏԵՐՏԵՐՅԱՆ

Բացատրություն

**ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013թ.մարտի 22-ի թիվ 5/11 որոշմամբ հաստատված ընթացիկ հաշվետվության վերաբերյալ
(ՀՀ տարածքային կառավարման նախարարություն)**

	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ և թերություններ	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ առարկություններ և բացատրություններ (ՀՀ վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշում)	Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման նպատակով ձեռնարկված քայլերի և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն
1.	Ուժեղացնել հսկողությունը աղբավայրերի հաշվառման, թափոնների հեռացման վայրերի ռեեստրում գրանցման, ինչպես նաև թափոնակուտակիչների անշարժ գույքի պետական գրանցման, հողամասերի նպատակային օգտագործման, քիմիական նյութերով և արտադրական թափոններով աղտոտումից հողի պահպանության նկատմամբ համայնքների կողմից կատարվող աշխատանքների համակարգման ուղղությամբ:	Նախարարությունը աղբավայրերի հաշվառման, թափոնների հեռացման վայրերի ռեեստրում գրանցման, ինչպես նաև թափոնակուտակիչների անշարժ գույքի պետական գրանցման, հողամասերի նպատակային օգտագործման, քիմիական նյութերով և արտադրական թափոններով աղտոտումից հողի պահպանության նկատմամբ հսկողության իրականացման լիազորություններ չունի:	
2.			
3.			

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ



STATE COMMITTEE
OF WATER ECONOMY OF THE
RA MINISTRY OF TERRITORIAL
ADMINISTRATION
CHAIRMAN

ՀՀ, Երևան 375010, Վարդանանց 13ա
Հեռ.՝ (374 10) 540 909, ֆաքս՝ (374 10) 540 603
Էլ. փոստ՝ scws@netsys.am

13a, Vardanants st., Yerevan 375010, Armenia
Tel.: (374 10) 540 909, fax: (374 10) 540 603
E-mail: scws@netsys.am

«_____» _____ 2013 թ. N _____

Ձեր _____ 2013 թ. N _____

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար

պրն Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գաբրիելյան

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2013 թվականի մայիսի 24-ի N 02/23.14/7210-13 հանձնարարականի տեղեկացնում եմ, որ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն ՀՀ վերահսկիչ պալատի արձանագրված խախտումների և դրանց վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունն իր 2013 թվականի մայիսի 23-ի N 01/06/858-13 գրությամբ (կցվում է) ներկայացրել է ՀՀ կառավարության աշխատակազմ:

Առդիր՝ 11 էջ:

Հարգանքով՝

Ա. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ



STATE COMMITTEE
OF WATER ECONOMY OF THE
RA MINISTRY OF TERRITORIAL
ADMINISTRATION
CHAIRMAN

ՀՀ, Երևան 375010, Վարդանանց 13ա
Հեռ.՝ (374 10) 540 909, ֆաքս՝ (374 10) 540 603
Էլ. փոստ՝ scws@netsys.am

13a, Vardanants st., Yerevan 375010, Armenia
Tel.: (374 10) 540 909, fax: (374 10) 540 603
E-mail: scws@netsys.am

«_____» _____ 2013 թ. N _____

Ձեր _____ 2013 թ. N _____

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար

պրն Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գաբրիելյան

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2013 թվականի մայիսի 20-ի N 02/23.6/6877-13 և 2013 թվականի մայիսի 22-ի N 02/23.6/7047-13 հանձնարարականների՝ կից ներկայացնում եմ 2013 թվականի մայիսի 23-ին կայանալիք ՀՀ կառավարության նիստում ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից ՀՀ վերահսկիչ պալատի արձանագրված խախտումների և դրանց վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ ներկայացվող տեղեկատվությունը:

Առդիր՝ 10 էջ:

Հարգանքով՝

Ա. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Բացատրություն

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013թ. մարտի 22-ի թիվ 5/1 որոշմամբ հաստատված ընթացիկ հաշվետվության վերաբերյալ (ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե)

ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ և թերություններ	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ առարկություններ և բացատրություններ (ՀՀ վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշում)	Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման նպատակով ձեռնարկված քայլերի և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն
ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և ԶՕԸ-ների միջև կնքվել է ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցություն տրամադրելու պայմանագիր՝ 4 տարի ժամկետով: Պայմանագրի 3.3 կետով սահմանվել են ընկերությունների ոռոգելի հողատարածքների նվազագույն չափերը: ԶՕԸ-ների փաստաթղթերի, ինչպես նաև ջրի կառավարման ծրագրի ուսումնասիրությամբ պարզվել է, որ փաստացի ոռոգվել է ավելի քիչ հողատարածք, քան նախատեսված է պայմանագրով: Հատկանշական է, որ պայմանագրի 4.2 կետով նախատեսվել է, որ 3.3 կետի չկատարումը (պայմանագրով նախատեսված ոռոգելի հողատարածքների նվազագույն չափերը չպահպանելը) հիմք է հանդիսանում ֆինանսական աջակցության չափերի նվազեցման:	Պայմանագրային տարածքների մուտքագրված ջրի ծավալների վերլուծության արդյունքում ստացված փաստացի ոռոգված տարածքների պակաս քանակը հետևանք է սելավաջրերով վաղախա մշակաբույսերի ամբողջությամբ ոռոգմամբ և անհատույց սելավաջրի չհաշվառմամբ: Հետևանք է նաև ջրօգտագործողների ընկերության համապատասխան մասնագետների կողմից իրականացված աշխատանքների թերությունների, այսինքն՝ հողատարածքը փաստացի ոռոգվել է, սակայն ջրի ծավալը մուտքագրվել է ջրօգտագործողի մեկ այլ հողամասի վրա, ուստի վերլուծության ընթացքում որոշակի ջրված հողամասեր դուրս են մնում հաշվարկային թվից: Պատճառներից է նաև լեռնային ջրօգտագործողների ընկերություններում հաճախ բարձր բնական խոնավության ապահովումը. տարածքները, որոնք նախատեսվում է ոռոգել, չեն ոռոգվում հաստատված բարձր բնական խոնավության պատճառով, սակայն ընկերությունն իրականացնում է ոռոգման համակարգի պահպանումը և նախապատրաստումը ջրապահանջի առկայության դեպքում՝ այն ապահովելու համար: Հաշվի առնելով այս և մի շարք այլ պատճառներ՝ ֆինանսական աջակցության չափերի նվազումն օբյեկտիվորեն չի կարող ուղիղ համեմատական լինել փաստացի ջրված տարածքների նվազմանը:	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և համապատասխան ջրօգտագործողների ընկերությունների միջև պայմանագրերը կնքվել են ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի N 1334-Ն որոշմամբ: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ՀՀ կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 13-ի N 1156-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 08.02.2007թ. N 1334-Ն որոշումը: Ընդ որում, 2012 թվականից սկսած ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն համապատասխան ջրօգտագործողների ընկերությունների հետ դրամաշնորհների պայմանագրեր կնքում է ՀՀ կառավարության 29.04.2010թ. N 566-Ն որոշմամբ հաստատված օրինակելի պայմանագրով: Միաժամանակ տարվել են աշխատանքներ, որպեսզի ջրօգտագործողների ընկերություններում համապատասխան մասնագետները պատշաճ և մանրակրկիտ իրականացնեն փաստաթղթերի կազմման և տվյալների մուտքագրման աշխատանքները:
Վերոնշյալ պայմանագրի համաձայն՝ մատակարարված ջրի դիմաց վճարումները կատարվում են ԶՕԸ-ի ժողովի կողմից հաստատված ձևով (անդորրագրերով՝ բանկային փոստային բաժանմունքի միջոցով): Սակայն, որոշ դեպքերում ԶՕԸ-ների աշխատակիցներն են (մելիորատորը, գանձապահը) գումարը հավաքում ջրօգտագործողներից և իրենք վճարում կատարում նրանց փոխարեն՝ խախտելով պայմանագրի	Այս դեպքերում մելիորատորն ուղղակի կատարում է փոստատարի գործառնություն, ջրօգտագործողին օգնելով գումարը փոստային բաժանմունք հասցնելու հարցում, ջրօգտագործողի անունով փոստային բաժանմունքում իրականացված վճարի փոստային կամ բանկային կտրոնը տրամադրվում է ջրօգտագործողին: Նշվածը կանխիկ գանձման իրականացման գործառնությո բարդ է դիտարկել:	Ջրօգտագործողների ընկերություններին առաջարկվել է կազմակերպել և ջրօգտագործողների հետ տանել աշխատանքներ նշված երևույթի նվազման դիմամիկա ապահովելու նպատակով:

դրույթները: Վերջիններս փաստացի իրականացնում են կանխիկ գանձման գործառույթ, ինչի իրավասությունը չունեն:		
Օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ ԶՕԸ-ի նոր անդամից պետք է գանձվի մուտքի վճար, որի չափը սահմանում է ԶՕԸ-ի ընդհանուր ժողովը: Ուսումնասիրությամբ պարզվեց, որ ԶՕԸ-ների կողմից չի կատարվում օրենքի վերոնշյալ պահանջը: Մասնավորապես, վերահսկողության ժամանակահատվածում ԶՕԸ-ների ոչ մի նոր անդամից մուտքի վճար չի գանձվել, նույնիսկ ԶՕԸ-ների ընդհանուր ժողովները չունեն սահմանված ԶՕԸ-ի նոր անդամի մուտքի վճարի չափը:	Դիտողությունը, նոր անդամներից մուտքի վճարի գանձման վերաբերյալ, ընդունված է:	Տարվել են աշխատանքներ՝ թերությունը շտկելու ուղղությամբ:
Ջրի կառավարման համակարգային ծրագրի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ այն դեպքում, երբ ջրօգտագործողն ունի տարբեր մշակաբույսերով մի քանի հողակտոր, ծրագրի միջոցով ջրի փաստացի ծավալը մուտքագրվել է միայն մեկ հողակտորի մասով: Բացի այդ, ջրի կառավարման ծրագիրը թույլ է տալիս բազայում առկա անմշակ հողակտորի վրա մուտքագրել տարեկան փաստացի մատակարարված ջուր և ձևավորել հասույթ անմշակ հողակտորների մասով: Այս ամենի արդյունքում ջրի կառավարման ծրագրով հստակ չի երևում ոչ փաստացի ոռոգված հողակտորների ստույգ քանակը, ոչ էլ՝ փաստացի օգտագործված ոռոգման ջրի ծավալները, ինչպես նաև հստակ չի երևում կոնկրետ մշակաբույսերով հողակտորների ջրման պարբերականությունները և քանակները:	Ջրի կառավարման ծրագիրն ի սկզբանե ունեցել է և ունի մի քանի տարբեր հողամասերի վրա օգտագործված ոռոգման ջրի մուտքագրման տեխնիկական հնարավորությունը: Թերությունը փաստացի իրականացվող մուտքագրման աշխատանքների մեջ է: Որպես “անմշակ” հողամասերի վրա մուտքագրված ջրի ծավալի վերաբերյալ՝ ծրագրում առկա է ջրի ծավալի մուտքագրման սահմանափակումը “անմշակ” հողամասերի վրա, սակայն չկա սահմանափակում այն դեպքերում, երբ մշակաբույսը խմբագրվում է “անմշակ”-ի արդեն իսկ մուտքագրված ծավալի դեպքում: Ստացվում է, որ “անմշակ” հողամասի վրա առկա է մուտքագրված ջրի ծավալ, որը մուտքագրվել է, երբ հողամասը չի եղել “անմշակ”: Այստեղ սահմանափակում չի դրվում, քանի որ իրականության մեջ օբյեկտիվորեն հնարավոր են այդպիսի դեպքեր:	Տարվել են աշխատանքներ, որպեսզի ջրօգտագործողների ընկերություններում համապատասխան մասնագետները պատշաճ և մանրակրկիտ իրականացնեն փաստաթղթերի կազմման և տվյալների մուտքագրման աշխատանքները:
Պատշաճ կերպով չի իրականացվում “Հայփոստ” ՓԲԸ-ի միջոցով գանձվող գումարների վերաբերյալ “Հայփոստ” ՓԲԸ-ի կողմից ԶՕԸ-ներին տեղեկատվության տրամադրումը:	Ջրօգտագործողների ընկերություններն ունեն տեխնիկական բոլոր հնարավորությունները “Հայփոստ” ՓԲԸ-ին լրացուցիչ տեղեկատվություններ տրամադրելու և ընդունելու համար: Խոչընդոտը կայանում է “Հայփոստ” ՓԲԸ-ի ծրագրային ապահովման փաթեթների սահմանափակ տեխնիկական հնարավորությունների մեջ:	Առաջարկվել են ջրօգտագործողների ընկերություններին կազմակերպել քանակցություններ “Հայփոստ” ՓԲԸ-ի մասնագետների հետ՝ խնդրին լուծում տալու նպատակով:
Ջրօգտագործողներին ոռոգման ջուր տրամադրվում է մոտավոր հաշվարկների հիման վրա (ջրի թողունակության և ջրման ժամկետի հիման վրա), ջրաչափական սարք (Յագուս) տեղադրվում է միայն ջրօգտագործողի պահանջի դեպքում:	Ջրօգտագործողների ընկերությունները չունեն մարդկային, տեխնիկական և ֆինանսական հնարավորություններ, շուրջ 600 հազ. հողակտորի վրա յուրաքանչյուր ջրման ընթացքում փաստացի ջրաչափություն իրականացնելու: Հաշվարկային մեթոդները նույնպես ընդունված մոտեցումներ են սպառված ջրի ծավալի որոշման համար:	Ներկայումս ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման առանձին տարածքներում անհրաժեշտության դեպքում իրականացվում են փաստացի ջրաչափություններ: Միաժամանակ իրականացվում են փաստացի ջրաչափության պիլոտային ծրագրեր: Առաջիկա վարկային ծրագրում դրված է նաև ջրաչափությունն ուժեղացնելու և խորացնելու խոշոր պիլոտային ծրագիր: Տարվում են աշխատանքներ փաստացի ջրաչափության ծավալների և ճշտության ավելացման ուղղությամբ:
Օրենքով նախատեսված է ԶՕԸ-ներում մի շարք	Դիտողությունը, ներքին կանոնակարգերի և	Մշակվում են ուղեցույցեր ներքին կանոնակարգերի ստեղծման,

ներքին կանոնակարգերի և գործավարական փաստաթղթերի պարտադիր առկայություն, սակայն դրանք հաստատված չեն և բացակայում են:	գործավարական փաստաթղթերի վերաբերյալ, ընդունված է:	հաստատման և կիրառման ուղղությամբ:
ԶՕԸ-ների կողմից իրականացվող ֆինանսական հոսքերի կանխատեսումների և տվյալ տարվա ընթացքում կատարված փաստացի ծախսերի միջև առկա են էական տարբերություններ: Մասնավորապես, կանխատեսվող էլեկտրաէներգիայի ծախսի և մեխանիկական եղանակով ձեռք բերված ջրառի ծախսերը զգալիորեն պակաս են կանխատեսվածներից: Տարվա ընթացքում տեղի են ունենում ծախսերի վերաբաշխումներ՝ ԶՕԸ-ների տարբեր ծախսային հոգվածների միջև: ԶՕԸ-ների կողմից իրականացվող ոռոգման ջրի պլանավորման գործընթացում առկա են էական շեղումներ տարեկան պլանային ջրի քանակի և փաստացի մատակարարված ջրի քանակի միջև: ԶՕԸ-ների անդամներին փաստացի մատակարարված ջրի քանակը զգալիորեն ցածր են պլանավորված ցուցանիշներից:	Էլ. էներգիայի չափաքանակների և մեխանիկական ջրառի ծավալները կանխատեսվում և պլանավորվում են՝ հաշվի առնելով նախորդ տարիների փաստացի տվյալները՝ միջին ջրապահովվածության տարիների համար: Պլանավորման ընթացքում հաշվի չեն առնվում խոնավ, ջրառատ և սելավաջրերով հարուստ տարիները, քանի որ հնարավոր չէ կանխատեսել այդ հանգամանքը և խիստ դիսկային է նման պլանավորման իրականացումը: 2012 թվականի ընթացքում քաղաքական և կարճաժամկետ են եղել սելավային հոսքերը, որի հետևանքով ոռոգում-ջրառ ընկերություններից փաստացի և պլանային մեխանիկական ջրառների ծավալները շեղվել են ընդամենը 1.7%, էլ. էներգիայի ծավալները՝ 5.7%-ով, ինչը եղանակային անկանխատեսելի պայմաններում լավ ցուցանիշ է: 2012 թվականի փաստացի ջրամատակարարումը դաշտում պակաս է եղել պլանավորված ծավալից մոտ 4%-ով, ինչը լավ ցուցանիշ է: Այս տարբերությունը կարող էր ավելի փոքր լիներ, եթե հաշվառվեին ապրիլ ամսին ջրօգտագործողներին անհատույց մատակարարված սելավաջրի փոքրածավալ քանակը:	Ոռոգման ոլորտում իրականացվող բարեփոխումները շարունակական բնույթ են կրում և պահանջում են ամենօրյա հսկողություն ու օպերատիվ արձագանք առաջացած խնդիրներին: Զրօգտագործողների ընկերությունների կայացմանը զուգընթաց առաջանում է նաև կառուցվածքային բարեփոխումների անհրաժեշտություն, ինչպես նաև կազմակերպչական համալիր միջոցառումների կիրառում՝ աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով: Զրօգտագործողների ընկերություններում պարբերաբար կատարվում են ուսումնասիրություններ և վերլուծություններ: Ուսումնասիրությունները և վերլուծությունները կատարվում են, մասնավորապես, ընկերությունների ֆինանսատնտեսական կայունության, տեխնիկական հնարավորությունների, ոռոգման ջրի մատակարարման արդյունավետության, մատակարարված ջրի հաշվառման բարելավման, ինչպես նաև կառուցվածքային փոփոխությունների ուղղություններով: Արդյունքում անցած տարիների ընթացքում սկզբնավորման պահից թվով 54 ջրօգտագործողների ընկերություններ վերակազմակերպվել են 42 ջրօգտագործողների ընկերությունների: Որպես կառուցվածքային բարեփոխումների շարունակություն՝ 2013 թվականին ևս 4 ջրօգտագործողների ընկերություններ («Կոտայք» և «Ջրվեժ-Ձորաղբյուր», ինչպես նաև «Շենիկ» և «Քարակերտ») վերակազմակերպվել են միացման ձևով, իսկ «Ազատ» և «Արտաշատ» ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Միաժամանակ «Մասիս» ջրօգտագործողների ընկերության վարչական խորհուրդը քննարկել է տնօրենի կադրային փոփոխության հարց:
«Հիդրովերանորոգում» ԱԿ-ի կողմից չի իրականացվել շուրջ 300 խմ բերվածքների բարձում և տեղափոխումը, ինչպես նաև՝ 11-ական հարթեցում, արդյունքում՝ 704.7 հազ. դրամ ենթակա է վերականգնման: «Մեյմանշին» ՍՊԸ-ի կողմից չի իրականացվել շուրջ 2076 խմ բերվածքների հարթեցում, արդյունքում՝ 846.2 հազ. դրամ ենթակա է վերականգնման: «Աշոկ շինարարական ֆիրմա» ՍՊԸ-ի կողմից չի իրականացվել 488 խմ բերվածքների բերման և տեղափոխման աշխատանքները, արդյունքում՝ 805.2 հազ. դրամ ենթակա է վերականգնման: «Որդի Մհեր» ՍՊԸ-ի կողմից չի իրականացվել 448 խմ բերվածքների հարթեցում, արդյունքում՝ 282.2 հազ. դրամ ենթակա է վերականգնման:	“Աշոկ շինարարական ֆիրմա” ՍՊԸ-ն, “Հիդրովերանորոգում” ԱԿ-ն, “Մեյ-Ման-Շին” ՍՊԸ-ն և “Որդի Մհեր” ՍՊԸ-ն ընդունել են ակտով արձանագրված համապատասխան գումարների ՀՀ պետական բյուջե վերականգնման պահանջը:	“Աշոկ շինարարական ֆիրմա” ՍՊԸ-ն, “Հիդրովերանորոգում” ԱԿ-ն, “Մեյ-Ման-Շին” ՍՊԸ-ն և “Որդի Մհեր” ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջե են փոխանցել ակտով արձանագրված համապատասխան գումարները:

Բացատրություն

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013թ. մարտի 22-ի թիվ 5/2 որոշմամբ հաստատված ընթացիկ հաշվետվության վերաբերյալ (ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե)

ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ և թերություններ	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ առարկություններ և բացատրություններ (ՀՀ վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշում)	Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման նպատակով ձեռնարկված քայլերի և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն
Ծավալային հավելագրում՝ 2,608.75 հազ. դրամի չափով:	2,608.75 հազ. դրամի չափով գումարը արձանագրված է եղել “Արարատշին” ԲԲԸ և “Սահակյանշին” ՓԲԸ կապալառու կազմակերպությունների մոտ՝ համապատասխանաբար 516.45 հազ. դրամ և 2,092.3 հազ. դրամ չափով:	“Արարատշին” ԲԲԸ և “Սահակյանշին” ՓԲԸ կապալառու կազմակերպությունների կողմից գումարները փոխանցվել են:
Անորակ աշխատանքներ՝ 47,158.19 հազ. դրամ:	Անորակ աշխատանքներ համարվել են ջրանցքների բետոնապատման ժամանակ շեպերում առաջացած ճաքերը, որոնք հիմնականում եղել են մինչև 3.0 մմ: Ըստ նորմատիվային փաստաթղթերի (СНИП 52-01-2003) բետոնի վրա առաջացած ճաքերի թույլատրելի չափը 0,2 մմ է, որոնք կազմել են ընդհանուրի ճաքերի մոտ 25 %-ը:	Արձանագրված ճաքերը՝ 47,158.19 հազ. դրամ գումարի չափով ամբողջությամբ վերացվել են: ԾԻԳ-ի կողմից ստեղծված հանձնաժողովը տեղում ուսումնասիրել է շինարարական կազմակերպությունների կողմից արդեն վերացված ճաքերը և կազմել համապատասխան ակտ:
Նախագծի կազմում բացակայում են նախագծային առաջադրանքը, ընդհանուր բացատրագիրը, շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծը:	Հաշվի առնելով “Ոռոգման համակարգերի վերականգնման հրատապ ծրագրի” իրականացման անհետաձգելիությունը, մրցույթներն անց են կացվել 2006թ. ՀՄՀ-Հայաստան ծրագրով իրականացված և ստացված նախագծերով, որոնք ներառել են գծագրեր, ծավալների ամփոփագրեր, ինչպես նաև տեխնիկական մասնագրեր: Չնայած շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծը բացակայել է, սակայն տեխնիկական մասնագրերը ներառել են շինարարական աշխատանքների կազմակերպման բաժին:	Թերի և բացակայող մասերը ծրագրի իրականացման ընթացքում հնարավորինս լրացվել են:
Շինարարական աշխատանքները կատարվել են փոփոխված նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա, որը մշակվել է համապատասխան շինարարական կազմակերպության կողմից՝ առանց համապատասխան լիցենզիայի:	Շինարարական կազմակերպությունների պայմանագրերի Փոփոխության պատվերները կատարվում են կապալառուի կողմից, այնուհետև համաձայնեցվում են շինարարության վերահսկող կազմակերպության և ԾԻԳ-ի ճարտարագետի հետ: Նման բնույթի նախագծային փոփոխությունների համար լիցենզիայի անհրաժեշտություն չկա:	-
Փոփոխված նախագծերը փորձաքննություն չեն անցել և սահմանված կարգով համաձայնեցված չեն:	Նախագծերի փոփոխման, այսինքն՝ փոփոխված պատվերների կազմման նպատակն է եղել՝ դաշտային աշխատանքների միջոցով ճշտել ջրանցքների փաստացի քայքայվածության աստիճանը, որոշել ծավալները, թեքությունները, որոնցից կախված պետք է ճշգրտվեին ծավալները: Քանի որ այդ փոփոխությունները միայն ծավալային բնույթի էին և չէին վերաբերվում նախագծային լուծումներին, հետևաբար փորձաքննության կարիք չկա:	-

Ծածկված աշխատանքների ակտերը կազմվել են թերի, սահմանված կարգի խախտումներով, ամբողջությամբ չեն նկարագրում շինարարական աշխատանքների կատարման փուլերը:	Ծածկված աշխատանքների ակտերը կազմվել են հիմնականում համաձայն տեխնիկական մասնագրերում ներառված աշխատանքների կատարման բնութագրերի, հերթականության և պահանջների:	Ծածկված աշխատանքների ակտերում եղած թերությունները կվերացվեն հետագա աշխատանքների ընթացքում:
Շինարարության վարման մատյանները լրացվել են թերի և սահմանված կարգի խախտումներով:	Շինարարության վարման մատյանները բաղկացած են երկու մասից, որոնցից մեկը լրացվում է կապալառուի կողմից, մյուսը՝ շինարարության վերահսկողի:	Լրացված մատյաններում կան որոշ թերություններ, որոնք ապագայում թույլ չտալու նպատակով ձեռք են առնվել համապատասխան միջոցներ:
Բացակայում են ջրանցքի հատակի խոռոչների տոփանման և հարթեցման ակտերը:	Հատակի խոռոչների տոփանման և հարթեցման ակտերը ներառվում են հատակի բետոնապատման ծածկված աշխատանքների ակտերում:	Հետագայում այդ երկու ակտերը կառանձնացվեն:
Հիդրոտեխնիկական բետոնի լաբորատոր փորձաքննության ակտերում նշված չեն ցրտադիմացկունության և ջրաթափանցիկության տվյալները:	Հիդրոտեխնիկական բետոնի լաբորատոր փորձարկումները ներառում են ինչպես ամրության, այնպես էլ ցրտադիմացկունության և ջրաթափանցիկության փորձարկումներ: Այդ երկու տեսակի փորձարկումները տեխնոլոգիական և ժամանակային տեսակետից խիստ տարբեր են: Ամրության փորձարկումների արդյունքները տրվում են առանձին, քանի որ շինարարության ընթացքում հնարավոր չէ ստանալ ցրտադիմացկունության և ջրաթափանցիկության փորձարկումներ արդյունքները ամրության փորձարկումների արդյունքների հետ միաժամանակ: Ցրտադիմացկունության և ջրաթափանցիկության մասին տվյալները առկա են և ներկայացվել են Վերահսկիչ պալատի հանձնաժողովին առանձին:	-
Տեղում կատարված ստուգումներից պարզվել է, որ ջրանցքների որոշ հատվածներում շեպերն ունեն երկայնական ճաքեր, որոնք խիստ կարիք ունեն լրացուցիչ հետազոտման և վերականգնման:	Ընդունվել է և կատարվել են համապատասխան հետազոտման ու վերականգնման աշխատանքներ:	Շեպերի երկայնական ճաքերի ուսումնասիրման աշխատանքները կատարվում են ուլտրաձայնային YK1401M սարքավորման միջոցով և ըստ չափագրված արդյունքների տվյալներին համապատասխան, իրականացվում է վերականգնման աշխատանքները:
Թափնի մայր ջրանցքի (ՊԿ0+00-ից ՊԿ102+46 հատված) բոլոր հատվածներն ուսումնասիրելու և մանրամասն զննելու արդյունքում պարզվեց, որ շրջադարձերի որոշ հատվածում, սխալ նախագծային լուծումների հետևանքով, ջուրը ջրանցքից դուրս է գալիս և ողողում ջրանցքի սպասարկման գոտին:	Թափնի մայր ջրանցքի աջ ճյուղի ՆԿ0+00-ՆԿ102+46 հատվածի վերականգնում կառույցի ջրանցքի նախագծային ջրթողունակությունը կազմում է Q=4,03 խոր.մետր/վրկ: Ջրանցքը վերականգնելուց հետո փոխվել են ջրանցքի հիդրավլիկական էլեմենտները՝ շփման գործակցի փոքրացման հետևանքով ջրանցքում ջրի արագությունը մեծացել է, որը բերել է ջրանցքում ջրի տրման քանակի ավելացման՝ մինչև Q=5-5.5 խոր.մետր/վրկ: 2012թ. սակավաջուր տարվա որոշ ժամանակահատվածում պահանջվեց ջրանցքով բաց թողնել ավել ջրի քանակ, քան վերը նշված քանակը և այդ ժամանակ հիմնականում ջրանցքի ՆԿ17+40-ՆԿ17+95 հատվածներից տեղի ունեցավ ջրի արտահոսք:	Ներկայումս ջրանցքի այդ հատվածը բարձրացված է և ջրի արտահոսք տեղի չի ունենում:

Բացատրություն

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013թ. մարտի 22-ի թիվ 5/3 որոշմամբ հաստատված ընթացիկ հաշվետվության վերաբերյալ (ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե)

ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ և թերություններ	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ առարկություններ և բացատրություններ (ՀՀ վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշում)	Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման նպատակով ձեռնարկված քայլերի և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն
Նախագծի կազմում ներկայացված չեն մաքրման կայանների կառուցման տեղամասերի բարեկարգման, արտաքին լուսավորության, ուղղաձիգ և հորիզոնական հատակագծման /տեղակայման/, մոտեցնող և ներհրապարակային ճանապարհների նախագծային մշակումները: Բացակայում են համալիրի ավտոմատիկայի և ճաղավանդակային շենքի ջեռուցման համակարգի նախագծերը:	Ընդունվել է:	Մշակվել և ներկայացվել են բարեկարգման, արտաքին լուսավորության, ուղղաձիգ և հորիզոնական հատակագծման, մոտեցնող և ներհրապարակային ճանապարհների ու ավտոմատիկայի, ջեռուցման համակարգերի գծագրերը:
Նախահաշվային մասը չի ներկայացվել փորձաքննության: Փորձաքննության եզրակացության դիտողությունները և լրամշակումները, որոնք պետք է կատարվեին մինչև նախագծի հաստատումը, չեն իրականացվել և չեն ներկայացվել կրկնակի փորձաքննության:	Նախահաշվային փաստաթղթերը չեն ներկայացվել փորձաքննության, որովհետև համաձայն ՖԻԴԻԿ դեղին գրքի՝ այն կազմված է ընդհանուր խոշորացված գումարներով:	Համաձայն Փորձաքննության եզրակացության դիտողությունների՝ Նախագիծը լրամշակվել և ներկայացվել է կրկնակի փորձաքննության:
Մաքրման կայաններում փաստացի մոնտաժված սարքավորումների որոշ մասը թուրքական արտադրության են՝ պայմանագրով նախատեսված գերմանական կամ իտալականի փոխարեն, բացակայում է այդ մասով պայմանագրային գումարի համապատասխան փոփոխությունը:	Մաքրման կայաններում փաստացի մոնտաժված սարքավորումները գերմանական են՝ բացառությամբ ճաղավանդակների, որոնք թուրքական արտադրության են և պահանջված տեխնիկական պարամետրերն ունեն: Այդ մասով պայմանագրային գումարի համապատասխան փոփոխություն չի առաջանում:	-
Նախագծային փաստաթղթերը համաձայնեցված չեն տեղական ինքնակառավարման մարմինների հետ. 1. Բացակայում է Գավառ քաղաքի շինարարության թույլտվությունը, 2. Մարտունի և Վարդենիս քաղաքների շին. թույլտվությունները տրվել են 2011 թ. մայիսին՝ 10 ամիս ժամկետով, սակայն շինարարությունը մինչ օրս ավարտված չէ:	Ընդունվել է:	Նախագծային փաստաթղթերը արդեն իսկ համաձայնեցված են համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների հետ. 1. Գավառ ԿՄԿ-ի շինարարության թույլտվությունը արդեն իսկ տրվել է քաղաքապետարանի կողմից. 2. Մարտունի և Վարդենիս քաղաքների շին. թույլտվություններն երկարաձգվել են մինչև պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտը:
Բացակայում են 1. Օգտագործված շինարարական նյութերի որակի հավաստագրերը 2. Շենքի առանցքների նշահարման ակտերը 3. Արտաքին ինժեներական ցանցերի կատարողական	1. Որակի հավաստագրեր չեն ներկայացվել միայն որոշակի օգտագործված շինարարական նյութերի համար 2. Շենքերի առանցքների նշահարման ակտերը կազմված են եղել, սակայն չեն հաստատվել 3. Արտաքին ինժեներական ցանցերի կատարողական գծագրերը	1. Օգտագործված որոշակի շինարարական նյութերի որակի հավաստագրերը լրացուցիչ ներկայացվել են. 2. Շենքերի առանցքների նշահարման ակտերը կազմվել և ներկայացվել են լրացուցիչ,

գծագրերը	գտնվում են պատրաստման փուլում	3. Արտաքին ինժեներական ցանցերի կատարողական գծագրերն արդեն իսկ ներկայացվել են:
Վարման մատյանը լրացված է թերի, սահմանված կարգի խախտումներով:	Ընդունվել է:	Վարման մատյանը լրացվել է ամբողջովին և վերացվել են թույլ տրված շեղումները:
Տեխնիկական և Հեղինակային հսկողությունները իրականացվել են թերի:	Հեղինակային հսկողություն պայմանագրով նախատեսված չի եղել	Տեխնիկական հսկողության իրականացման ընթացքում բաց թողնված թերությունները շտկվել են:
Շինարարության ընթացքում որոշ հատվածներում արձանագրվել են 18,900 եվրո գումարի անորակ աշխատանքներ (Վարդենիսի ԿՄԿ-ի տարածքի ասֆալտբետոնե ծածկի տեղադրման աշխատանքներ), 190.6 հազ. եվրո գումարի չկատարած աշխատանքներ (արհեստանոցի սարքավորումներ, տարածքի դրենաժ, հեղեղումից պաշտպանող միջոցառումներ, գործիքավորման վերահսկում, Վարդենիս քաղաքում գլխավոր ճանապարհից դեպի ԿՄԿ տանող 900 մ երկարությամբ մոտեցնող ճանապարհի հատված, անձրևաջրերի հեռացման համակարգ):	Արհեստանոցի սարքավորումները մատակարարված են եղել մասամբ: Շինարարական աշխատանքների ընթացքում ձեռնարկվել են միջոցառումներ գրունտային ջրերի մակարդակն իջեցնելու համար, որպեսզի վարչական և ճաղավանդակային շենքերի հիմքերի տեղադրման աշխատանքներն իրականացվեն չոր պայմաններում: Հեղեղումից պաշտպանվելու համար նախատեսված է եղել հենապատերի տեղադրում գաբիոններից: Կոյուղու մաքրման կայանների մուտքի և ելքի մասերում /հոսքաչափի հոր/ տեղադրված են ավտոմատ սարքավորումներ, որոնք կատարում են կեղտաջրերի մաքրման հոսքերի չափագրում, որը տվյալները հաղորդում է համակարգչին և վերահսկվում օպերատորի կողմից: Մոտեցնող ճանապարհի ասֆալտապատման աշխատանքները չեն իրականացվել եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով: Ջրհորդաններին կից ձագարների և ջրահեռացման կանգնակների տեղադրումը նույնպես չեն իրականացվել եղանակային անբարենպաստ պայմաններից ելնելով: Աշխատանքներն իրականացվել են աշնան եղանակային անբարենպաստ պայմաններում, որի արդյունքում ասֆալտբետոնե ծածկի մանրահատիկ շերտը տեղադրվել է թերություններով:	Ակտով արձանագրված արհեստանոցի սարքավորումների, տարածքի դրենաժի, հեղեղումից պաշտպանող միջոցառումների, ինչպես նաև գործիքավորման վերահսկման աշխատանքներն ամբողջությամբ իրականացված են: Միաժամանակ ակտով արձանագրված և անորակ համարված Վարդենիսի ԿՄԿ-ի տարածքի, Վարդենիս քաղաքում գլխավոր ճանապարհից դեպի ԿՄԿ տանող 900 մ երկարությամբ հատվածի չիրականացված ասֆալտապատման, ինչպես նաև անձրևաջրերի հեռացման համակարգի աշխատանքները, համաձայն անավարտ աշխատանքների և թերությունների ցանկի, կիրականացվեն մինչև 2013 թվականի մայիսի 30-ը:

Բացատրություն

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013թ. մարտի 22-ի թիվ 5/5 որոշմամբ հաստատված ընթացիկ հաշվետվության վերաբերյալ (ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե)

ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ և թերություններ	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ առարկություններ և բացատրություններ (ՀՀ վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշում)	Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման նպատակով ձեռնարկված քայլերի և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն
18.323.0 հազ. դրամ ծավալի աշխատանքների չափով կատարվել են խնայողություններ, որը համաձայն պայմանագրի 5.3 կետի՝ ենթակա է հավասարապես բաշխման Կապալառուի և Պատվիրատուի միջև, որի արդյունքում 9,161.5 հազ. դրամ փոխանցվել է Կապալառուի հաշվին: Ըստ պայմանագրի 5.3 կետի՝ «Սույն պայմանագրի կատարման արդյունքում կապալառուի ստացած խնայողությունը բաշխվում է կողմերի միջև հավասարաչափ», այսինքն, մինչև պայմանագրի ավարտը, որի կատարման վերջնական ժամկետ է սահմանվել 2017 թվականը: Այսպիսով, 9,161.5 հազ. դրամ գումարը ենթակա է կապալառու կազմակերպությունից հետ վերադարձման մինչև ծրագրի ավարտը:	2010 թվականի ընթացքում Կապալառուի կողմից կատարված աշխատանքների ընթացքում ստացվել էր 18.323 հազ. դրամի խնայողություն, որի 50%-ը՝ 9161.5 հազ. դրամը փոխանցվել էր Կապալառուին: ՀՀ վերահսկիչ պալատի արձանագրության համաձայն՝ 9161.5 հազ. դրամ գումարը ենթակա է Կապալառու կազմակերպությունից հետ վերադարձման մինչև ծրագրի ավարտը՝ 2017 թվականը: Կապալառու կազմակերպության հետ առկա է պայմանավորվածություն՝ համաձայն որի նշված գումարը համաձայնեցված կարգով կծախսվի թունելում համապատասխան աշխատանքների իրականացման վրա: Այդ առումով պայմանագրում կկատարվեն համապատասխան փոփոխություններ:	Մինչև ծրագրի ավարտը գումարը ետ կգանձվի, ծրագրի ավարտից հետո ստացված խնայողությունները կբաշխվեն համաձայն պայմանագրի:
2010 թվականի ընթացքում 102617,4 հազ. դրամի աշխատանքներ կատարվել են օրացուցային գրաֆիկով նախատեսված ժամկետի խախտումով, որի համար հաշվարկվել է տույժ 2154,9 հազ. դրամի չափով:	Ընդունվել է:	Գումարը փոխանցվել է:
Նախագծով նախատեսված երկաթբետոնյա երեսարկը համեմատելով փաստացի կատարվածի հետ՝ պարզվել է, որ A տեսակի 210,114,1 հազ. դրամ արժեքով, 84,2 գծմ երկարությամբ երեսարկը բետոնացվել է առանց համաձայնեցված նախագծի:	Թունելի որոշակի հատվածներում հաճախակի առաջանում են անկանխատեսելի հետևանքներով հղի վթարային իրավիճակներ, փլուզվածքներ, որոնց վերացումը կատարվում է Պատվիրատու, Կապալառու և Խորհրդատու կազմակերպությունների ներկայացուցիչների համատեղ քննարկման արդյունքում արված առաջարկությունների հիման վրա՝ մինչև համապատասխան նախագծային փոփոխություններ կատարելը:	Խորհրդատու կազմակերպության կողմից 84,2 գծմ երեսարկի A տիպով կառուցման համար փոփոխված նախագծերը կատարված և հանձնված են Պատվիրատուին: Ընդ որում, գումարի փոփոխություն չի եղել:
Շինարարություն իրականացվում է երեք հերթափոխով, նախագծով նախատեսված չորսի փոխարեն, և յուրաքանչյուր հերթափոխում աշխատում են 18-ից 20 բանվոր:	Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում Պատվիրատուն համաձայնել է Խորհրդատուի և Կապալառուի առաջարկության հետ՝ հաշվի առնելով, որ 11.5 կմ-ի վրա բանվորների և բեռների տեղափոխումը կատարվում է միայն մեկ կողմից և տևում է երկու ժամ:	Շինարարության ընթացքում աշխատանքների որակը չի տուժել:
Պատվիրատուի կողմից շինարարական մրցույթի առաջարկի քննարկման փուլում հաշվի չի առնվել կոնֆիդենցիալ նախահաշվի և մրցույթի հարթող մասնակցի կողմից ներկայացված մի շարք շինարարական աշխատանքների միավոր գների զգալի	Մրցույթային հանձնաժողովը գործել է «Պետական գնումների մասին» ՀՀ օրենքի սահմաններում:	-

տարբերությունները: Պատվիրատուի մոտեցումը ռիսկային է, քանի որ հաշվի է առնվել միայն մրցույթի հաղթողի կողմից ներկայացված ցածր գինը:		
Ստուգումներով պարզվել է, որ շուրջ 39 տն պակաս քաշով նոր մետաղական ամրակապեր են տեղադրվել, որը, ըստ ծավալաթերթի, կազմում է 1,354.5 հազ. դրամ:	Ընդունվել է:	Գումարը փոխանցվել է:
Ծավալաթերթի առանձին կետերում նախատեսված են աշխատանքներ, որոնք բացակայում են նախահաշվում՝ օրինակ՝ 1. Ապամոնտաժված և քանդումից առաջացած բեռների տեղափոխում 11.5 կմ թափոնավայր: 2. Նախատեսված է 358,35 տն քաշով նոր և հին մետաղական կոնստրուկցիաների ապամոնտաժում: Մետաղը դիտարկվել է որպես շինարարական աղբ և նախատեսվել դրանց տեղափոխումը թափոնավայր՝ 11.5 կմ հեռավորության վրա: 3. Բաց է թողնված տարբեր կտրվածքով և մակնիշով 20508 մ էլեկտրական մալուխներ: 4. Կետ 7,15 բացակայում է մոնտաժվող և ապամոնտաժվող ուժային էլեկտրասարքավորումների ցանկը:	1. «Թափոնավայր» բառը վրիպակ է նախագծում, 11.5 կմ երկարությունը թունելում շինարարական տեղամասի հեռավորությունն է Եղեգիսի շինարարական բազայից: 2. 358.35 տն քաշով մետաղական ամրակապերը էլեկտրաքարշերով թունելից դուրս բերելը հնարավոր է միայն, երբ տեղափոխվող էլեմենտի քաշը չի գերազանցում 50 կգ-ը, և ապահովվում են համապատասխան չափերը: Արդյունքում դա սև մետաղի ջարդոն է և պահեստավորվում է Եղեգիսի շինհրապարակում: Ժամանակ առ ժամանակ կներկայացվի վաճառքի: 3. Մալուխների քանակների և տիպերի բազմազանությունից ելնելով՝ նշվել են միայն նախահաշիվներում, բացատրագրերում և գծագրերում: 4. Նշված են բացատրագրերում և գծագրերում:	-
Համաձայն ՀՀ-ում գործող ՀՀՇՆ/IV-11.05.04-97 նախագծային նորմերի 6,2 կետի՝ ստորգետնյա կառույցները շինարարության ընթացքում պետք է ապահովված լինեն հրատապ և հեռախոսային կապի միջոցներով, որը բացակայում է տվյալ նախագծի կազմում:	Կապալառուի հետ քննարկվել և ձեռք է բերվել համապատասխան պայմանավորվածություն՝ ս/թ սեպտեմբեր ամսին «Արփա-Աևան» թունելում շինարարական-վերականգնման աշխատանքները սկսելիս շինարարական տեղամասը կապի միջոցներով ապահովելու համար:	Թունելով ջրի տեղափոխումը դադարեցնելուց հետո հարցը լուծում կստանա:
Եղեգիսի կիրճում կառուցված բոլոր շենք-շինությունները, արտադրամասերը չեն հանձնվել պատվիրատուին շահագործման, իսկ շինհրապարակի հողամասից 3000 քմ տարածքով հատված, որի վրա են գտնվում արտադրական շինությունների մի մասը, համաձայն սեփականության իրավունքի վկայականի, պատկանում է «Արփա-Աևան» ԲԲԸ-ին: Վերոհիշյալ 3000 քմ հողատարածքը գյուղական նշանակության հողատարածք է:	Շենք-շինությունների նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքները շարունակելու և ավարտին հասցնելու նպատակով անհրաժեշտ է կատարել շենք-շինությունների և հողատարածքի քարտեզագրման և չափագրման աշխատանքներ: «	«ԱՍԹՎ ԾԻԳ» ՊՀ-ի տարեկան ծախսերի նախահաշվում նախատեսվում է կատարել համապատասխան փոփոխություն:
Պայմանագրի 5.3 կետն այսուհետ շարադրել հետևյալ կերպ՝ 1. Ծրագրի ավարտին առաջացած գումարային խնայողություններն օգտագործել միայն թունելի ներսում շին. վերանորոգման աշխատանքների իրականացման նպատակով: 2. Խնայողություններից առաջացած գումարների հաշվին կատարվող աշխատանքներն իրականացնել միայն համաձայնեցված նախագծի առկայությամբ:	Ընդունվել է:	Կապալառուի հետ կնքված գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին Վերահսկիչ պալատի կողմից արված առաջարկությունները գտնվում են Կապալառուի հետ քննարկման փուլում:

Բացատրություն

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013թ. մարտի 22-ի թիվ 5/9 որոշմամբ հաստատված ընթացիկ հաշվետվության վերաբերյալ (ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե)

ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ և թերություններ	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ առարկություններ և բացատրություններ (ՀՀ վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշում)	Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման նպատակով ձեռնարկված քայլերի և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն
ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե Ապահովել վարկային և ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցներով ձեռք բերված գույքի հաշվառումը ՀՀ և միջազգային հաշվապահական ստանդարտներին համապատասխան: Ծրագրի շրջանակներում ներգրավված վարկային միջոցների և ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցներով շինարարական աշխատանքների և մատուցված ծառայությունների արդյունքում ձևավորված ակտիվները, ինչպես նաև ծրագրի շրջանակներում ձեռք բերված և Ընկերությանը ի պահ հանձնված՝ չօգտագործված 324,387.5 հազ.դրամ արժեքով ապրանքանյութական արժեքներն անհրաժեշտ է սահմանված կարգով ամրացնել <<Հայաստանի Հանրապետության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկին, գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարելով Ընկերության միջոցների հաշվին:	Համաձայն “Երևան Զուր” ՓԲԸ-ի կողմից ներկայացված տեղեկատվության, 2009թ. հունիսի 1-ից մինչև 2009թ. հունիսի վերջն ընկած ժամանակահատվածում “Երևան Զուր” ՓԲԸ-ն սկզբնական հաշվառման բոլոր փաստաթղթերը վերականգնել է միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան: 2010թ. հունվարի 1-ից “Երևան Զուր” ՓԲԸ-ն հաշվապահական հաշվառումը վարում է միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան: Միաժամանակ “Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ” ՊԸ-ի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ վարկային և ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցներով ձեռք բերված գույքը հաշվառվում է հաշվապահական “Հայկական ծրագրերով”, որը պարբերաբար թարմացվում է: Ընդունվել է:	Հետագայում նշված գույքը “Երևան Զուր” ՓԲԸ-ին հանձնելուց հետո վերջինիս կողմից կհաշվառվի միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտների համապատասխան: Մշակվել է ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծ, որով ծրագրի շրջանակներում ներգրավված միջոցներով կատարված շինարարական աշխատանքների և մատուցված ծառայությունների արդյունքում ձևավորված ակտիվները, ինչպես նաև ծրագրի շրջանակներում ձեռք բերված և ընկերությանն ի պահ հանձնված՝ չօգտագործված 324,387.4 հազ. դրամի ապրանքանյութական արժեքներն ամրացվելու են “ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմ” պետական կառավարչական հիմնարկին: Որոշման նախագծով նախատեսվում է նշված գույքի “Երևան Զուր” ՓԲԸ-ի կողմից հետագա օգտագործման և տիրապետման, ինչպես նաև գույքի գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը “Երևան Զուր” ՓԲԸ-ի միջոցների հաշվին կատարելու հետ կապված հարցերի կանոնակարգում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Միեր Մկրտչյան 5^թ, հեռ.՝ (+374 10) 54 56 37, ֆաքս (+374 10) 54 39 85
Էլ-փոստ՝ a.shaboyan@competition.am, վեբ կայք՝ <http://www.competition.am>

« _____ » _____ 20 ____թ.

No _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի ղեկավար
պարոն Վ. Գաբրիելյանին

Ձեր՝ 24.05.2013թ. թիվ 02/23.14/7210-13

Հարգելի պարոն Գաբրիելյան

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013 թվականի մարտի 22-ի թիվ 5/10 որոշմամբ հաստատված ընթացիկ հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) եզրակացությունների և առաջարկությունների կապակցությամբ հայտնում եմ հետևյալը.

1. 2013 թվականի մայիսի 30-ին ընդունվել է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական Հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նախագահի թիվ 103-Ա հրամանը, որով ապահովվելու է Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության գործընթացի կանոնակարգումը:

2. Ներկայումս աշխատանքներ են իրականացվում Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոցների կիրառման չափանիշների որոշման վերաբերյալ ուղեցույցի մշակման ուղղությամբ, որը կհստակեցնի պատասխանատվության միջոցների կիրառման կարգը, տուգանքների հաշվարկման մեթոդաբանությունը: Ուղեցույցը նախատեսվում է ընդունել մինչև 2013 թվականի հունիսի 1-ը:

3. Միաժամանակ հարկ է նշել, որ Հանձնաժողովի կողմից նշանակվող տուգանքների գանձման մեխանիզմների կատարելագործման նպատակով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում

լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվել էր Հանձնաժողովի որոշմամբ սահմանված ժամկետում տնտեսվարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տուգանքը չվճարելու դեպքում կիրառել տույժ՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար տուգանքի չվճարված մասի 0,1 տոկոսի չափով, սակայն այդ առաջարկության վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունը ներկայացրել է բացասական կարծիք: Տվյալ հարցը նախատեսվել է քննարկել ՀՀ վարչապետի մոտ, սակայն դեռևս քննարկումը տեղի չի ունեցել:

Այդուհանդերձ, ներկայումս մշակվել է Հանձնաժողովի որոշումների անհապաղ կատարումն ապահովող նոր մեխանիզմ, որի մասին համապատասխան առաջարկություն է ներկայացվել ՀՀ արդարադատության նախարարություն: Վերջինս դեռևս չի հայտնել դիրքորոշում ներկայացված առաջարկության վերաբերյալ:


Հարկ է նշել նաև, որ ԱՄՆ ՄԶԳ ծրագրի շրջանակներում Հանձնաժողովին խորհրդատվական ծառայություններ մատուցող Ստյուարտ Հիրշֆելդը առաջարկել է Հանձնաժողովի որոշումների կատարման արդյունավետության բարձրացմանն ուղղված Հանձնաժողովի համար ընդունելի այլ մեխանիզմներ, որոնց կիրառման հնարավորությունը և հեռանկարները քննարկվում են Հանձնաժողովում: Մասնավորապես, առաջարկվել է, որ տնտեսվարող սուբյեկտները տուգանքը վճարեն Հանձնաժողովի որոշման բողոքարկման պահին: Տուգանքի գումարը նպատակահարմար է փոխանցել տոկոսային եկամուտ ունեցող հաշվի վրա: Վարույթի ավարտից գործը շահող կողմը կստանա նշված հաշվի ողջ գումարը՝ ներառյալ տոկոսները: Նշված մեխանիզմի կիրառումը հնարավորություն կընձեռի Հանձնաժողովին և տնտեսվարող սուբյեկտներին խուսափել դրամի արժեզրկման և տնտեսական պայմանների այլ փոփոխությունների հետ կապված հնարավոր բացասական հետևանքներից, կնպաստի Հանձնաժողովի որոշման կատարումից խուսափելու նպատակով Հանձնաժողովի որոշումների դեմ բերվող բողոքների քանակի նվազեցմանը:

Կարծում ենք, որ վերը ներկայացված մեխանիզմը բավականին իրատեսական է, և դրա ընդունման դեպքում ՀՀ վերահսկիչ պալատի կողմից բարձրացված խնդիրները հիմնականում կլուծվեն:

Հարգանքով՝



Ա. Շաբոյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ Ն Ա Խ Ա Ր Ա Ր

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Նալբանդյան 28
Հեռ. (374 10) 59 00 01, Ֆաքս (374 10) 56 05 28
Էլ.Փոստ Minister@mtc.am

N _____

“ _____ ” _____ 2013թ.

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

պարոն Վ.ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գաբրիելյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2013 թվականի մայիսի 24-ի թիվ 02/23.14/7210-13 հանձնարարականի ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1646 որոշման պահանջների կատարումն ապահովելու նպատակով, ՀՀ կառավարության կայքէջում տվյալ նյութը տեղադրելու համար ներկայացվում է տեղեկատվություն՝ 2013 թվականի մայիսի 23-ին ՀՀ կառավարության նիստում քննարկված ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը վերագրվող մասով ՀՀ վերահսկիչ պալատի 2012 թվականի տարեկան հաշվետվությամբ արձանագրված խախտումների, առարկությունների և բացատրությունների, ինչպես նաև դրանց վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ:

Առդիր՝ 7 թերթ:

Հարգանքով՝

Վ.ԲԵԳԼԱՐՅԱՆ

Բացատրություններ

**ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013թ. մարտի 29-ի թիվ 7/1 որոշմամբ հաստատված ՀՀ վերահսկիչ պալատի 2012թ տարեկան հաշվետվության վերաբերյալ
(ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության)**

ՀՀ	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ բացատրություններ (ՀՀ վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշում)	Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման նպատակով ձեռնարկված քայլերի և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն
1. ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված այն խախտումները, որոնք ընդունվել են			
1.	չունենալով որոշակի աշխատանքների համար լիազոր մարմնի կողմից հաստատված նախահաշվային միավոր արժեքներ, նախահաշիվներում հաճախ կիրառվել են ոչնչով չհիմնավորված, այդ աշխատանքների իրական արժեքները զգալիորեն գերազանցող արժեքներ, ինչը հանգեցրել է նախահաշվային արժեքների էական ավելացման	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչ օրս ՀՀ լիազոր մարմնի կողմից չկան մշակված, տեղայնացված և հաստատված ճանապարհաշինարարական աշխատանքներում էական տեսակարար կշիռ ունեցող նոր տիպերի և ժամանակակից մեքենա-մեխանիզմների օգտագործմամբ իրականացվող մի շարք աշխատանքների նախահաշվային արժեքները, ինչպես նաև այդ արժեքների որոշման համար ՀՀ-ում չկա հստակ գործող նորմատիվներ, ապա նոր տիպերի և ժամանակակից մեքենա-մեխանիզմների օգտագործմամբ իրականացվող մի շարք աշխատանքների նախահաշվային արժեքները որոշելու և կիրառելու համար նախագծային կազմակերպությունները առանձին դեպքերում ստիպված են եղել կողմնորոշվել նախկին ԽՍՀՄ-ում օգտագործված ՇՆուԿ-ում տրված միավոր արժեքների որոշման չափորոշիչներով կամ դիմել ՀՀ-ում նմանատիպ տեխնիկա ունեցող և շահագործող կազմակերպություններին, որպեսզի ներկայացնեն իրենց կողմից նոր տիպերի տեխնիկայի շահագործման ժամանակափուլի հաշվարկման արդյունքում ստացված արժեքները, իսկ առանձին դեպքերում ուղղակի կողմնորոշվել են ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից տրված տեղեկանքում նշված արժեքով	2013 թվականի հունվարի 30-ին թիվ 01/14.2/1149-13 գրությամբ դիմել է ՀՀ քաղաքաշինության նախարարին՝ ճանապարհաշինական նորմերը վերանայելու և հստակեցնելու առաջարկությամբ
2.	նախագծերում օգտագործվող նյութերի ծագումը չնշելու հետևանքով հաշվարկներում կիրառելով հնարավոր ամենաբարձր գները և նախատեսելով շինարարական նորմերով ու կանոններով չնախատեսված աշխատանքներ, էականորեն ավելացվել են նախահաշվային արժեքները	Լիազմակերպությունները առանձին դեպքերում ստիպված են եղել կողմնորոշվել նախկին ԽՍՀՄ-ում օգտագործված ՇՆուԿ-ում տրված միավոր արժեքների որոշման չափորոշիչներով կամ դիմել ՀՀ-ում նմանատիպ տեխնիկա ունեցող և շահագործող կազմակերպություններին, որպեսզի ներկայացնեն իրենց կողմից նոր տիպերի տեխնիկայի շահագործման ժամանակափուլի հաշվարկման արդյունքում ստացված արժեքները, իսկ առանձին դեպքերում ուղղակի կողմնորոշվել են ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից տրված տեղեկանքում նշված արժեքով	Նախագծային կազմակերպություններին կառաջարկվի նախագծերում նշել նյութերին ներկայացվող պահանջները
3.	նախագծվել և իրականացվել են Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվային ակտերով չնախատեսված աշխատանքներ, ինչի արդյունքում հնարավոր չի եղել իրականացնել այդ աշխատանքների նկատմամբ որակի վերահսկողություն	Լիազմակերպությունները առանձին դեպքերում ստիպված են եղել կողմնորոշվել նախկին ԽՍՀՄ-ում օգտագործված ՇՆուԿ-ում տրված միավոր արժեքների որոշման չափորոշիչներով կամ դիմել ՀՀ-ում նմանատիպ տեխնիկա ունեցող և շահագործող կազմակերպություններին, որպեսզի ներկայացնեն իրենց կողմից նոր տիպերի տեխնիկայի շահագործման ժամանակափուլի հաշվարկման արդյունքում ստացված արժեքները, իսկ առանձին դեպքերում ուղղակի կողմնորոշվել են ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից տրված տեղեկանքում նշված արժեքով	Նախագծային կազմակերպություններին կառաջարկվի նախագծային փաստաթղթերը կազմելիս առաջնորդվել ՀՀ-ում գործող նորմատիվային փաստաթղթերով, իսկ դրանց բացակայության դեպքում դիմել համապատասխան մարմիններին այլ նորմատիվներ կիրառելու հնարավորության համար:

<<	<< վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ	<< վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ բացատրություններ (<< վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշում)	Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման նպատակով ձեռնարկված քայլերի և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն
4.	աշխատանքներն իրականացնելիս օգտագործվել են FOCT-ով նախատեսվածից ավելի ցածր մարկայի ասֆալտբետոնյա խառնուրդներ և անհայտ ծագման ու որակի բիտում	Հայաստանի Հանրապետություն բիտումը հիմնականում ներկրվում է արտերկրից և չի հանդիսանում պարտադիր սերտիֆիկացման ենթակա ապրանք: Ներմուծող կազմակերպությունները բիտումի ծագման հավաստագրերի պատճենները տրամադրում են կապալառուներին: Հանրապետությունում չկա որևէ լաբորատորիա, որը կկարողանա որոշել բիտումի քիմիական բաղադրությունը և ողջ որակական հատկանիշները:	Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ << տրանսպորտի և կապի նախարարությունը << կառավարություն կներկայացնի առաջարկություն բիտումի լաբորատորիա ձեռք բերելու վերաբերյալ Կապալառուներին կառաջարկվի պարտադիր կերպով պահպանել բիտումի ծագման սերտիֆիկատները
5.	ասֆալտբետոնե խառնուրդի պատրաստման ժամանակ, հաշվի չառնելով բնակլիմայական գոտիները և ճանապարհների տեխնիկական կարգերը, համատարած օգտագործվել է նույն կարգի բիտում		Նախագծային, տեխնիկական հսկողություն և շինարարական աշխատանքներ իրականացվող կազմակերպություններից կպահանջվի ապահովել համապատասխան մարկայի բիտումի օգտագործումը՝ ելնելով ճանապարհների տեխնիկական կարգից:
6.	իրականացվել են աշխատանքներ առանց անհրաժեշտ լաբորատոր հետազոտությունների, կան նաև իրականացված լաբորատոր հետազոտություններ, որոնց արդյունքներն իրենց հերթին արժանահավատ չեն, բացի այդ աշխատանքներն ընդունելիս չեն իրականացվել նորմերով նախատեսված անհրաժեշտ բոլոր ստուգումները	Խախտման հետ կապված պարզաբանումներ են տվել համապատասխան կապալառու կազմակերպությունները: Պարզաբանումների համաձայն իրենց պատկանող ասֆալտբետոնի արտադրության գործարանի տարածքում առկա է պարտադիր պահանջ հանդիսացող լաբորատորիա, որի միջոցով ստուգվում է արտադրված ասֆալտբետոնե խառնուրդի որակը և բաղադրությունը: Ասֆալտբետոնի սկզբնական արտադրանքի համար հիմք է ծառայել նմանատիպ աշխատանքների համար ընկերությունում գոյություն ունեցող ասֆալտբետոնի խառնուրդի ընտրության արդյունքները, որովհետև 2012թ. ընթացքում քարային նյութերի հանքավայրի փոփոխություն տեղի չի ունեցել:	Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպություններին կառաջարկվի ավելի մեծ ուշադրություն դարձնել կատարվող լաբորատոր հետազոտություններին

<<	<< վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ	<< վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ բացատրություններ (<< վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշում)	Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման նպատակով ձեռնարկված քայլերի և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն
		Ասֆալտբետոնի տեղադրման ընթացքում համապատասխան չափաբաժնից վերցվել է փորձանմուշ, բայց անկախ լաբորատորիա ուղարկվել է ուշացումով: Քանի որ շինարարական աշխատանքների կատարողական ակտը ներկայացվել է ավելի ուշ, ուստի սկզբնական շրջանում կապալառուն պատվիրատուին լաբորատոր փորձարկման արդյունքներ չի ներկայացրել: Կատարողական ակտի հետ միասին կապալառուն ներկայացրել է բոլոր լաբորատոր փորձարկման արդյունքները:	
7.	Նախագծերով չեն հիմնավորվել աշխատանքների համար սահմանված երաշխիքային ժամկետները, իսկ նախագծային փոփոխությունները կատարվել են << օրենսդրության պահանջների խախտումով		Նախագծային կազմակերպություններին կառաջարկվի նախագծերում նշել աշխատանքների երաշխիքային ժամկետները, իսկ նախագծերը փոփոխելիս պահպանել << օրենսդրության պահանջները
8.	Ճանապարհի պահպանման աշխատանքների համար կազմված բյուջետային հայտի հաշվարկները արժանահավատ չեն, բացի այդ ճանապարհի սպասարկման մակարդակների կամայական փոփոխության արդյունքում տեղի են ունեցել աշխատանքների թանկացումներ	Պահպանման աշխատանքների հաշվարկները կատարվել են և հայտերը կազմվել են << ֆինանսների նախարարության հետ համաձայնեցված սահմանային գներով:	
9.	չի հիմնավորվել և չի վերահսկվել գծանշման աշխատանքների համապատասխանությունը գործող ստանդարտներին	Ճանապարհների գծանշման աշխատանքների համար ներկանյութերը ձեռք բերելիս տրամադրվել են սերտիֆիկատներ, որոնք հավաստում են տվյալ ներկի պիտանիությունը ճանապարհների գծանշման համար: Ներկանյութերի պահանջվող պայծառության, լուսանդրադարձելիության և լուսարտացուման գործակցի	Անհրաժեշտ ֆինանսավորման առկայության դեպքում ձեռք կբերվեն համապատասխան լաբորատոր սարքավորումներ:

<<	<< վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ	<< վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ բացատրություններ (<< վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշում)	Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման նպատակով ձեռնարկված քայլերի և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն
		ստուգման համար <<-ում չկա համապատասխան լաբորատորիա:	
2. << վերահսկիչ պալատի կողմից արձանագրված այն խախտումները, որոնք ձեռնարկված միջոցառումների արդյունքում վերացվել են կամ վերացման ընթացքում են			
10.	«Իջևան ՃՇՇ» ՓԲԸ-ում իրականացված ստուգմամբ արձանագրվել է խախտում, որից վերականգնման ենթակա աշխատանքներ՝ 95,952 հազ. դրամ և անորակ աշխատանքներ՝ 8,360 հազ. դրամ		<< վերահսկիչ պալատի կողմից շուրջ 438 պայմանագրերով (59.4 մլրդ դրամ արժեքով) 60 կազմակերպություններում կատարված ստուգումների արդյունքում՝ 2 կազմակերպությունում
11.	«Արարատ ճանշին» ՍՊԸ-ում իրականացված ստուգմամբ արձանագրվել է խախտում, որից վերականգնման ենթակա աշխատանքներ 80,900 հազ դրամ, անորակ աշխատանքներ 12,904 հազ. դրամ:		«Իջևան ՃՇՇ» ՓԲԸ-ում և «Արարատ ճանշին» ՍՊԸ-ում արձանագրվել են խախտումներ: << վերահսկիչ պալատի կողմից արձանագրված գումարների վերադարձման հարցը Կապալառուների հետ քննարկվել է և կապալառուների կողմից առաջարկվել է արձանագրված գումարների փոխհատուցումն իրականացնել այդ գումարին համարժեք շինարարական աշխատանքներով՝ << կառավարության կողմից հանձնարարված օբյեկտում: Այդ նպատակով << վերահսկիչ պալատի և կապալառուների միջև կազմվել է

<<	<< վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ	<< վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ բացատրություններ (<< վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշում)	Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման նպատակով ձեռնարկված քայլերի և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն
			համապատասխան ժամանակացույց:
3. << տրանսպորտի և կապի նախարարության կողմից բացահայտված խախտումները, որոնք ներառված չեն << վերահսկիչ պալատի տարեկան հաշվետվության մեջ			
1.	Նոր մետաղական խողովակների փոխարեն տեղադրվել են նախկինում օգտագործված՝ հավաստագրված խողովակներ:	Քանի որ պահեստավորված խողովակների գնի վերաբերյալ սահմանված նվազագույն կամ առավելագույն գին չկա, հետևաբար պատվիրատուի կողմից կապալառուից պահանջվել է ներկայացնել որակի հավաստագիր, որի համաձայն թույլատրվել է տեղադրումը, սակայն պայմանագրային գնից բավականին նվազեցված արժեքներով՝ համապատասխանաբար այդ չափով պակաս է վճարվել կապալառուին:	
2.	Որոշ դեպքերում ասֆալտապատման աշխատանքների վերին շերտի ցուցանիշները՝ հաստություն, ծակոտկենություն, հարթություն չեն համապատասխանել սահմանված նորմերին: Որոշ դեպքերում չեն պահպանվել վերին շերտի առավելագույն ցուցանիշները, սակայն աշխատանքներն իրականացվել են ցուցանիշների թույլատրելիության սահմաններում:	Մերժվել են աշխատանքները և կապալառուին չեն վճարվել անորակ աշխատանքների արժեքները: Ընդունվել են աշխատանքները, սակայն ցուցանիշներին համապատասխան կատարվել են աշխատանքների արժեքների նվազեցումներ և այդ չափով քիչ են վճարվել կապալառուները:	
4. Խախտումներ, որոնք չեն վերաբերվում << պետական բյուջեով նախատեսված միջոցների ծախսմանը, այլ առնչվում են մեթոդաբանական կամ նմանատիպ այլ խնդիրներին:			
1.	չունենալով որոշակի աշխատանքների համար լիազոր մարմնի կողմից հաստատված նախահաշվային միավոր արժեքներ, նախահաշիվներում հաճախ կիրառվել են ոչնչով չհիմնավորված, այդ աշխատանքների իրական արժեքները զգալիորեն գերազանցող արժեքներ, ինչը հանգեցրել է նախահաշվային արժեքների էական ավելացման	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչ օրս << լիազոր մարմնի կողմից չկան մշակված, տեղայնացված և հաստատված ճանապարհաշինարարական աշխատանքներում էական տեսակարար կշիռ ունեցող նոր տիպերի և ժամանակակից մեքենա-մեխանիզմների օգտագործմամբ իրականացվող մի շարք աշխատանքների նախահաշվային արժեքները, ինչպես նաև այդ արժեքների որոշման համար <<-ում չկա հստակ գործող նորմատիվներ, ապա՝ նոր տիպերի և ժամանակակից մեքենա-մեխանիզմների օգտագործմամբ իրականացվող մի շարք աշխատանքների նախահաշվային արժեքները որոշելու և կիրառելու համար նախագծային	2013 թվականի հունվարի 30-ին թիվ 01/14.2/1149-13 գրությամբ դիմել է << քաղաքաշինության նախարարին՝ ճանապարհաշինական նորմերը վերանայելու և հստակեցնելու առաջարկությամբ
2.	նախագծերում օգտագործվող նյութերի ծագումը չնշելու հետևանքով հաշվարկներում կիրառելով հնարավոր ամենաբարձր գները և նախատեսելով շինարարական նորմերով ու կանոններով		Նախագծային կազմակերպություններին կառաջարկվի նախագծերում նշել

<<	<< վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ	<< վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ բացատրություններ (<< վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշում)	Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման նպատակով ձեռնարկված քայլերի և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն
	չնախատեսված աշխատանքներ, էականորեն ավելացվել են նախահաշվային արժեքները	կազմակերպությունները առանձին դեպքերում ստիպված են եղել կողմնորոշվել նախկին ԽՍՀՄ-ում օգտագործված ՇՆուԿ-ում տրված միավոր արժեքների որոշման չափորոշիչներով կամ դիմել <<-ում նմանատիպ տեխնիկա ունեցող և շահագործող կազմակերպություններին, որպեսզի ներկայացնեն իրենց կողմից նոր տիպերի տեխնիկայի շահագործման ժամանակափուլի հաշվարկման արդյունքում ստացված արժեքները, իսկ առանձին դեպքերում ուղղակի կողմնորոշվել են << քաղաքաշինության նախարարության կողմից տրված տեղեկանքում նշված արժեքով	նյութերին ներկայացվող պահանջները
3.	նախագծվել և իրականացվել են Հայաստանի Հանրապետությունում գործով նորմատիվային ակտերով չնախատեսված աշխատանքներ, ինչի արդյունքում հնարավոր չի եղել իրականացնել այդ աշխատանքների նկատմամբ որակի վերահսկողություն		Նախագծային կազմակերպություններին կառաջարկվի նախագծային փաստաթղթերը կազմելիս առաջնորդվել <<-ում գործող նորմատիվային փաստաթղթերով, իսկ դրանց բացակայության դեպքում դիմել համապատասխան մարմիններին այլ նորմատիվներ կիրառելու հնարավորության համար:
4.	աշխատանքներն իրականացնելիս օգտագործվել են ԴՕՇՏ-ով նախատեսվածից ավելի ցածր մարկայի ասֆալտբետոնյա խառնուրդներ և անհայտ ծագման ու որակի բիտում	Հայաստանի Հանրապետություն բիտումը հիմնականում ներկրվում է արտերկրից և չի հանդիսանում պարտադիր սերտիֆիկացման ենթակա ապրանք: Ներմուծող կազմակերպությունները բիտումի ծագման հավաստագրերի պատճենները տրամադրում են կապալառուներին: Հանրապետությունում չկա որևէ լաբորատորիա, որը կկարողանա որոշել բիտումի քիմիական բաղադրությունը և ողջ որակական հատկանիշները:	Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ << տրանսպորտի և կապի նախարարությունը << կառավարություն կներկայացնի առաջարկություն բիտումի լաբորատորիա ձեռք բերելու վերաբերյալ
5.	ասֆալտբետոնե խառնուրդի պատրաստման ժամանակ, հաշվի չառնելով բնակլիմայական գոտիները և ճանապարհների տեխնիկական կարգերը, համատարած օգտագործվել է նույն կարգի բիտում		Նախագծային, տեխնիկական հսկողություն և շինարարական աշխատանքներ իրականացվող կազմակերպություններից կպահանջվի ապահովել համապատասխան մարկայի

<<	<< վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ	<< վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ բացատրություններ (ՀՀ վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշում)	Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման նպատակով ձեռնարկված քայլերի և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն
			բիտումի օգտագործումը՝ ելնելով ճանապարհների տեխնիկական կարգից:
6.	իրականացվել են աշխատանքներ առանց անհրաժեշտ լաբորատոր հետազոտությունների, կան նաև իրականացված լաբորատոր հետազոտություններ, որոնց արդյունքներն իրենց հերթին արժանահավատ չեն, բացի այդ աշխատանքներն ընդունելիս չեն իրականացվել նորմերով նախատեսված անհրաժեշտ բոլոր ստուգումները	Խախտման հետ կապված պարզաբանումներ են տվել համապատասխան կապալառու կազմակերպությունները: Պարզաբանումների համաձայն իրենց պատկանող ասֆալտբետոնի արտադրության գործարանի տարածքում առկա է պարտադիր պահանջ հանդիսացող լաբորատորիա, որի միջոցով ստուգվում է արտադրված ասֆալտբետոնե խառնուրդի որակը և բաղադրությունը: Ասֆալտբետոնի սկզբնական արտադրանքի համար հիմք է ծառայել նմանատիպ աշխատանքների համար ընկերությունում գոյություն ունեցող ասֆալտբետոնի խառնուրդի ընտրության արդյունքները, որովհետև 2012թ. ընթացքում քարային նյութերի հանքավայրի փոփոխություն տեղի չի ունեցել: Ասֆալտբետոնի տեղադրման ընթացքում համապատասխան չափաբաժնից վերցվել է փորձանմուշ, բայց անկախ լաբորատորիա ուղարկվել է ուշացումով: Քանի որ շինարարական աշխատանքների կատարողական ակտը ներկայացվել է ավելի ուշ, ուստի սկզբնական շրջանում կապալառուն պատվիրատուին լաբորատոր փորձարկման արդյունքներ չի ներկայացրել: Կատարողական ակտի հետ միասին կապալառուն ներկայացրել է բոլոր լաբորատոր փորձարկման արդյունքները:	Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների կառաջարկվի ավելի մեծ ուշադրություն դարձնել կատարվող լաբորատոր հետազոտություններին
7.	Ճանապարհների պահպանման մակարդակները փոփոխել են գործող ստանդարտներին ոչ համապատասխան:	Անհրաժեշտ է ՀՀ կառավարության 2010թվականի նոյեմբերի 4-ի N1419-Ն որոշմամբ հաստատված “Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և կատարված աշխատանքների ընդունման” կարգում կատարել փոփոխություններ:	Փոփոխությունների նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն և ներկայումս ՀՀ վարչապետի հանձնարարությամբ գտնվում է քննարկման ընթացքում: